




ԲԱԳԻՆ ԺԴ. ՏԱՐԻ-1975 ՅՈՒՆԱՐ ԹԻԻ 1
digitised by A.R.A.R.©

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



* * *	Հացի եւ լոյսի պէս անհրաժեշտ
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Այսօր մի մարդ սպանեցին այգում
ՈՒՆՍԻ ԷԼ-ՀԱՃ	Անճառաբույս
»	Հետեւեցէ՛ք նետին
»	Օրերն ու հսկաները (հայացուց՝ Ս. Կիրակոսեան)
Ն. ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Խաւարը
»	Կէտը
Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Մարգարէն
Յ. ՕՇԱԿԱՆ	Մաթիկ Մելիքխանեան
* * *	Անհետացող բանաստեղծներ
* * *	Տպագրական դաւեր
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Բարոյագիտական շեշտը փիլիսոփա- յութեան մէջ
Ն. ԶԱՐԵՈՒՏԵԱՆ	Ֆրանսական ժամանակակից բանաս- տեղծութիւնը
Ա. ՏՕՆՈՅԵԱՆ	Բարութեան ասպետ հայ գրագէտը՝ Ուիլիքմ Սարոյեան
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Փարսեանովի եամար
Լ. ԼԱՊԷՑ	Գրողներու ճակատագիրը յեղափո- խական շարժումներու ընթացքին (հայացուց՝ Ք. Շինապաշեան)
Պ. Ս.	Խորագիրը մկարով
Բ. Փ.	Տ. Վարժապետեանի «Յայտադրիւր- ները անապատներու մէջ» հատորը
Պ. Ս.	Նահապետ Քուչակէն կատարած Վահէ Կատէլի քարգմանութիւնը
* * *	Մ. Իշխանի յարեղմական հանդիսութիւնը

Կողքի ճկար՝ ՅՈՎԱՆՆԷՍ ԱՍՏՐԵԱՆԻ

Բազին

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ՃԴՆ. ՅԱՐԻ, ԲԻՒ 1

ՅՈՒՆՈՒԱՐ 1975

ԳԼՅՐԱԴԻՐ

ՀԱՅԻ ԵՒ ՕԴԻ ՊԷՍ ԱՆՀՐԱԺԵԾՏ...

Այս տարին էլ քաղիք նստե,
Մտաք մի մոր սպիշքըսմ:
ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐԵԱՆ

«Բազին» տարանց իր 13րդ տարին եւ ներկայ թիւով կը մտնէ զժի նոր ստեղծմանը:
Գրական աւանդի մը համար պատկ չէ կարուած նախնի, մանաւանդ Սփիւռքի մէջ եւ ի մասնաւորի այս տասնամեակներուն, երբ ուրիշ ժողովուրդներու կողմէն նստե մեր ժողովուրդը սկսաւ կամայ թէ ակամայ իր տուրքը տալ մամանակի ընթացիկ պա-
հանքներուն, գրողներուն, վարչականներուն, մտաւարական իր տեսնող ընթերցողներէ ա-
ւելի վստահելով արագութեան մեր գործը յատկանշող «իջողներուն» շարժապատկերին,
մայնափիւրին, պատկերասփիւրին եւ արթնթափին թեթեւ հաղորդումներուն:

Այս պատճառները իրարու վրայ դրամարուելով մեծապէս հարուանցին մեր, ինչ-
պէս նաեւ օտարներու պարբերական մամուլին անդամները, պատճառ դառնալով շա-
տերուն անհետացման:

«Բազին» սկսաւ եւ անարգել շարունակեց իր նախնի եւ, հակառակ անպատառ դա-
մաններուն, կազմուած գրողներու նստացող շարքին ու հասունացող ներքուն սակաւա-
թեան, համարձակութիւնը ունի ընթերցողին ըսելու, որ պիտի շարունակէ իր ծառայու-
թիւնը նոյն անհանգստութեամբ, եռանդով, կիրքով, իրեն միթաւարութիւն հախորդ սե-
րունդներուն, եւ իրեն հրաւերձ նոր բողոքներուն:


Պատկէ հաշի մը քրինք եւ անուանք, որ անցնող տարուան ընթացքին յիսունէ աւելի
գրողներ երկու հարիւրէ աւելի անգամ գրիչ շարժած են այս հանդէսին մէջ, ստեղծագոր-
ծական ու մտաւարական աւազին աննշ ու լոյս կուտակելով անոր էջերուն: Ասիկա կը ճը-
շանակէ, որ գրականութիւնը դեռ կը շարունակուի հայի եւ օդի շափ անհրաժեշտ համար-
ւել մեր մէջ, միայն բանաստեղծութիւն հրատարակելու արկածախնդրութեամբ նախնի
կամ 22ամեայ փան-Հիւրի Մալիւնի մասին զէջ Մոնտալի մէջ կատարած Անտրէ Լօրի սա
հաստատումին պէս:

«Բազին» տաքմալը, բաժնետիրութիւն կարգադրութիւն այժմու սակաւութիւնը
նի մութ ու մտաւարական պատճառող նշաններ երբեք մտածագութիւն չգործածեալ տնոր,
որ ինքզինքն կը մնտ բանաստեղծական հրատարակութիւն մը երկնելու փառաւոր ու կո-
րեւորներ արկածախնդրութեան մը մէջ, արկածախնդրութիւն մը, որ անհրաժեշտ է այն-
քան, որքան հայր եւ օդը:

Գրականութիւնը հայի եւ օդի շափ անհրաժեշտ համարող մասնունէ մը մարմին ա-
ռած այս հանդէսը աւանտարիկ կը մտնէ նոր շրջան մը, հաւատարիմ՝ գրականութիւնը հա-
ցի եւ օդի շափ անհրաժեշտ համարելու արժանաւորութիւնը իր կոչումին:

2024/

163-2000



digitized by A.R. 2024-04

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Ց

ԱՅՍՈՐ ՄԻ ՄԱՐԴ ՍՊԱՆՆԵՑԻՆ ԱՅԳՈՒՄ

Երէկ ինքը տկանատես եղաւ: Ո՛չ, մասնակցեց, թէեւ չէր ուզում մասնակցութիւն ունենալ սպանութեանը: Իր դրասենեակէնց ուղղակի հեռախօսեց Ախլային, ճանապարհին մի փունջ մարգարտածաղիկներ գնեց: Ախլան ասում է, թէ մարգարտածաղիկները խունկի բոյր ունեն: Ձէր կարող երկար մնալ Ախլայի բնակարանում, նախ՝ որովհետեւ պարուհին բեմ պիտի բարձրանար այդ դիմեր, ապա՝ իր կինը պիտի կասկածէր: Թող կասկածէր: Արդէն նրա կասկածը սովորութիւն դարձել, իսկ սովորութիւնը դարձել է ձանձրալի թէ՛ նրա, թէ՛ իր համար: Երբ մեկնեց Ախլայի բնակարանէն, դրասում, համակառոյցի բակում երեկոյ էր, մէկը այն երեկոններէն, որ չգիտես, արդեօք դարձնամո՞ւտ է, թէ աշնանամուտ: Դէպի պողոտան նայող բացատից լոյս էր ընկել ծառերի դեղնաբոսոր տերեւների վրայ: Յետոյ լրսւեց կանացի ճիւղ: Այո՛, մէկը սարսափելի ճշում էր: Նախ թուաց, թէ մահուան ճիւղ է: Բայց երբ բակի անցորդները խուճապահար պատերի տակ քաշւեցին, հրապարակում, եռանկիւնաձեւ փոքրիկ մարգագետնի վրայ երեւաց մի կնոջ կերպարանք, սպիտակազդեստ, երեսն ի վար փռուած կանաչի վերայ: Կնոջ ծոծրակից արիւն էր հոսում: Կինը, ըսաւ երեւոյթին երիտասարդ, ոտքի բարձրացաւ, օդնութիւն աղաղակեց եւ հազիւ մի քանի քայլ արած՝ կրկին առաջալուեց զանազի հարուածից: Նրան հետապնդող բարձրահասակ մարդը սպանալից բանիւր առաց, այս անգամ կանգնելով իր դոհի գլխի առջեւ: Կինը ահաբեկի տնքոցներ արձակեց՝ ու՛ր ձեռքով խոտը ճանկելով: Կինը կառչեց մարդու ոտքին: Մարդը ձեռքադատեց ոտքը եւ ամբողջ ծանրութեամբ կսիւնց նրա ձեռքի վրայ: Կինը, յանկարծ, արձակուած զսպանակի նման սկսեց դալարուել, ապա շորեքթաթ շարժուել ներկաների ուղղութեամբ: Ահա կրկին ոտքի կանգնեց կինը՝ գէժքը արիւնաթաթախ: Մարդը կտրեց նրա ճամբան եւ դանակի մի քանի հարուածներ իջեցրեց, այս անգամ նրա կրծքին ու գէժքին: Երբ կինը պարկի պէս ընկաւ սալայատակին, մարդը գլխարկը վերցրեց խոտի վրայից, հանդարտ քայլերով կտրեց բակը, անցաւ պողոտայ, մտաւ սրճադոյն մի ինքնաշարժ ու հեռացաւ:

Նա յստակ յիշում է, որ ամբողջ պատահարի ընթացքում ոչ մի ճիգ չարեց միջամտելու: Ո՛չ միայն ճիգ չարեց, այլեւ բնաւ չմտածեց օգնութեան փութալու: Նա տակաւին զգում էր իր քիմքի վրայ Ախլայի մատուցած խնամքի հաճելի տաքութիւնը: Կանգնել էր կրաղիւսէ օսնդխամատի վերին աստիճանի վրայ եւ ձեռքերը վերարկուի գրպանները խոթած դիտում սպանութեան տեսարանը, որը իրական լինելով հանդերձ, չարժանկարի արաւընթաց պատկերի տպաւորութիւն էր թողնում: Գիտէր, որ սպանութիւն

է տեղի ունենում, ոսկայն իր եւ շրջապատի միջեւ որեւէ յարակցութիւն չէր տեսնում: Այդ պահին թերեւս Արդան լողանք էր ընդունում: Նա ասում է, թէ պարսկին ելոյթից առաջ լողանքը նպաստում է իր արուեստին: Սակայն ինքը մենակ չէր: Ամփիթատրոն յինչը կարծես: Տեսարանը դիտում էին ամէն կողմից: Մարդիկ կիսով կախուէլ էին շինութիւնների բազմաթիւ լուսամուտներից: Ոմանք վերջալոյսից խուսափելու համար ափով պատնէշէլ էին լոյսը: Վարում Հոովմէական կրկէս էր: Հանդիսականները պատերին կառչած քարացել էին: Կինը մի քանի անգամ հայեացքով օղնութիւն ողորոսեց: Մի անգամ կնոջ հայեացքը դաժուեց իր հայեացքին: Ուղեց հեռանալ: Մարդասպանի մեկնումից յետոյ այս ու այն կողմից ներկաները շրջապատեցին կնոջ դիակը՝ մի քանի քայլ հեռաւորութեան վրայ: Նա նոյնիսկ չհետաքրքրուեց կնոջ դիակով: Իր եւ դիակի միջեւ ոչ մի առնչութիւն չկար: Եթէ այդ կնոջ փոխարէն իր կինը լինէր կամ թէ Արդան, ինչպէ՞ս պիտի մերարերուէր: Այդ գաղափարը մէկդի հրեց, հանդարտ իջաւ աստիճաններից, տուն մեկնեց:

Ճանապարհին իր ներքին ամայութիւնը ծաւալուեց: Դիտէր, որ մաղուց իր մէջ մի բան խախտել է, սակայն այժմ զգաց նաեւ իր խորթացումը արտաքին աշխարհի հետ, իրերի, առարկաների, նոյնիսկ իր ընտանիքի հետ: Ինքնաշարժի պատուհանից քաղաքն ու փողոցները իրեն ոչինչ չէին ասում: Իրականում ինքը չէր պատկանում: Իրականում ոչ ոք չէր պատկանում, զոնէ ինքը համոզուած էր, որ ոչ ոք չի պատկանում: Այժմ մեռնող կնոջ հայեացքը եկել էր վրդովելու իր լնացած հանդիսը: Այնքան վրդովմունք չէր, որքան անհանգստութիւն: Սակայն ո՞վ է կացութեան տէրը: Այս քաղաքում ոչ ոք կացութեան տէրը չէ: Գուցէ միայն ես չեմ: Գուցէ միայն այս քաղաքը չէ: Գուցէ ամբողջ աշխարհն է տարուբերում անտարբերութեան թմբիկի մէջ: Շարժուն բոյս եմ ես, եւ դարձուբելին այն է, որ ոչինչ չի պատահում: Արդայից առաջ կային ուրիշները, սակայն ինքը ո՛չ ստանում էր, ոչ տալիս: Արդայի հետ իր մտերմութիւնը պերճանքի խնդիր է, այնպէս՝ ինչպէս ոմանք աղոթանդէ մատանի են կրում իրենց մատներին: Ձէ՞ որ ինքը քիմիարդիւնարերութեան խոշորագոյն ընկերութեան փոխնախագահն է, իսկ այդ պաշտօնը պահանջում է զարդ ու պերճանք եւ ինչպէս ասում են՝ զբարձր գիմագիծ: Սակայն այդ բոլորը կեղծիք են: Ձանձրոյթն է իր անգոյնն ու անյոյզ արկածախնդրութիւնների դրդապատճառը, այնպէս իր կնոջ հետ իր սեռային յարաբերութիւնները առողջ վիճակի մէջ են, թերեւս միակ յարաբերութիւնը, որ տակաւին առկայ է իրենց միջեւ: Մարդը կտրեց կնոջ ճամբան եւ դանակի մի քանի հարուածներ իջեցրեց այս անգամ նրա կրծքին ու դէմքին: Կնոջ ծնկերը ծալուեցին, բերանից արիւն յորդեց եւ պարկէ պէս բնկաւ սալալատակին: Յոյզի այլք անցաւ հանդիսականների միջով: Կարծես բոլորն էլ սպասում էին վերջին հարուածին: Կարծես ուզում էին, որ մի բան պատահէր: Ինչո՞ւ թաքցնել: Այդ նոյն ըսպասողական զգացումը համակեց նաեւ իրեն: Վերջապէս մի բան է կատարւում: Կնոջ մարմինը մի քանի անգամ ցնցուեց, սպաւ անշարժացաւ: Մարդասպանը դանակը փաթաթեց թաշկինակի մէջ, ծոցի գրպանը դրաւ, խոտի վրայից գլխարկը վերցրեց, հանդարտ քայլերով կտրեց բակը, անցաւ պողոտայ, մտաւ սրճաղոյնի մի ինքնաշարժ ու հեռացաւ:

Ինքնաշարժը կանգնեցրեց իր տան կից սպիտակ կառատանը: Աշունը խուժել էր պարտէզի վրայ: Այդպանը հսկայ մկրատով խուզում էր ցանկապատի մշտադալար թուփերը: Միջոցը յագեցած էր թօշած տերեւների բոյրով: Մեքենաբար քայլեց խճուղիով դէպի տան դարպասը: Դրան չեմին

մի պահ վարանհեց: Անծանօթ էր իր տան առջև: Նրան թուաց, թէ առաջին անգամ էր ոտք դնում այդ տան սեմին: Նոյնն էր պատահում նաեւ քաղաքում, փողոցներում, իր պորձատեղու բնգարձակ դրասնեակներում: Քայլում էր դահլիճներում եւ դարձանում, թէ ի՞նչ գործ ունի այդ դահլիճներում: Ինքը որեւէ դեր չունի: Լինէր թէ չլինէր, հասարակական մեքենան իր վիթխարի, աներեւոյթ, բազում ատամներով կտրում, դատաւորում, տեսակաւորում, համարակալում էր բոլորի կեանքը: Ինքը լուկ գոյատեւում է: Եթէ ընկրկէր, ապա ըստ կանխորոշուած ծրագրի, մի այլ մէկը կ'անցնէր իր պաշտօնին, այնպիսի դիւրութեամբ, որ կարծէք ինքը բնաւ չի եղել: Ինքն էլ չի մտաւ ինչու, թեքուեց, ձեռքը թաթախեց հողում եւ հողակալած ափը դրոշմեց բարձրաբերձ ճերմակ պատին:

Ընթրիքի ժամանակ նա աւելի մենակ դրաց իրեն, թէ եւ ուշադրութեամբ հետեւում էր խօսակցութեան եւ իր կնոջ ու զաւակների հարցումներին: Իր կինը տակաւին թարմ էր կենդանական թարմութեամբ: Այն կուսանցից է, որոնք յափշտակում են կեանքից ինչ որ հնարաւոր է: Այդպիսիները այդպէս էլ ծնւում են: Զաւակների հետ հաղորդակցութիւնը վաղուց կտրուել էր: Որդին՝ միջնակարգի վերջին դասարանի ուսանող, ընկել էր իր ուրոյն համայնքի մէջ՝ խզելով իր բոլոր կապերը հասարակարգի հետ: Դասերը՝ տասնըհինգ, տասներեք ու տասը տարեկան, տասանում էին քաղքենի բարիքների ու անորոշ ապստամբութեան հրապոյրների միջեւ: Իրենց աշխարհն է, իրենց դարը, եւ պահանջում էին: Իսկ իրենք այլեւս տալիք չունէին: Որովհետեւ այլեւս յենակ չէր մնացել: Ապրում էին որպէս կենսորոնախոյս կղզեակներ: Տունը լուկ բնակարան էր, ընտանիք չէր: Եկել քանդել էին երբեմնի կուռ հանգանակները: Բացուել էր յղկուած, անհաղորդ, մետաղակերտ խորխորատը: Օրերը յաջորդում էին իրար: Միապաղաղ օրերը դարձան էին միմեանց վրայ: Եւ ոչինչ չէր փոխում: Հաստատութիւնը որոշում էր ամէն ինչ: Հասարակայնական բախումների բացակայութիւնից համատարած ազատութիւնը անկիրք էր, անգոյն, անարկած: Վաղը ի՞նչ պիտի անեմ: Եթէ ոչինչ չի պատահում, ապա կարող է ամէն ինչ պատահել: Պատահական մէկը կարող է յանկարծ թշնամի դառնալ: Պէտք է պատրաստուել օրհասականի համար: Սակայն ի՞նչ է իր փրկութեամբ:

- Հայրիկ, ի՞նչ է պատահել:
- Ինչպէ՞ս թէ ինչ է պատահել:
- Դու եւ մայրիկը չէք սիրում միմեանց:
- Այդ ինչ տարօրինակ հարցում:
- Մենք գիտենք:
- Դուք ի՞նչ գիտէք:
- Որ դուք ասում էք իրար:
- Ասում:
- Ինչո՞ւ չէք բաժանւում:
- Անհեթեթութիւն:
- Բաժանումով դոնէ փոփոխութիւն կը մտնի մեր կեանքում:
- Այդ ինչ արտասովոր գաղափար:
- Դուք երբեք չէք համբուրում:
- Բայց մի՞թէ...
- Մենք գիտենք, որ դուք զժբախտ էք:

Սուբից յետոյ մի գլանիկ վառեց: Գիտէր, որ կեղծում է: Այդ խօսակցութիւնը բազմիցս կրկնուել էր տարբեր առիթներով, այլ տարբերակ-

Ներքոյ, երբեմն անխօս, մերթ որպէս նախածրօնների փոխանակում, իսկ յաճախ որպէս հաղորդակցութեան համար բացակայութիւն: Մի պահ դիտեց իր կնոջ ու զաւակներէ ինքնամփոփ շարժումները, նրանց մարմիններէ իւրայատուկ կշռոյթը, եւ ատանմանացու գրադարանում: Ձարմացաւ, թէ ինչ է պատահել իր կեանքին: Ինչո՞ւ է այստեղ: Ո՞վ է այս կինը: Ովքե՞ր են իր զաւակները: Ի՞նչ գործ ունի հասարակութեան մէջ, երբ հասարակութիւնը որեւէ գործ չունի իր հետ: Կա՞յ հասարակայնութիւն, թէ ամէն ոք ակամայ իր ուղեծիրին յանձնուած խորխորում է առօրեայի խաշմերուկում՝ անդիտակ, դռն ու անդգայ: Ո՞վ էր զոհ: Ո՞վ էր մարդասպանը: Ինչո՞ւ օգնութեան չփութաց: Ձի յիշում անզամ նրանց դէմքը: Կարծես անդէմք ու անանուն դերակատարներ լինէին, որոնք ինչ-որ անյայտ բեմադրիչի հրահանգով հանդէս եկան մի պահ փտրատելու քաղաքի համատարած ձանձրոյթը: Լրագիրը յատակին նետեց, բարձրացաւ, գրասեղանի դարակից հանեց ատրճանակը, դնեց զէնքի սառնութիւնը: Սպաննել բոլորին եւ փակել հաշիւը: Ձէնքի ողորկ ձեւերը հեշտանք առաջացրին նրա մէջ: Շոյեց ատրճանակի բլթակը: Սակայն սպաննելու համար կիրք է պէտք, ատելութիւն ու նպատակ, իսկ ինքը զուրկ է այդ երեքից: Յանուն ինչի՞: Կացութիւնը կը մնայ նոյնը: Ուշինչ չի փոխուի: Բայց գոնէ մի բան արած կը լինի: Նոյն հանդարտութեամբ զէնքը տեղաւորեց դարակում: Նրա ստուերը կոթողական տարածք էր ստացել դիմացի պատի վրայ: Կար ժամանակ, անթափանցելի անցեալում, երբ աշխարհներ պիտի նուաճէր: Այն օրերին իր ստեղծած անուր կառուած էին հողին, իսկ գլուխը ամպերին էր հասնում: Կար օրէնք ու աւանդութիւն, չարի ու բարիի դիտակցութիւն: Ամէն մի օրը մի վտնմարկածախնդրութիւն էր, ապրումի ու ձգտումի մի անփերլանալի տօնահանդէս: Այն օրերին քաղաքը բնտանիք էր, փողոցները վաղեմի բարեկամներ, ընտանիքը ամուր կոտան, իսկ կեանքը մի անյազուրդ մարտահրաւէր: Երջանիկ չէր, բայց երջանկութեան հեռանկար ունէր: Անթերի չէր, բայց թերութիւնները մարդկային էին: Կար հացի պակաս, սիրոյ պակաս: Կար արդարութեան պակաս: Սակայն դոնէ կար պատկանելիութեան զգացումը, որը տանելի էր դարձնում կեանքը: Ուղեղ-չուզէր ինքը հասարակութեան մի մասնիկն էր: Եթէ հտտարակութիւնը հիւանդ էր, ապա հնարաւորութիւն ունէր պայքարելու եւ յեղաշրջելու հասարակութիւնը: Այն օրերին թէ՛ կիրք ունէր, թէ՛ հաւատք եւ թէ նպատակ: Յետոյ, յանկարծ, մի բան պատահեց, մի բան խախտուեց, ամէն ինչ խախտուեց, չէր յիշում ինչ, բայց տակնուվրայ եղաւ աշխարհը, ամենէն դիմելու եկաւ ու քանդեց անցեալը, օրերը խորանարդների վերածուեցին եւ խորանարդների մէջ բանտարկուեցին մարդիկ: Գուցէ մեքենան էր ու մեքենայացումը, գուցէ միմեանց յաջորդող պատերազմներն էին, գուցէ նոր հասարակարդի անմարդկայնացումն էր, գուցէ նաեւ աշխարհի բնակչութեան գերաճն էր ու գերհաստատութիւնների տիրապետութիւնը: Գուցէ եւ այդ բոլորը չէր, այլ իր առաջին սիրոյ մահը: Զգիտէր, չգիտէր, չգիտէր: Գուցէ այդ բոլորից եւ ո՛չ մէկը չէր: Գուցէ ինքն էր:

Նա տառապում էր չգիտենալով, թէ ինչի համար եւ ինչու է տառապում:

Սպինոզան մի կողմ դրեց: Գրքերը այլեւս իրեն ասելիք չունէին: Գրքերը գրուել են այլ դարաշրջանների համար: Հիմա գիտութիւնը վերլուծում է մեր փորձառութիւնները, համադրում փաստերը եւ չօչափելի եզրակացութիւնների յանգում: Եւ որչափ մասնաբաժանում են տուեալները, այնքան նրանք հեռանում են կեանքից, մեր իրական փորձառութիւն-

ներից՝ ստեղծելով պարապը։ Այդ պարապն է, որ նրան խելագարույն է պատճառում։ Նա գգում էր այդ պարապը եւ ապրում այդ պարապով, որովհետեւ այլ բան չկար, չէր մնացել։

Խմբիքի բաժակը կիսատ թողեց, մի հայեացք նետեց ստացուած նամակների գէղի վրայ, անցաւ հիւրասենեակ, ուր իր դստերք իրենց դասընկերների հետ երաժշտութիւն էին ունենդրում։ Ոչ ոք նկատեց նրան։ Անցաւ սրդու առանձնասենեակը, որը արդիական Բաբելոն էր։ Որդին բացակայ էր։ Ուզում էր խօսել որդու հետ։ Գուցէ նա գիտէ։ Ուզում էր մի կերպ լեցնել պարապը։ Բարձրացաւ երկրորդ յարկ եւ ծիսական հանդիսաւորութեամբ ստուգեց իր զատակների սենեակները, թերեւ նրանց պարունակութեան միջոցով հասկանալու ու մօտենալու նրանց։ Անծանօթ սենեակներ էին։ Իր տան մէջ ինքը օտար էր։ Նրան թուաց, թէ այցելու է։ Իջաւ հանդուսաւորական։ Կիներ ու շուներ միասին պատկերասփիւռի ծրագիր էին դրամում։ Լուսադառնառի վրայ Արդան կարապի մահն էր պարում։

— Բարեկամուհիդ սքանչելի է պարում։ Արդեօք նոյնքան սքանչելի է անկողնու մէջ։

— Գիտե՞ս ու բան չես ասում։

— Ի՞նչ տարբերութիւն։

— Այն որ գիտե՞ս ու չգիտնալ եւ ձեւացնում։

— Սակայն ես երբեք չեմ անձնական դործերին չեմ խոսնում։ Դու չես կեանքն եւ ապրում, ես՝ իմ։

— Ինչպէ՞ս հասկանալ։

— Այն՝ որ ես էլ ունեմ իմ գրսի հետաքրքրութիւնները, որոնք բացարձակապէս անձնական են։

— Որքանո՞վ անձնական։

— Այնքանով, որքան չեմ յարաբերութիւններն են անձնական՝ պարունակու կամ որեւէ այլ կեանք հետ։

— Դու ինձ մի բան եւ ուզում ասել։ Ծի՞շդ է գուշակութիւնս։

— Ինչո՞ւ այս դերասանութիւնը։ Վրէժի զորութեան հարց չէ, այլ լուկ սիրուելու պահանջ։

— Նոյն ձանձրոյթը, նոյն ձանձրոյթը։ Ես արդէն գիտէի։

— Ուրեմն, վաւերացնում ես։

— Վաւերացնել՝ ոչ, սակայն հասկանում եմ։

— Ես վստահ էի, որ դու կը հասկանաս։

Բոլորը կարծում են, թէ նա երջանիկ է։ Բոլորը կարծում են, որ ես երջանիկ եմ։ Տուն, տեղ, ապարանք, ղեղեցիկ կին ու առողջ զաւակներ, գիրք, գրամ ու պաշտօն։ Սակայն հենց դրանք են իր դժբախտութեան պատճառները, որովհետեւ որեւէ յարակցութիւն չունեն իր հետ՝ իր կեանքի իրականութեան հետ։ Ինքն ապրում է այլոց իրականութիւնը, իսկ այլոց իրականութիւնը որեւէ յարաբերութիւն չունի իր իրականութեան հետ, որովհետեւ իր որսնածը հոգեկան, աննիւթական խորիւսն է՝ անհատ լիւնելու հրամայական պահանջը, ուստի եւ կործանումի մշտադաւանդաւանջը։ Եթէ սարսափ ու նողկանք զղացած լինէր ի տես անծանօթ կեանքի ըստպանութեան, ապա փրկուած կը լինէր։ Սակայն ցլամարտի պնացած օտարականի պէս կանգնեց ոտնոյտամառի աստիճանի վրայ եւ անտարբերութեամբ գիտեց արիւննալի արարը։ Եւ պլուրիքուս ունում։ Եթէ հանդիսականներէց ոեւէ մէկը փորձած լինէր օգնութեան հասնել կեանք, նորից յոյսի դուռ կը բացուէր իր համար։ Սակայն իր պէս ամբողջ համայնքն է հիւսանդ։ Վաղը ամէն ինչ կը մոռացուի եւ ամբողջ կը հաւաքուի մի այլ գոհի

զլիկին։ Եւ այսպէս շարունակ, մինչեւ որ այլեւս մարդ չի մնայ աշխարհում։ Այդ միտքը անհանգստութիւն պատճառեց նրան, ո՛չ թէ որովհետեւ մարդկութեան օրհապան մտահոգեց նրան, այլ որովհետեւ զոյաց, որ ընկել է մտածումի մինչ այդ իրեն խորթ ուրոտները։ Չարմացու։ Յայտնագործումը ցնցեց նրան։ Իր կեանքի կազապարից ակամայ դուրս էր ընկել եւ սարսափում էր։ Հասարակարգը ամէն բան մոտակարարել էր։ Իսկ այժմ մտածումի այս ազատութիւնը խեղդում էր նրան։ Ուղեց ներս մտնել կազապարի մէջ, կորիզանալ։ Փակել աչքերը եւ դուրսել հարկադրուած պայմանականութիւնների պերճ դահլիճներում՝ տեղէնք ու տնայրոյն։ Կրկին մտաւ տնակալ։ Ձմանաչեց իրեն։ Եթէ ես այն միւսն եմ, հապա ո՞՞մ եմ ես, իսկ եթէ այն միւսը չի եղել, հապա ո՞՞մ եմ ես։ Իզուր փորձեց յիշել տազանայր, ճակատագրական այն կէտը, որից այս կողմ կեանքը եղել է անդոյն յաջողութիւնների մի շարուն։ Եւ առաջին անգամը լինելով ատեց իրեն, իր շրջապատը, իր յաջողութիւնն ու իր կեանքը։

Անդամ չբացել էր։ Պարապի լինելն յաջողեց էր միասնականութեան շատուղիների հարցադրոյցը։ Պատկերասփիւռի ընդունիչն այժմ ցուցադրում էր կենցաղային մի նիւթ, որի ընթացքում մինչ այժմ ութ հոգի սպաննուել եւ դեռ նորանոր սպանութիւնների ակնկալուող շարունակութիւն կար քառակուսի տուփի մէջ։ Տասնութ տարուայ ամուսնութիւնից յետոյ դեռ չէին վարժուել միմեանց։ Լրագրի էջերը տրագ դարձնում էր՝ աչքի տակով մերթ ընդ մերթ նայելով կնոջը։ Ինչպէ՞ս կարելի է ապրել մէկի հետ չմանալով նրան։ Ինչո՞ւ չեն փորձել ծոտենալ։ Ինչո՞ւ չեն փորձել պնդել միմեանց ներաշխարհը։ Սպասուհին սուրճ մատուցեց։ Նոր նկատեց, որ իր կնոջ քիթը յունական է։ Լրագիրը մխթարական ոչ մի լուր չունէր։ Տագնապ այստեղ, տապալապ այնտեղ։ Որդին ոտաբորիկ մի ազնկայ ձեռքն առած տուն եկաւ եւ ուղղակի իր սենեակը մտաւ։ Գէթ ծանօթ լինէր խոսակցութեան արուեստին։ Մի բան ասէր, թէկուզ որչափ էլ անկարեւոր։ Արդեօք ուշ չէ՞՞ այլեւս։ Արդեօք հեարաւո՞ր է ակսել նորից եւ կամրջի տնցեայի պարապը։ Այնպէս ձեւանալ, թէ նոր են հանդիպում։ Պատկերասփիւռային լուսապատուոյ միջից մէկը դնակ էր պարպում իր վրայ։ Ինքը չէր միտքէտ, բայց ինչպէ՞ս եղաւ, որ վարչական պաշտօնեայ դարձաւ, երբ ոչինչ գիտէ վարչական գործերի մասին։ Ընկերութիւնը ի դուր դրամ է վստահում, երբ այդ գործը կարող էր ազուլի մէկը կատարել։ Ինքը լուր դարդ է, այո՛, զարդ ու կենդանի պոփաղ։ Դու ոչ մի անելիք չունես։ Պարապ նստիր ու դրամ կուտակիր, միայն թէ՛ պահպանիր արժանաւայել արտաքինը ու կեցուածքը։ Ստիպեց ո՛ւր մնաց իր արժանապատուութիւնը, երբ այդ արժանապատուութիւնը օրն է բուն կազմանում է վիրաւոր շան պէս։ Կինը ընկղմուել էր քաղկաթոտի մէջ՝ հուանի թեւերը թիկունքին տարածած։ Եթէ այսօր պատահամբ հանդիպած լինէր իր կնոջը, հաւանաբար հետաքրքրուէր նրա իզութեամբ։ Սակայն հիմա նրանք տարբեր թեւեռներ են։ Ուսանողական տարիներին անյադ էր։ Անկէտում սիրում էր կանանց։ Կին տեսնելիս շնչահեղձ էր լինում։ Ամբողջ օրը կին էր երազում։ Հանդիպած կնոջը մտովին անմիջապէս մերկացնում էր։ Կինը կեանք էր, սիրոյ աղբիւր ու հեշտանքի ծով։ Այլ ու ձախ յարաբերում էր, քանդում նրանց մահրը՝ տեւականացնելու համար խորոյկը։ Ուզում էր ամէն մի կնոջից հայրանալ։ Ուզում էր պատկանել։ Ուզում էր իր դրոշմը թողնել աշխարհի վրայ։ Ու յանկարծ, մի տեղ, մի բան խորիւնց։ Կուշ եկաւ ինքն իր մէջ, փոքրացաւ, դարձաւ մարդուկ, կորցնելով նոյնիսկ աւերելու, քանդելու համարձակութիւնը։

- Մտածում եմ գործս թողնել։
- Ինչո՞ւ։
- Ձանձրացել եմ։
- Ի՞նչ պիտի անես։
- Նոր գործ պիտի փնտռեմ։
- Ի՞նչ գործ։
- Ձդիտեմ։ Գուցէ քիմիապիտութեան ասպարէզում։
- Բայց դու արդէն այդ ասպարէզում ես աշխատում։
- Ուզում եմ վերագտնալ գիտահետազոտութեան։
- Բայց չե՞ս տարիների վաստա՞կը, դի՞րքը, եկամե՞ղաւը։
- Ես վաստակ չունեմ։ Ուզում եմ սկսել սկզբից։
- Իսկ ընկերութի՞ւնը։ Ընկերութիւնը ի՞նչ կ'առի։
- Ընկերութիւնը թող դժուար գնայ։ Վաղուանից ես ինձ մէկ ամիս արձակուրդ պիտի առնեմ եւ ամէն օր պիտի գնամ այդուստ գրասենյուս։
- Դու խենթացե՞լ ես։
- Ո՛ր։ Փորձում եմ խենթութիւնից դուրս գալ։
- Քեզ բնու չեմ հասկանում։

Գիշերը կիսուել էր։ Երէկուայ կէսը շարունակում էր այսօր։ Ինչպէս ամէն ինչ ջերմանոցային է արուարձանում, այնպէս էլ գիշերը արհեստական էր թւում, կարծես մուգ վարագոյրներ էին կախել ծառերից։ Վերջապէս տան բազմապիսի էլեքտրական հանգոյցները փակուել էին եւ բնականաբար ուզում էր իր ուրոյն կեանքն ապրել, վերագտնալ իր համր ու կարծր լինելութեան։ Նա նորից մի դլանիկ վառեց ու փորձեց կենտրոնանայ։ Խռատում էր ցերեկից, որովհետեւ առաւօտեան որոշում պիտի կայացնէր, իսկ որոշում նշանակում էր յեղաշրջում։ Նշանակում էր քանդիլ հինը եւ նորը սկսել։ Ինչպէ՞ս սկսել։ Որտեղի՞ց սկսել։ Եթէ մինչ այժմ անհաղորդ էր իրերին ու երեւոյթներին, այժմ բոլորովին խորթ էր, բացարձակ խորթ իր հետ, իր անորոշ կեանքի հետ։ Ու վախենում էր։ Մի բան անել։ Վերցնել լուցկին եւ կրակ տալ տունը։ Այդպիսով կը լուծուէր խնդիրը։ Մի բան արած կը լինէր։ «Դու խենթացե՞լ ես»։ Թերեւս այդպէս էլ կարծեն, երբ ինքը իր արամարանութեան տէրն է եղել միշտ, ա՛յնքան արամարանական, որ գաւեշտականին է հասնում։ Եթէ կար կազմակերպութեան օրինակելի մարդը, այդ ինքն էր՝ արդի ճարտարաբուհստի ամէնից կատարեալ ներկայացուցիչը, քառասուննոց մի խամածիկ, վիթխարի զբասենեակ, դորձակատարների շուռ ջոկատ եւ հարիւրաւոր կոճակներ, որոնց սեղմումով յարատեւօրէն աճում ու բարգաւաճում էր ընկերութիւնը։ Ինչպէ՞ս պիտի գոյատեւէր հասարակարգը, եթէ մի օր կանգ առնէին այդ փայլուն կոճակները։ Որդին վերագարձաւ դիշերուայ միջից։ Ձէր ուզում հանդիպել։ Լրագիրը երեօին քաշեց ու սպասեց։ Անխուստիքի էր։ Որդին շահաւորութեանց։ Ինքն ու որդին վաղեմի թշնամիներ էին։ Ասում էր այն բոլորը, ինչ որդին էր։ Որդին ատում էր այն բոլորը, ինչ ինքն էր։ Միւսներն էլ վարակուել էին այդ ատելութեամբ։ Առնել լուցկին ու կրակ տալ։ Ձխօսեցին։ Որդին մեկուսացաւ իր հեռաւոր որջում։ Նստել ու սպասում էր։ Կարծես ծնունդ օրից նստել ու սպասում է։ Նստել է աշխարհի այդ կէտում եւ սպասում է։ Տուփից մի լուցկի հանեց, վառեց ու բոցի լեզուակը դիտեց, մինչեւ որ կրակը մարեց։ Տուփից մի այլ լուցկի հանեց, վառեց ու լեզուակը դիտեց, մինչեւ որ կրակը մարեց։ Վառեց մի և լուցկի հանեց, վառեց ու լեզուակը լուցկին։ Չվառեց։ Լուցկին կոտորեց երկու մասի, ապա ամէն մի մասը կոտորեց չորս անգամ։ Բեկորները սեղմեց բուռի մէջ եւ թափեց յատակին։ Վեր

բարձրացաւ։ Ննջանեհակում կինը բացել էր իր փորթամութիւնը։ Բարձրացաւ ու յանձնուեց կնոջը։ Կինը ընդունեց նրան։ Կնոջ հետ նա յիշեց միւս կնոջը, միւս կնոջը, ոչ թէ միւս կանանց, այլ միւս կնոջը։ Կինը ընդունեց նրան։ Կինը ճշում էր։ Բայց երբ քակի անցորդները խուճապահար սլաքերի տակ քաշուեցին, հրապարակում, եռանկիւնածեւ փոքրիկ մարդագետնի վրայ երեւաց նրա կերպարանքը՝ օպիտակազգեստ, երեսն ի վար փռուած կանաչի վրայ։ Կնոջ սեւաթուր մադերը ցրուել էին խոտի վրայ։ Նրա ծոծրակից արիւն էր հոսում։ Կինը շշմահար շորս գին նայեց։ Նրանց հայեացքները մի պահ հանդիպեցին։ Իրենց հայեացքները մի պահ հանդիպեցին։ Նրան թուաց, թէ կինը օգնութիւն է աղերսում։ Ձարձագանգեց այդ աղերսին։ Նա շտնդրադարձաւ նոյնիսկ, թէ կարող է արձագանգել աղերսին։ Կինը ոտքի բարձրացաւ, օգնութիւն աղաղակեց եւ հազիւ մի քանի քայլ առաջ՝ կրկին տապալուեց դանակի հարուածից։ Ներկաները անակնկալի առաջին ցնցումից յետոյ դարձան հանդիսատես։ Նրան հետապնդող բարձրահասակ մարդը սպառնալից բաներ ասաց, այս անգամ կանգնելով զուհի գլխի առկէ։ Վերեւում այլ պատուհաններ բացուեցին։ Վարում հանդիսատեսները ֆանուս էին առաջին կարգի աթոռները գրաւել։ Կինը աշտելի տնջոցներ արձակեց՝ աջ ձեռքով խոտը ճանկելով։ Կինը կառչեց մարդու ոտքին։ Մարդը ձերբազատեց ոտքը եւ ամբողջ ծանրութեամբ կոխեց նրա ձեռքի վրայ։ Կինը, յանկարծ, արձակուած զսպանակի նման սկսեց դալարուել, ապա չորեքթաթ շարժուել ներկաների ուղղութեամբ։ Ահա կրկին ոտքի կանգնեց՝ գէմքը արինաթաթախ։ Մարդը կտրեց նրա ճամբան եւ դանակի մի քանի հարուածներ իջեցրեց այս անգամ նրա կրծքին ու գէմքին։ Կնոջ ծնկերը ծալուեցին, բերանից արիւն յորդեց եւ պարկի պէս ընկաւ սալայատակին։ Յոյզի ալիք անցաւ հանդիսականների միջով։ Բոյսրն էլ սպասում էին վերջին հարուածին։ Ուղում էին, որ մի բան պատահէր։ Ինքն էլ ուղում էր, որ մի բան պատահէր։ Կնոջ մարմինը մի քանի անգամ ցնցուեց, ապա անշարժացաւ։ Մարդասպանը դանակը փաթաթեց թաշկիւնակի մէջ, ծոցի դրպանը դրաւ, խոտի վրայից գլխարկը վերցրեց, հանդարտ քայլերով կտրեց բաղը, անցաւ պողոտայ, մտաւ արձագոյնի մի ինքնաշարժ ու հեռացաւ։ Կինը հեւում էր։ Կնոջ գրկում աւելի մեհակ էր, բացարձակ մեհակ։ Կինն էլ մեհակ էր։ Ամբողջ քաղաքը մեհակ էր։ Նա մէկ առ մէկ զգում էր բոլորի մեհութիւնը։ Մարդկային կղզեխումբ էր։ Յեղերի դերկզգեթումբ էր։ Ողջ մարդկութիւնը հիւանդ էր։ Իր հետ սկսուել էր հիւանդութիւնը, տարածուել աշխարհամասերի վրայ։ Մինչ կինը յղանում էր, փրկութեան յոյս չկար։ Գէթ մի հոգի փրկուէր։

Այս բոլորը երէկ էր։

Այսօր մի մարդ սպանեցին այդում։

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՅ

Ո Ի Ն Ս Ի Է Լ - Հ Ա Ճ

ԱՆՁՆԱԹՈՒՂԹ

Բանաստեղծ, թարգմանիչ, գրական ուսումնասիրություններու հեղինակ և չուրջ տասնամեակէ մը ի վեր ճշմարտ սրաթերթի գրական յանդուածին պատասխանատու խմբագիր Ռեալ Էլ-Հան կը հիշատակ արարական երիտաւորդ բանաստեղծութեան ամէնէն կորովի գէժքերէն մէկը: Հրտաարակած է բանաստեղծական շարժումներ, որոնցմէ թարգմանաբար քանի մը հմայունք կը ներկայացնենք ստորեւ:

Յաջորդ թիւով լոյս տեսնի ընծայենք Ռեալ Էլ-Հանի հետ ստեղծած «Բազմաբնիկ զրոյց», իսկ Մարտի համարով տեսնիք մեզի արժանազատ իր մէկ անտիպ բանաստեղծութիւնը և իր գրականութեան նախընտան Ս. Կիրակոսեանի յագուածը:

Կը սարսափիմ

Սնտուկիս վրայ ժայռը չի ճնշեր ու կը տարածուին նայուածքները իմ: Ես կը ժպտիմ, կը ծնրադրեմ. բայց կը հանդիպին ժամադրութիւնները խորհուրդին, քայլերը կը ճանաչեն ու կարեկցութեամբ ճերս կը մտնեն: Բայց զարանցին մէջն են և անոր մէջ կան ականջներ ու կազմադրութիւն:

Կ'որոնեմ քեզ, ո՛ր ես դու, ո՛ր, ո՛վ նշանակի հեշտանք. ձայնադած է սերունդը քեզ և հետքերը մատներուդ սրածայր են ու փառազ:

Կը յանձնէ գիտ քունը անկողնու վրայ ես ճանապարհին իմ կը գծեմ.— պատուհան մը կը բանամ ու կը քնչիմ, կը պահուրտիմ կնոջըս տակ:

Կը վերաճեմ...

Եւ կ'այրիմ...

Կը պառամ՝ «եկուր»: Կը գառամ՝ «եկուր»: Կը քաջագանչեմ՝ «գիտութեան համար է յաջրանակը, պիտի կատրտի սլաքը» ու կը վերյիշեմ ես այս բոլորը, որպէսզի ծնիմ առանց յուսահատութեան:

Ծովուն վրայ կ'անձրեւէ:

Կը կանչեմ քեզ, ո՛վ լերկ ուրուական, ձայնովը ստուկին, դաշնակիցին, ուղեցոյցին, գի ես գիտեմ, թէ ետ դարձող վրէժն ես դու: Իմ ու քեզ միջեւ կայ համայնի ազդիլըս գուարթ, կայ կիներ և քոզ հունձքը իմ

բժշկէ մանգաղը քու: Սակայն կարծր ես դուն, հիշդ վաշխի նման, տգեղ ես, վատ, համր եւ ծրագիրներն իմ չունին թիւը: Գլուխըս ես կը հակեմ ճակտիս վրայ եւ մէկ աչքիդ նայուածքներով տուր ու շեշտ դուն կ'ասեղես մարմինը իմ. ցերեկը կը լիւզ գիւս, գիշերը կը պաշտպանէ քեզ: Յերեկը գիւս կը մղէ՝ «հուկդ է գիշերը» եւ կը վազեմ, ես կը վազեմ, գիշերը այր է, տ'ըր փախչիմ ես, որ հարիզոն եմ:

Կեանքը օձ է: Աչքը՝ սանդուխ, աչքը եղէգ է եւ շուկայ մը սեւ: Եւ իմ աչքս ծագար է, որմէ հովը կը ցատկէ ու թիբախէն իր կը շեղի: Արդ-եօք հաջեմ- ազադակը չունի սանձ: Յենարան մը կայ այնտեղ եւ ես պիտի շարունակեմ դիմադրել:

Պուցէ գայ ժամանակը ընկերներուն, բայց սպասումը անձնասպան ե-դաւ: Զիտերն ահա կը սուրան անօգուտ-անօգուտ, վախը անաւարտ թուանը-շան է:

Առատադը սրտին մէջ իմ կը լուծուի եւ երկրին համար ա'լ չկայ ոչ մէկ տեղ: Կը թաւալիմ ու կը շարտուիմ եւ արձագանգը գիւս կ'աւլէ արձա-գանգ իբրեւ. հեռո՛ւ, հեռո՛ւ, եւ անուղի է երկիրը եւ որ հիմա, կ'իջ-նէ անսեմ:

Անբոյստին կ'արձակուիմ, մտափերթերն իմ կը խրեմ օդին մէջ, բայց արգամդըս կարուած է:

Առանց գայրոյրի, շարժումը գիշերուան ընդդիմադիր տարրը չէ, կոյր է շարժումը եւ գիշերուան մէջ գիշերով կը տեսնէ: Ե'լ, ճրագը աղա-խիմ է եւ քու ձեռքը՝ սպասուհի. (կը ծիծաղիմ իմ վրաս): Ե'լ, ահաւասիկ ես, կը թակուի դուրը:

Դեմքը — Հո՛ւ է մահը: Դեմքը դեմքն է ճակատագրին ու կռնակը կորուստն է: Ան կը թակուի, բայց չ'երեւար ու կը մնայ եռատատուն:

Պէտք է արատասեմ: Ինչպէ՞ս մոռցայ, թէ արցունքները հայելին կը սղտորեն: Անտառ է հայելին, բայց արցունքը՝ փետայի: Թող որ լսեմ ըն-կերուհի աղմուկը քու. թող բարձրացնեմ դրօշը քու, մինչեւ լարերն իմ ու-սին մէկիկ-միկիկ կոտորին:

Ծովուն վրայ կ'անձրեւէ,
Բայց աշխարհի մէջ չ'մնաց նայնիսկ կայլակ մը արցունքի:

Եւ տխուրի՞ւնը:

Ի՞նչ է գիւրը մարդու մը տխուր. խոժոռումը նշան է, իսկ ցաւումը՝ նաւարկում: Գարունը կը ձայնասփռէ եղանակները խելագարութեան եւ բա-զինն ու յաղթանակը առատուան կ'ողջագործին, իսկ մախանձէս ես կ'ը-նեմ իմ այտերը արմատախիլ:

Բայց վա՞խը:

Ի՞նչ է

վա՞խը.

Մի սկսիր: Պիտի կծկուիմ եւ լռեմ պիտի: Թեւերդ: Աչքդ հորիզոնակա՞ն, տէր իմ, ո՛չ, առ ինձմէ առաջ դուրս հանձները իմ:

Արդի արիւն:

(«Գրախ Զը...», 1960)

ՀԵՏԵԻՆԵՏԷՔ ՆԵՏԻՆ

Իշխանը խաչընդոտեց բոլոր միջոցները: Դեպի քատրոն ուղղուեցաւ, ուր քարերուն վրայ գրօսաշրջիկը կ'օրօրուէր: Բարձրացաւ ակնախոռոչն ի վեր եւ զնշացիրն իր պարպեց ու անջատուեցաւ լուսապսակը, որ առաւօտուն վերածուեցաւ դարձեալ անկողնի:

Իշխանը դարձաւ ու համաձայն գտնուեցաւ: Բայց լուրը չհասաւ ամօր: Մի մտածէ՛ք: Այս փորձերը զուգահեռ գիծեր են, որոնք կ'արարեն գիրքերը:

Կը մեկնի ան, կարծես ոչինչ պատահած ըլլար:

Մայր մը յագնեցաւ:

Հերետիկոսութեան հակադրուած իշխանը կը յիշէ: Նոյնիսկ սահմանները լեռներուն մասնակից են գրելու արարքին: Կը վերանա՛յ: Դու՛րս ելէ՛ք բալթըդ: Ու կը բաժնայ պատկերները կիներուն, եւ իր արիւնքը՝ մանրագիտակը համդարտ, որ դառններ կը փակէ:

Կը ստորագրէ: Կը կոպկոպուի: Ամէնէն հարուստ հարսերը կ'երևան իր մէջ: Կ'երկփեղկէ ժայռերը մետաքսին ու կը պատրաստուի ազատութեան համար:

Մի մտածէ՛ք: Նետը կ'ուզենձէ դատարկութիւնը: Եթէ իմաստուն ըլլայի կը նորոգէի դատարկութիւնը: Պատր ջուրերը կ'որսան բոլոր անոնք, որ կ'անցնին:

Հետեւեցէ՛ք նետին:

(«Գլխատուած գլուխը», 1963)

ՕՐԵՐՆ ՈՒ ՀՍԿԱՆԵՐԸ

Ես կը սիրեմ յիշատակը օրերուն, որոնք միայն կը փախչին, կը փախչին. անգիտակից, թէ գրքի մը էջերուն իրենք եւս օր մը պիտի աւարտին: Ես կը սիրեմ յիշատակը աշխատունակ, միգամած ու խորասուզեալ շրջաններուն ժամանակի, որ տէր էին հսկաներուն, որ փայեցին, փայեցին երբեւիցէ չգիտնալով, թէ գրքի մը էջերուն օր մը պիտի աւարտին:

Այդ օրերը մեզմէ ազնուականներ չէին: Ու գիտէր ան, թէ մենք պիտի ըլլանք իրմէ անլի ազնուական եւ անգիտանալ փառքը մեր թշուառութեան, հաւատքը մեր ստրկութեան, ամայնութիւնը մեր ազատութեան ու տակաւին ազնուանքը մեր անկումին:

Ես կը սիրեմ յիշատակը այն օրերուն, որ պիտի գան: Նոյն այդ օրերը ներկայ...

(«Գլխի օրերուն անցեալը», 1965)

Հայացուց՝ Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

ՈՒՆՍԻ ԷԼ-ՀԱՃ

ՆԱԶ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԽԱՒԱՐԸ

Շողեկառքէն ներս սառն լուսթիւն է: Կարծես կեանքը, յոգնած թռչունի մը նման ծառի մը բարակ ճիւղին կեցած՝ վայրկեան մը կը հանգստանայ: Նստած եմ: Փոփս՝ Արամիկ հեշտօրէն կը քնանայ ու դէմքէն անմեղութիւն մը կը հոսի:

«Երանի Արամիկին, — կ'ըսեմ, — բայց ինչ լաւ կ'ըլլար, եթէ չքնանար ու հետս խօսէր»:

Պաւարը տխուր ամպի մը պէս կը տարածուի դուրսը: Արամիկին գլուխը հետզհետէ կը կքի ուսիս եւ ծաւալող մթութիւնը մերթ ընդ մերթ կը ներածուի հոգիէս ներս, հոն ստեղծելով տրեւու ճառագայթներէն հեռացող կատուի մը զգացած դողը: Եւ մինչ կ'ընթանանք, ինծի այնպէս կը թուի, թէ խաւարը կեանքն է ու շողեկառքը վաղանցուկ ճամբորդ մը:

Հանդարտօրէն կը դիտեմ շուրջս: Ոմանք կը քնանան, ուրիշներ մխրճուած են փոքր գիրքերու եւ լայն օրաթերթերու մէջ եւ տակաւին շատեր, իրենց նայուածքը կէտի մը մէջ սասեցնելով՝ հեռացած են մեզմէ:

Անխօս, անշարժ այդ ներկաներէն հեռանալով կը վերադառնամ ինքզինքիս ու կը մտնեմ անձէս ներս խիունջի մը նրման, որ երկար ատեն իր պատեանէն հեռանալէ ետք՝ մեծ կարօտով կը վերադառնայ անոր:

Մայրս երէկ մեռաւ:

Երկար տարիներէ ի վեր բաժնուած էինք, կարծես ան երկար տարիներէ ի

վեր մեռած ըլլար:

Ոչինչ՝ եթէ ան երէկ մեռաւ:

Հիմա ես իմ մէջս եմ: Արամիկ ինձմէ մաս մըն է, որ մէջս կը քնանայ: Պատրաստ եմ հաւաքելու անձէս բաժնուած բոլոր հիւլէները՝ կազմելու համար ամբողջութիւն մը, որ իմն է միայն:

«Ես մաս մըն եմ քեզմէ. առ դիս եւ դեր մէջդ», — կ'ըսէ ձայն մը:

Աչքերս կը գոցեմ՝ շլակու համար մօրս ձայնը եւ ահա ան մասնիկ առ մասնիկ կը ծնի մէջս, ստեղծելով դատարկութիւն մը ինձմէ վեր, անմատչելի՝ ինչպէս ծառէն կախուած սէրը, անդիմադրելի՝ ինչպէս ձմրան ցուրտ օրերուն անդթօրէն տեղացող անձրեւը, լուռ՝ ինչպէս բաժանումի վերջին վայրկեանը: Եւ ես այդ ծանր դատարկութիւնը գրկած կը նստիմ:

— Մամս, — կ'ըսէ Արամիկ արթննալով, — դիս կը սիրեմս:

— Այո՛, կը սիրեմ:

— Ուրիշ ո՞վ կը սիրես:

Կը նայիմ Արամիկին մերկ ձեռքերուն ու ձայն մը ինծի կ'ըսէ.

«Հրա՛նդը, մա՛յրդ, շողեկա՛ռքը, պայտուա՛կդ, է՞սդ, դուրսի խաւա՛րը, մէջդ ծաւալող դատարկութիւնը»:

— Գիտեմ, — կ'ըսէ Արամիկ, — ու կրկին դուրս կը դնէ ուսիս:

Աչքերս կը դոցեմ, Արամիկին պէս անտարբերօրէն քնանալու համար, բայց մարմինէս մաս մը բաժնուելով կը նետուի շողեկառքէն դուրս տարածուած մթութեան մէջ, ու յանկարծ խաւարը կը

սկսի խորտիլ, քայքայուիլ եւ կերպարանք ստանալ: Կը բաժնուի ամպի նման մեծ գունտերու եւ գունտերը իրարու բախելով կը ստեղծեն բնդանուր շփոթ մը եւ մասնիկ առ մասնիկ անհունին մէջ ընդլայնող եւ երկարող մարմիններ կը կազմուին: Մարմինները կու գան խոտաւորուելու իրարու մէջ, իւրաքանչիւրը իր մարմինէն մաս մը կը մտցնէ կեդրոնին մէջ, բոլոր մարմինները կը միանան ու խաւարը կը թանձրանայ այդ անկիւնին մէջ:

«Ահա մահը», — կ'ըսեմ եւ դէմքս ձեռքերուս մէջ առնելով՝ կը նստիմ անհունին մէջ:

Մարմիններու խաղը կը շարունակուի: Անոնք իրենց անկիւնէն Հիւլիական արագութեամբ մը արձակուելով, կը տարածուին, աւղղուելով դէպի ամէն կողմ եւ ակնթարթի մը մէջ կ'արձանանան, թեւերը վեր, բաց աչքերը անհունին զարկած, տկնարկները ստոած:

«Ահա վախը», — կ'ըսեմ ու կը սկսիմ վազել անհունին մէջ:

Եւ մարմինները նուազելով՝ իրենց հեռուոր անկիւններէն սարսափահար կը վազեն, անոնց աչքերէն կրակ կը ժայթքի ու դէմքերուն վրայ տարածուած սարսափը կը փչուի, երբ անոնք կու գան եւ երկու-երկու կը պլլուին իրարու: անոնց սրունքները ազահօրէն կը գրկեն զիրար, ափերը կը զարնուին իրարու եւ աչքերը կը խեղդուին:

«Ահա առանձնութիւնը», — կ'ըսեմ եւ կը գրկեմ ինքզինքս ու կը շարունակեմ դիտել, ըսելով՝

«Ահա վախը,

«Ահա առանձնութիւնը,

«Ահա մահը»:

Երջանկութիւն մը կը դժագորութի դէմքիս վրայ եւ անհունին մէջ թաւալելով կը փորձեմ մտնել մարմիններուն մէջ, երբ յանկարծ պատկերը ապակիի մը պէս փշուրուելով կը վերածուի ամպալոյտերու եւ ամպալոյտերը իրարմէ բաժնուելով կը վերակազմեն խաւարը եւ ձայն մը այդ բոլորին մէջ խեղդուելով կ'ըսէ.

«Հետաքի՛ր...»

Կը զգամ մահ մը, վախ մը, առանձնութիւն մը, ու այդ բոլորը գրկած՝ կը վերադառնամ շոգեկառք, դառնալով մաս մը մարմինէս:

— Մամա, ո՞ւր կ'երթանք, — կ'ըսէ Արամիկ:

— Տուն:

— Հայրիկը տո՞ւնն է:

— Թերեւս:

— Մեղի՞ կը սպասէ:

— Թերեւս:

— Անապարհեմք, — կ'ըսէ եւ երբ շոգեկառքը կը կենայ երկուքս կը նետուինք դուրս:

Փողոցին մէջն ենք: Կը քաշենք: Մարդիկ կը վազեն: Կը վազեմ անոնց հետ, դիտելով հեռուն Հոտաւորուած մեծ ժամացոյցը, որուն ծանր զարկերը կը զգամ սրտիս վրայ: Կը վազեմ ժամացոյցին երկվայրկեաններուն արագութեամբ, կը զարնուիմ շուրջս գտնուողներուն, առանց լոյսի խողերը նկատելու՝ կ'անցնիմ փողոցներէն, կտրելով ինքնաշարժներուն շարքերը, կը վազեմ՝ դուրս պարապութեան մէջ նետած, եւ լոյսերով ողողուած քաղաքը կը սկսի հեռանալ ինձմէ, աղշահար կը մօտենամ ու վախ մը, մահ մը, առանձնութիւն մը գրկած՝ մատս կը հանդիցնեմ դրան զանգին:

Հրանդ կեցած է դրան մէջ:

— Հայրիկ, — կ'ըսէ Արամիկ ձեռքս ձգելով:

— Հրանդ, — կ'ըսեմ ես ու պայուսակս գետին նետելով թեւերս կը տարածեմ անոր շուրջ, — մեր փողոցը, Հրանդ, մնացած է նոյնը, փոշոտ ու մերկ: Այն փոքր լոյսի սիւնը, ուր մայրս իրիկանաւորին կեցած ինձի կը սպասէր, տակաւին հոն է: Մեր տունը կարծես աւելի փոքրացած է: Երբ Արամիկ մտաւ այդ տան ցած դուռնէն ներս, կարծեցի, թէ Արամիկը ես եմ: Այն փոքր տղաքը, որոնց հետ կը խաղայի՝ հեռացած են. ուրիշներ կը շարունակէին մեր խաղը, եւ այն եկեղեցին որուն հին զանգակը խռուպոտ ձայնով կը հնչէր՝ մնացած է նոյնը՝ խալատ ու հին: Արամիկն ու ես մըտանք եկեղեցիէն ներս. ան սկսաւ լալ:

Ըսաւ, թէ ամէն ինչ շտա տխուր է: Մայրս հոն պառկած էր: Կ'ընէին, թէ մեռած է: Արամիկ կը պնդէր, թէ հոն ամէն ինչ տխուր է, եկեղեցին, գանգա- կը, փողոցը, լոյսերը: Կ'ըսէր, թէ ինք կը սիրէ մեծ քաղաքը՝ լոյսերով ողող- ւած, աղմկալի, շարժուն, հոն՝ ուր կայ մեծ շողեկաւք, հպարտ եկեղեցի, մեծ

ժամացոյց: Կան բարձր շէնքեր, լայն դուռներ...:

.

Հրանդ մտիկ կ'ընէ ու աչքերուս մէջ կը փնտռէ գիտ, մինչ ես կը շարունակեմ պատմել եւ մայրս աստիճանաբար կը մեռնի մէջս:

ԿԵՏԸ

Լուսթիւն:

Սենեակէս ներս հաստատուած իրե- րը այնքան ծանօթ են ինծի, որքան ինքս ծանօթ եմ պատկերին:

Այսօր Երկուշաբթի է, կամ Երեք- շաբթի եւ կամ Կիրակի: Ի՞նչ տարբերու- թիւն: Այսօր պարզապէս որեւէ օր է:

Երբ փողոցէն կ'անցնէի, ամէն կողմ լուռ էր, մարդիկ խուճապահար կ'ուղ- ղւէին տուն: Այդ այն վայրկեանն է, որ կը փոխէ օրուան որոշ ընթացքը եւ մթնոթիւնը կը դրաւէ փողոցը՝ հոն ըս- տեղծելով աճապարանք մը, ամայութիւն մը, տխրութիւն մը:

Ահա այդ վայրկեանին էր, որ մարդ մը մայթին ճիւղ մէջտեղը կեցած, ան- ցորդները կը կեցնէր՝ հարցնելով.

— Այսօր ի՞նչ է. Երկուշաբթի՞ թէ Երեքշաբթի:

Մարդիկ կ'անցնէին անտարբեր:

Մարդը զիս կեցնելով հարցուց.

— Երկուշաբթի՞ թէ Երեքշաբթի, հը՞:

— Կիրակի, — ըսի:

— Ա՛հ, — ըսաւ ան զարմացած ու վայրկեանի մը մէջ աւելի մօտեցաւ ին- ծի, կարծես ես ինքս բլլայի իր փնտռած օրը, որ երկար բացակայութենէ ետք կը փերադառնար, — ուրեմն Կիրակի է, — կրկնեց ան ու յանկարծ արձանացաւ, խօսքը բերնին մէջ սառեցաւ, թեւերը ան- շարժացան եւ աչքերը կախուեցան պա-

րապութեան մէջ...:

Երեւակայութիւնս սահեցաւ փողո- ցէն ու հեռացաւ, եւ պատկերներ սկսան ստեղծուիլ շուրջս:

Անդին, մայթին վրայ կեցած աղջիկ մը կար, շարունակ ժամացոյցին նայող աղջիկ մը, որ կը սպասէր սիրոյ, որ դէժս անշարժացած մարդն էր...

Տակաւին կար այնքան ցուրտ եւ ա- մայի սենեակ մը, ուր սեղան մը կար, սեղանին վրայ փոքր մոմ մը եւ մոմին մօտ կին մը նստած կը սպասէր, որ զայ շունչը, որ դէժս անշարժացած մարդն էր...

Տեղ մը փոքր տղայ մը կար, մերկ ոտքերը իրարու միացուցած ծալապատիկ անկիւն մը նստած՝ կը սպասէր հօրը փրապարձին, որ դէժս անշարժացած մարդն էր...

— Քայլէ՛, — ըսաւ անցորդներէն մէ- կը, ու ստեղծուած պատկերները պա- ունցան եւ տեսայ դէժս անշարժացած մարդը, որ կը շարունակէր անցորդները կեցնելով հարցնել.

— Այսօր ի՞նչ է, Երկուշաբթի թէ Երեքշաբթի:

Հիմա սենեակիս մէջն եմ:

Թերեւս Երկուշաբթի է կամ Երեք- շաբթի եւ կամ Կիրակի: Ի՞նչ տարբերու- թիւն: Այսօր պարզապէս որեւէ օր է:

Կարծես սենեակս բանա մըն է, ուր

ինքզինքս կը բանտարկեմ ամէն գիշեր, առտուն կրկին ազատ արձակուելու յոյսով: Կը նետուիմ աթոռիս մէջ եւ աչքերս դոցելով վայրկեան մը կը դիտեմ հոն աարածուած մթութիւնը:

— Ելի՛ր, ինքզինքդ նետէ այս բանտէն դուրս, — կ'ըսէ ձայն մը:

Կը բանամ աչքերս ու կը դիտեմ սենեակիս միօրինակութիւնը, կը նայիմ հայելիին ու կը տեսնեմ ինքզինքս, միօրինակութիւններու ամբողջութիւն մը, եւ սենեակիս դուռը բանալով՝ կը նետուիմ դուրս:

Կը սկսիմ քալել փողոցէն ու կը հանդիպիմ այն փոքր աղջկան, որ շրթները դատարկութեան մէջ երկարած՝ կը սպասէ...

— Ես սէրդ եմ, — կ'ըսեմ անոր մօտենալով ու կը հպիմ շրթներուն, մինչ մարմինս կը սարսռայ ու փողոցին մէջ կը ստեղծուի վաղեմի երջանկութիւն մը: Կը հեռանամ:

Անդին, այն ցուրտ եւ ամայի սենեակն է եւ այն կիներ, որ սեղանին դէմ նստած կը սպասէ, սեղանին վրայ տակուին կայ այն մօմը եւ մթնոլորտին մէջ կը պարէ ամայութիւնն ու ցուրտը: Կը մտնեմ ներս, կը նստիմ դիմացը, կը վառեմ փոքր մօմը ու անոր զեղին լոյսին տակ կը դիտեմ կնկան անշարժ դէմքը, ուր կայ դարերու սպասում մը, եւ կ'ըսեմ.

— Ես տաքութիւնն եմ, առ դիւս մէջըդ:

Սենեակէն ներս ամայութիւնը կը խզուի եւ ցուրտը կ'այլի:

Կը հեռանամ:

Անդին կայ այն փոքր տղան, որուն օտքերը մերկ են ու ձեռքերը ցուրտէն սառելով փակած են անոր փոքր մարմինն, կը մօտենամ, վերարկուն կը տաքածեմ անոր վրայ սուսերուն շուրջ ու քովը նստելով կ'ըսեմ.

— Ահա եկայ, ա՛յլ մի վախնար, տըղաս:

Տղան հարցական կը դիտէ դէմքս, վստահութիւն մը կը ծաւալի անոր անշարժ դէմքին վրայ ու, տաքութեամբ մը պաշտպանուած՝ կը սկսի անմխտորէն քալել:

Կը հեռանամ:

Կը բանամ սենեակիս դուռը: Աթոռիս մէջ նստած եմ այնքան նուաղուն, որ կարծես անէացած եմ: Կերպարանաւորութեամբ մը կայ մէջս, նման այն վայրկեանին, երբ կը դիտես փողոցը իրիկնամուտին եւ մէջդ կը ծնի տխրութիւն մը: Ինծի այնպէս կը թուի, թէ ես այն աղջիկն եմ, ու շրթներս փողոցին մէջ նստած սէր մը կ'ապրիմ, կամ այն կիներն եմ, ու սեղանին դէմ նստած կը սպասեմ, որ մեռնի լուծութիւնը, տակուին այն փոքր տղան եմ, ու մերկ ձեռքերս պարապին մէջ կարկառած՝ վրայ մը կ'ապրիմ:

Ես ձեզմէ իւրաքանչիւրն եմ, ձեք ամբողջութիւնը: Ես ստեղծեցի ձեզ իմ էջերուս մէջ եւ հիմա դուք կը պարփակէք զիս ձեր մէջ: Սենեակիս մէջ խաբէութիւն մը կը պարէ ու հոն հաստատուած շորտ պատերը կը մօտենան իրարու, սենեակս կը սկսի նեղնալ, անոր շորտ անկիւնները կը խեղդեն զիս ու ամբողջութիւնս կը վերածեն կէտի մը, կ'որ ու փոքր կէտի մը:

Հիմա ես կէտ մըն եմ:

Այդ կէտին մէջ կը կրեմ ձեզմէ իւրաքանչիւրին կարօտը, վտիւր, սէրը, ցրտութիւնը, եւ այդ բոլորը կը զառնան աւելի մեծ, քան ես, որ կէտ մըն եմ, կը ծաւալին ու կը նետուին ինձմէ դուրս, կէտէն դուրս, սենեակէն դուրս եւ դուրսս կը հաւաքեմ ձեզ բոլորդ, տղայ՝ որ վախն ես, աղջիկ՝ որ սէրն ես, կիներ՝ որ ցրտութիւնն ես, եւ դուք էջերուս վրայէն քալելով, ապշահար յառաջանալով կը վազէք, ինծի կը մօտենաք, կը մտնէք սենեակէս ներս, կէտէս ներս, ինձմէ ներս եւ ապշահար ձեք աչքերը կէտին մէջ սառեցնելով կը հարցնէք.

— Ո՞վ ես դուն:

ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՄԱՐԴԱԶԻՆ

Ա.

Մարդասիր մը
սաթէ մարմնին շողերը
նստոստումին հետ կը սփռէ
ամէնուր

Եւ ազդիկները արեւի ու լուսնի,
Եւ ազդիկները լնակի ջուրերուն,
ազդիկները ծաղափի՝
արմնի երբեք, երբեք բոսիկ չեն փախծ,
գարմացած դուրս կը նային.

փողոցներուն
մարդասիր մը առնական,
շաւարած ու կորսուած՝
հագիւ կը գտէր նստումները,
կը սայթափէ, կը գարնուի պատերուն...


Բ.

Մթնշաղին՝
մարդասիր մը փաղափին մէջ.
բաշերն իր կրակէ
կը հրդեհեն
երկրաշափական բոլոր ձեւերը
Եւ սահմաններն ապահով.

Արթնցած մարդիկ
պատուհաններէն
կը դիտեն զինք գարմացած
— մարդասիրն կար, երբ մանուկ էին,
Եւ կը վազէր հեռու լեռներուն:
Իրեն պատմած են ամէն ինչ.
գիրենք կը նանչնայ: Իսկ եթէ՞ խօսի —

Մարդասիր մը
սաթէ մարմնին շողերը
նստոստումին հետ կը սփռէ...

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



digitised by

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՄԱՆԵԱՆ

(Վ Է Պ)

Անգամ մը լեռներուն վրայ իր ցանկատանի, անիկոս պիտի իմաստանար Սողոմոնէն ալ կատարեալ իմաստութեամբ, որուն գրիչը կիներուն միտին մագաղաթը ունեցաւ ու մելանի փոխան արիւն շփուց իր եղէզին՝ ինչպէս էր ճակատագիրը արեւմտահայ գրողներուն գրեթէ մեծ մասին, որոնց շնչափն կրակը, վառ համր այդ կարմիր հեղուկին անցած կը թուէ ինծի հիմա, երբ կը ջանամ հասկնալ զանոնք, իրենց քիչիկ բառերուն ընդմէջէն այնքան արտայայտ, ջերմին ու սխրագին։

Մաթիկ Մելիքիմանեանց, մեր բոլորին պէս ճանչցաւ թուրքը, բոլորէն ալ կենդանի, մորթոց երկոտանի, մռայլ, մռայլ, մռայլ իրր հոգի, իրր զգայնութիւն։ Ու անանութիւնը, որուն սպարկէր միտքի նախնական զգրութիւն մը, այնքան մօտիկէն թելադրող տափաստանը։ Առանձին ուսումնասիրութիւն է այս հոգեմիտակին տիրական տարանջատումը։ Ինչ որ այս գարուն սկիզբը թուրքն էր, Օսմանին կայսրութեան սահմաններէն ներս, դեռ չէ գտած իր պատկերը հաւատարմօրէն ինկած կտաւի։ Մաթիկ Մելիքիմանեանց, շատ երիտասարդ, ատիկա ընկու անկարող, հաւաքած էր տարբեր միայն։ Քառասուն տարի ետքը իր նահատակութենէն, երբ կը յօրինեմ իր կենդանագիրը, իմ ուժերը տկար կը զլան, իր այդ տարբերը վերածելու ճամբարիս դրութիւններու։ Իմ կէս դարէն աւելին ես տուեր եմ թուրքը հասկնալու արտում պարտքին։

Երկու ախարհներու (Կովկասի թուրքին եւ Թուրքիոյ թուրքին) անհաշտ ու հակադրութիւնը, որ մեր յեղափոխական պայքարին մէջ եղաւ ցաւագին հարց մը, գրիչի եւ սուրի մարդոց իրարմէ այլութիւնը, իրարու ներհակութիւնն էր։ Ընկեր Մաթիկը, իրրեւ մարտիկ, քանի մը օրուան մէջ գտաւ իր Դամասկոսի ճամբան, երբ խաղաղ գիւղ մը հասնելուն, աղբիւրին առջեւ, տեսաւ մորթուած դիակները երկու աղջիկներու տասնէն հագիւ վեր ու շորոս պզտիկներու, բոլորն ալ կացիեակաւ։ Այդ մկրտութիւնը այնքան հզօր էր, որ իր ուղեղին մէջ ո՛չ միայն վարացոյրներու պատուախը պզտց, այլեւ ընդմիտ անհետացող, ընկուզուող երկրամասեր։ Անիկա, սարսափազին զայրոյթով մը, տպւեցաւ իր խղճմանը մեծ Քրիզան, այդ անմեղ դիակներուն մօտեւ ու խմբագրեց, նոյն գիշերն իսկ, իր առաքելութեան մեծ տաճիւմնսը, որով սկիզբը կը դնէր իր հերձուածին, բիւրոյի մարդուն եւ երկրին մէջ զործող մարտիկի նկարագիրները իրարու հակադրող։ Իր ոճին առատութիւնը, մտածումներուն պարզութիւնը, քարոզին նախնականութիւնը աշխատեցան ի մնաւ իր դատին։ Գրասենեակի եւ գործատեղիի մարդերը իրարմէ կը տարբերին գրեթէ ամէն դեպքներու վրայ։

Մաթիկը ձգուեցաւ իր ուտոպիաներուն, ստացաւ կազմակերպչական դերագոյն մարմիններ լուրջ աղաքարութիւն, հրաւիրուեցաւ իր երդումը յարգելու մանաւանդ կուսակցութեան գերուոյն պատգամը, — կարգապահական սարքը, որուն գէժ ամէն ընդլայտմ կը պատժուէր անխնայ: Կարծառօտ մարդերը կտրւ, բայց հաստ սկզբունքներու մարդեր եղած են: Այդ հիման վրայ էր, որ ընկեր Մաթիկը քաշուեցաւ գինքը զինուորագործ կազմակերպութիւն, հոգին խորունկ բեկումով ու ցաւով, բայց աւելի քան հաւատարմութիւն իր ժողովուրդի դատին: Ժրնհւ, Լոնտոն, Փարիզ, Թիֆլիս. բոլոր ինտելիգենտ մեր յեղափոխականներուն պակասած անիկա կը յաւակնէր դատած ըլլալ: Անգամ մը, որ այդ քարձը շնորհներով ու հսկայ կամքով օժտուած ընկերները ճանշնային երկիրը, հոն ապրող հայը տեսնէին իր իրական կարեւորութիւն, կարողական (potentiel) արժանիքներուն մէջ, յեղափոխութիւնը կը դադրէր տառնմին ինքն իր մէջ ծուարող մարմին մը նկատուիլ ու կ'ըլլար ժողովուրդին թաքուն ուժերուն ցայտուն խորհրդանիշը: Ինչ ընել, սակայն, մինչեւ որ իրազործութիւն այդ պայմանները: Բայց շատ պարզ բան մը. — ճանշնայ այդ ժողովուրդը շատ մօտէն, ամէնօրեայ շփումով մը ու գիտակցիլ անոր ցուերուն, որպէսզի ըստ այնմ հայթայթուէին դարմանները: Ընդհանր թուրք կոյրութիւնը արեւելքէն դէպի հարաւ (Կիլիկիա), հարաւէն դէպի արեւմուտք, մինչեւ Պոլիս: Որքան ուրախ էր այն գիշերը, երբ այդ հսկայական ձեռնարկը դէթ իրրեւ ծրագիր ընտանի դարձաւ իր մտածողութեան: Պիտի տոնէր ճամբորդի ցուպը ու անցնէր գործի: Բայց այս մասին աւելի ուշ:

Իր կեանքի այն շրջանին, ուր անիկա պատանի էր, այդ Վոլկաասումս միշտ կար թուրքը, հազիւ հազ իրրեւ հեռու հեքիաթ, յիշեցնելով դարերու տիրակալու սարսափները, Արեւելքէն դէպի Արեւմուտք իր խաւովմին: Պատմութիւնը թուրք է, երբ շի պաշտպանութիւն: Թուրքերը, մեղի պէս, թուրքի վրայ կը խաղան, երբ իրենց գիրքերը կը մատուցանեն իրենց գաւազներուն: Այս դարուն սկիզբին, Կոլկասի մէջ թափթփուք ժողովուրդ մըն էր այդ անունին տակ խմբուած ամբողջ, առհասարակ բոլորոքած մզկիթներու պատերուն կծկուած, վախկոտ, թոյլ անբանութեամբ մը, ու դիտցէք, որ դիւրին չէ ինքզինքը հերքելը, մանաւանդ սրբել, մաքրագործելը՝ ինչ որ մանկութեան տախտակներուն վրայ դրած են մեր գգայարանները: Մե'ղք, որ քիչ են իմ էջերս եւ ըլլամ ստիպուած շատ, չա'տ բան զոհելու Մաթիկին զգայութիւններէն — իր գեղէն Թիֆլիս մանկու, տառապելու, ուսում առնելու, զարնելով դուրսը հազար քարի: Իր պատմութեն ինքի կը դառնար իմ ալ շատ մօտիկ անցեալը, գեղէն քաղաք, հազար դժուարութեանց սլաքներով շարժուին իմ ծարաւը այդ ուսումին ետեւէն, որուն անունը մօրս բառերով մարդ ըլլալն էր այդ օրերուն: Ինչ որտայոյց հերոսութեամբ մը մերժելով իմ բազուկներու կարեւի արդիւնքը տունին՝ մայրս դիւ յօժարէր պիտի աւելի հեռու, աւելի զմենք՝ դպրոց մը դրկելու, դրեթէ ծերութեան դուռներուն, աչքերէն ու կեանքէն հաւասարապէս տկարացած, բայց շարունակելով պահել իր ուխտը, որք իր գաւիզները իրենց ճակատագիրներուն տիրացման հանելու, որ հոմանիշ էր քսանը անցընելու...

Ընկեր Մաթիկին ձեռնարանը անշուշտ աւելի կ'արժէր, քան իմ Արմաշը, որուն մասին խօսեցայ արդէն: Մաթիկին խորունկ, խանդավառ հայրենասիրութիւնը, իր ժողովուրդին երկիրն ու պատմութիւնը ջուրի պէս գիտնալու իր հպարտութիւնը, ու հակառակ կրօնական կրթութեան եւ սուս կառկածու հակողութեան, այդ ձեռնարանին աշակերտող երիտասարդութեան խորունկ ազատամտութիւնը, առաջամարտիկ գաղափարներու հանդէպ սրբ-

տառուչ ընկալութիւնը աւելի քան տպուորիչ էին: Անիկա Հիացումէ զատ անկեղծ բառեր ունէր իր ուսուցիչներուն հասցէին, արեւելահայ բանասիրութեան ու պատմական ուսումնասիրութեանց մէջ մեծ վարկ վայելող անձնասիրութիւններ բոլորը, համալսարանական լայն պատրաստութեամբ, մտքի անկաշկանդ հորիզոններուն բարիքով, գիրենք երկիւղածութեամբ ու կիրքին հասնող ուշագրութեամբ մը ունկնդրող ազոց մատաղ հոգիները կերպարող անորակելի այն Կոնստանտինով, որ սերունդ մը կը թելադրէ: Ստոյգը այն է, որ աւելի յետոյ եւ պիտի հաստատէի Մաթիկին ապաւորութեանց վաւերականութիւնը բոլոր այն մարդոց վրայ, որոնք անցեր էին այդ վառարանին ջուրայէն: Արեւելահայ այն մտաւորականութիւնը, որ 1890էն մինչեւ մեր օրերը իր ուսերուն ունեցաւ ո՛չ միայն արեւելահայոց քաղաքական ու գրական ճակատադիրը, այլեւ ամբողջ հայ ժողովուրդին ամէնէն տաղնապագին փորձանքը — մեր յեղափոխութեան կազմակերպումը իրը դործ ու դադարաւորութիւն — ամբողջութեամբ կու գայ ձեռարանէն: Երբ կը պարզէր ինծի Մաթիկ Մելիքեանեանցը մեծ ու չքեղ իր երազները, ինծի կը թուէր տեսնել այդ ամէնուն ակզրնական հանգոյցը բազմակերպող, բայց հեղաշարժող զլուրի մը մէջ, որ մեր եկեղեցականութիւնն էր Արարաւորի ոտքին: Ու կ'ընէի բազդատութիւնը Արմաշի իմաստուն եպիսկոպոսին, Եղիշէ Դուրեանին հոգեղէն կազմին այդ մարդոց թելադրած տեսականին հետ: Դուրեան եպիսկոպոս մեծ ու սիրելի ղէմք մըն էր, որ քանի մը գեղեցիկ շնորհներու բարիքը խորանարդած էր ուղեւով թէ ակամայ, հոգ չէ հարցը, ու հաճոյքով ենթարկած իր դժուարահաճ իմացականութիւնը սա ուղարկեցին: Այս դարու սկիզբը, ուր եւ տարի մը մօտիկ ըրի գինքը, Եղիշէ եպիսկոպոս Դուրեան փառք մըն էր: Մաթիկէն ետք միայն ինծի կարելի պիտի ըլլար այդ ամբակառոյց յղացքը ենթարկել վերլուծման: Հոս չունիմ միջոց այդ վերլուծումին զուգարը հաշուեկշիւելու, ուրիշ տեղ մը անոր նորմիւրած ըլլալով բաւարար էջեր^(*): Կը բուսականանամ հոս արձանագրելով առաջին իմ Հիասթափումս իմ մեծ ուսուցիչէս, դեռ այդ օրերէն: Բանասէրները արժէքով մարդեր են անուշտ, երբեմն շատ մեծ նոյնիսկ, պայմանաւ, որ միմալ չըլլան, ըսել կ'ուզեմ՝ մատաղ ուսանողութիւնը մարդելու աւարտէին մէջ միջոցէպէս չդառնան եւ մեռելներու գիտութիւնը, իրենց կախարդանքով դերադաս չընծայեն ողջրուն գիտութեան, այսինքն՝ արուսիուն կեանքին պարտքերուն: Զիչէ է, որ արձաշական վարդապետները, ուսուցիչները աղէտներու առջեւ չտկարացան ու մեռնիլ գիտցան մեծ արիութեամբ: Բայց 1896ին, մահաւանդ 1915ին, այդ արիութիւնը պիտի չպակտէր գրեթէ մեր բոլորին...

Փողոցները պառկելով ու գիշերները բեռնակրի աշխատանքին յանձնառու ուսանողը, ձեռնարանի մէջ արտառուչ ուսանող մըն էր, որ իր գրգռողին աւանդութիւնները ահա դործնուցէս կ'արդիւնաւորէր, իր ծննդավայրէն հազարաւոր փարսախներով հեռու անդերու վրայ իր փոքր անձնաւորութեան հսկայ փառքը թուաւ անելով (պտըպցինել): Ձեռն կրնար լայնեւ շատ, դէժ չեւտելու համար հոս զիսաւոր տարրերը այն վերլուծումին, զոր անիկա ըրաւ, շատ տաք, պերճ, հեթաթունակ շեշտով մը, անմարմնակամ իր շրջանէն մարդերը, մտայնութիւնները, ձգտումները, ընդհանուր, հասարակաց զգացողութիւնը եւ ուսանողի շատ մասնակի, շատ ինքնատիւ հո-

(*) Հիասթափումն արեւմտահայ գրականութեան (Արեւստաղէս սերունդ), Եղիշէ եպ. Դուրեան եւ Թորգոմ եպ. Գուշակեան գլուխները այդ գործին:

գերանութիւն մը խտացնող, յարգ, բայց յստակ տարազներով, որոնք ապրումին նպաստէն աշխարհ տիրաբար գիտեն օգտուիլ ու դիմանալ: Մօտ քառասուն տարիներ են անդեր այդ օրէն: Աւելի յետոյ, վաւերական գրողներու, առնուազն ստոյգ պատմողներու գրիչին տակ, ես տեսեմ եմ ճեմարանական յղացքին ամբողջ բովանդակութիւնը: Ստիպուած եմ հոս յայտարարել, որ Մաթիկին ինծի տուածը թուղթէն, յիշատակէն վեր վկայութիւն մըն էր, գրեթէ արուեստի գործ մը, որ ահա կը դիմանայ, երբ կը գրուին ուս տողերը: Վերը բոլի, թէ արմաշակամ մըն էի (եթէ երբեք մէկ տարուան իմ կեանքը այդ գպրոցին մէջ ինծի կու տայ իրաւունքը այդ որակակալին): Հոս կը խօսիմ իմ բեկումէս, որ ա՛լ յստակ է, տարիներ ետքը, նոյն այդ գպրիմանքէն: Հազիւ տարի մը առաջ ես կը բաժնուէի Արմաշէն, որուն «հոգին» Դուրեան սրբազանն էր, ինչպէս կը խօսէին ու կը գրէին քիչ մը ամէն տեղ: Կոմարծ Ակոյի քարայրին մէջ, ես թելադրութեան ճամբով, Մաթիկէն ինծի հանող գաղտփարներու ակոսն ի վեր փնտռեցի, թէ ինչ կը բերէի իմ մեծ ուսուցիչներէս: Անոնցմէ մէկը մեծ բանաստեղծ մըն էր ու միտքի մեծ խուզարկու մը: Ուղիղ գինովութիւն մըն էր ինծի իր մատենագրութեան հոյակապ աշխարհը, անոր կեդրոնին՝ իր սեղանին վրայ գլխահակ մարդը: Դուրեան սրբազանին դասերը չուրն իսկ չեն իր անձին: Դպրեմանքէն երկրորդ ուսուցիչը երկտասարդ վարդապետ մըն էր, խելացի, ճկուն, մարդերը վարող, աշխարհիկ շնորհներով եւ որ յետոյ մեր նուիրապետութեան բարձրագոյն ամբոճներէն մէկուն վրայ պիտի գոցէր իր աչքերը՝ իր բեւ Երուսաղէմի պատրիարք:

Այսօր ես իմ յիշատակները այդ տարուան մը շրջանէն: Երկուքն ալ անկարող եղան զիս հասկնալու, օտարելու իմ անհուն ծարաւը իր ճիշդ տեղին մէջ զգայու ու չգտան միջոցը զիս վար գնելու, մասա՛հ բլլալով, որ իրենց խնամքէն դուրս ես սահմանուած էի շատ մը խոչընդոտներու, թերեւս կորսուելու հետախաղաղ:

Ու անդի ունեցաւ անխուսափելին: «Վայրագ դեղացին», որ ես էի, կը դառնար իր տարրին, իր գեղին, քիթը հողին քսելու ստորնութիւնն իսկ գերադաս համարելով սա անհաղորդ մտքի վիճակին: Չէ՞ք հարցնեք, թէ ի՞նչ էր վճար 18 տարուայ պատանիի մը եւ Եղիշէ եպիսկոպոս Դուրեանին: Ողբերգական է մեծ մարդոց ակարութիւնը, չբռնելու համար ակարամտութիւնը: Իր հոյակապ մատենագրարանէն Դուրեան սրբազան ինծի կու տար անկարելի գիրքեր, բանասիրական, հմտական, պատմագիտական բովանդակութեամբ: Քրեմլիփցի մէջ աշտինչ վանքին տեղագրական, պատմական մանրամասն նկարագրութիւններով: Գեաթին անցնէին այդ ամէնը: Նեոեդի, կատաղած, գիրքերը երեսին ու արցունքով նայեցայ Ռոնանին, Սէնթ-Պէօրին, Թէնին, Չոլային բաժիններուն, ամէն մէկը քսանէն վեր հատորներով: Սրբազանը չէր հասկնար, թէ ինչու կուէր էի: ... Ինչ հարկ սա յուշերուն: Մարտի առտու մը ես ձգեցի վանքը ու դարձայ իմ գեղը:

Մաթիկ Մելիքեանեանց հիացում, հիացում, արըշտանք միայն ունէր ձեմարանէն: Ու առիկա տառապանք էր ինծի: Հիմա սա տողերը թափած պահուս սա թուղթին, այս ողբերգութեան մեծ բաժինը կու տամ մենէ վեր ուժերու, որոնք մեր պատանութիւնը բրին աշտին տրամահար, խորանահար, մանաւանդ անձրագիր: Մինչդեռ մեր երիտասարդ սերունդը թուրքիոյ մէջ կ'իյնար սուրի տակ, ազատուողները ճիրաններուն մէջն էին ազդամուղջին: Սահմանէն անդին ուրիշ սերունդ մը, որ արիւն չէր սեւած, կու դար ինծի ահաւոր փորձառութեան մը ծարաւով...:

Ձգելէ առաջ Մաթիկին ճեմարանական աշխարհը — ամէնէն քնքուշը

սա ազան աշխարհներէն — պարտաւոր եմ զիջիլ զբոն ալ զանգեղ հաս իր ժառին տարգութեանն, զոր անկեղծ համեմատութեամբ զքեզ յերկայացուց իրբն ժիշին նմոյ՝ զոր սերունդէն, զարմնական ու բարենորոգչական, ժանտանդ գիտութեամբ զորացման ազգակներու սպասարկու խորունկ աշխարհաշինութեամբ: Եւ զոր շնորհ զոր թաւին այդ յատկութիւնները անոր ժառին, երբ բազմապատկեր մեր բազմակութեան, շարութեան, կենսութեան: Անկեղծութիւնն եւ մեղադրեցի զգրեմանդ, որ ո՛չ միայն ինծի ունիւն էր արւած, այլեւ թողած էր զիշնայեցաւ ազգանք զոր փախի իրենց ժառանգէն: Յետոյ, Մաթիկին միտքը կը շահէր նորէն այդ բազմապատկութեան մէջ, համեմատաբար ձգնիմ ժառանգին, որ այնքան զոր տարբեր էր հարած, որքան անհրաժեշտ էր կրկնու համար այդ անհամեմատ, հակառակ դրոյն, որ այնքան ծանրութիւնները աշխարհներուն ու տարբերուն պատասխարւած կը հանդէպէին: Շատ յատկ է սա զգայութիւնը, զոր կարգ զոր ժառանգները կ'արբեցնեն իրենց շրջանը, զայնպիսի աշխարհակներէն: Մաթիկ Մեղիքեանեանց կը սպասարկէր իր գլուխին միայն: Իր ժառին ուրիշ պաշտաններ ժառանգին իսկ տարբերակ կու գար: Դէմքին ժառանգութեանը ուղղակի կը ջրախառնէր թիզ զոր հակառակ, լախ ու փառաւոր, զիշուն կէտը զէղի վեր ու եւ՝ զբաւառ: Ինչո՞ւ թափած էին ժառանգը, հարցուցինք իրեն: — Կարեւոր յանկի ածանց, — պատասխանեց զանգ պարգութեամբ, — խո՛ւ, ժառանգ ժառանգ չի:

Անչա՛ւշա: Ու այդ արքայական հակառակ շնորհներուն — անգրեղ պատգամ էր այն օրերուն հաւանի հասած զանկարանութեան անունով գիտութեան զոր, թէեւ կոմարծ Անային հակառակ ալ անկէինք իրբ հակափառ, քանի որ երանելի հովիտն այդ զանկար լերէ կը ու հակա՛ւ: Արեւմտեան միտքի մէջ ներկայացուցիչներուն ծագ հակառակութիւնը փառք զոր էր իմ պատանի պատգամութեան մէջ ու Մաթիկը այդ աստիճանութեամբ կը շահէր: Բայց ինչ որ ստաց զոր, ասիկա զայնութիւնն էր այդ հակառակ հակառակ աստիճանը ու այդ լերէ զանկար ներքեւ բացառաբար հար ու փայլուն իմացականութեամբ զոր: Թաղաւորք իշտի մէջ շէր բնական ու շատ պաշտաններ մէջ ժառանգը բնականն եւ ծառայած: Անոր միտքը մէկն էր այն հակառակիւս հըրաշններէն, որոնց լաւ կ'ընենք շնորհակցելով:

Այդ միտքը ամուսն էր շատ ուշագրաւ կարգութիւններով: Ամէնէն աստիճանաւոր յիշողութեամբ զոր, որ կը պատուէր ուրիշ բացառիկներէ՝ յիշատակներ կենդանութեան ժառանգաւորութեամբ զոր: Կան այդ ժառանգներ, որոնց պատմութեան ներգործական ազդում է եւ այ թէ չէլ զոր թաւ: Մաթիկ իր յիշատակները կ'ետեմի կտորներու կը վերածէր, պատմութեան ասեղծող ու տառով ալ շաղկաւոր: Յետոյ իրեն էր բացառիկ շնորհը զարմեալ յունչ յունչ, ժառանգի մասնում, զէղքէ զէղք լարեր նեանլու, արտաքինաւոր իրարու անհաղորդ իրողութիւններու մէջն: Կան իսկ շահ, համարիչ մերմեղումներ, իմաստասիրական քննութեան աստատութեամբ ու պատմութեան իմաստասիրութեանը արեւմտեան ձգող զապար միտմասութեամբ՝ հաւասարապէս սպասարկել: Բայց այսպէս խորհրդաւոր հրապոյր զոր էր իր ծագ զէղքերը, իր փաստին համեմատ, օգտագործելու իր գիտութիւնը, հետեւեցնելու ու համարելու իր ջրած աստիճանը: Այս յատկութիւնները, փարձառութեան բովանդակութեան զորքը կ'ընեն վարիչ, վարդաւ, ժառանգ: Մաթիկ Մեղիքեանեանց յեղափոխական զոր միայն կըցած էր ըլլալ տառայած: Իմ այն աստիճանի զատառանիւ մէջ՝ Մաթիկին աստիճանը զերազանց արժանիքներէն, քանի որ ինծի համար իմաստ ու անոր փոփոխը կը ժառանգէ մէկ. իմացականութիւնն ու յեղափոխութիւնը՝ հանճարին յատկանիշները, ժառ-

նաւանդ ինծի հիմնովին անծածոթ ընկերային հարցերու, իմաստասիրական դրութիւններու շուրջ Մաթիկին լայն ու արձակ ճախրանքները՝ նախանձելի գեղեցկութիւն։ Ու ամէնէն կարեւորը՝ խօսքը, անոր տենդը, առջը, միանքը, արիւնը, հեշտանքը, որոնք բոլորը մէկ կը թռնանային։ Նս լսած էի Նիդ-լէ Դուրեանի քարոզները՝ ինծի խօսքի գերազանց վայելքներ։ Դաշն, կա-նոնաւոր, թաւալուն էին բառերը բանաստեղծ եպիկոսոսին բերնին, բայց տխուր փաստովը ո՛չ միտք ըլլալու, ոչ ալ կիրք։ Մաթիկ արեւելահայ բար-բառը կ'արժեւորէր ու կ'աւելնար իմ հիացումիս մէջ իր պարունակութեան ու փառքովը։ Ամէն մէկ նախադասութիւն կամ յուշում կը փոխադրէր ինձ-մէ ներս կամ մտքիս մէջ գոց հերկ մը կը պատահէր։ Ու խօսքը, այս անգամ ընդհանուր, պատգամ էր 1900ի մարդոց համար։ Անկէ ասդին կարծես քիչ բան է փոխուած աս հանգամանքներէն։

Մաթիկ Միլիքիանեանց այլապէս կը տղաւորէր, խօսքի շնորհներէն անկախաբար, հարց մը մէկ հարուածով բնդդրկելու, վերլուծելու, կրկին համադրելու ու գործողութեանց հետեւանք մը եղող նորոգելու շատ սահուն տուրքերով, որոնք նպաստը կը վայելէին իր մասնակի կշռականութեամբ մը օժտուած հազագին, ուրկէ բառերը կը ծորէին քաղցր, բայց արու ու ամ-բող, իր շատ զարգացած շունչին, արդիւնք՝ իր թափառական կեանքին լեռնէ լեռ, Վան ու Սասուն, յաճախ երէի մը նման խուճապահար փախու-տով, մարմինին ընդհանուր ճղճիմութիւնը լայնօրէն հակակշռող ցուրի կտրծէն երբ կու գար գուրս։ Այդ շունչին երկարութիւնը, համատարու-թիւնը, ընդգիծահար բանի մը նման քեզի դպիւր թերեւս կը խոստանային ապագայ մեծ վարիչը, meneur, բառին ետին պզտիկցած մեր շատ գիտցող վարժապետներէն, բայց որ կրնար ետեւէն հազարներ քաշել...։ Այդ յա-կութիւնները կը գործածէր անիկա միշտ իր քնզին ի նպաստ, որ առնուազն մեր ժողովուրդին ազատագրութիւնն էր եւ սովորաբար մարդկութեան եր-ջանկութիւնը եւ բնկերմարական բոլոր փայլուն ու տրամօրէն հերքուած ե-րացիները։ Անցյուցէք երեւակայելու նոյնքան աւաւոր դիւրութիւն մը, ե-րազ մը ձեւելու, հազնելու, զայն ժորթի մը պէս իրր բնելու, նոր բառով մը իւրացնելու գրական ալ բնկալութիւնը։ Ու այս ամէնուն մէջէն այս ամէնը իրագործելու անհաւատալի բնականութիւն, պարզութիւն, որոնք երբեմն ի-րական, աւելի յաճախ սոփիստութեամբ, վարժ ու անմեղ միամտութեամբ մը կը քողաւորին ու կը վերածուին շնորհի։ Այս մասնաւորները անշուշտ այնքան յստակ չէին իմ մտքին, որքան հիմա։ Բեմերու վրայ անկէ՝ ետք տրուեցան ինծի շատ-շատ պատեհութիւններ տեսնելու մարդեր, որոնք նոյն այդ շնորհները առաւելաւ աստիճանով մը կը պարզէին, եռանդուն, գզրը-գող, բայց խորքով այնքան աղքատախնամ։

Ըսի, թէ հազիւ տարի մը կար վանքէն հեռանալու։ Ըսի, թէ ինչ կը բերէի այդ շէնքէն ինծի հետ։ Բայց չրոի, թէ սորվելու տենդը որքան զրժ-բոխտ ճակատագիր մը ունէր իրագործելի։ Ձէի կրնար մտքէս հեռացնել վերջին տեսարանը՝ Դուրեան սրբազանի մատենադարանին մէջ տեղի ունե-ցած։ Պատուական այդ մարդը գործոված էր վճռական որոշումին վայրա-գութեանը դէմ, վանքը ձգելու, քանի որ ինծի սպասող աշխարհը ան կը ճանչնար դարձանալի յստակութեամբ։ Պիտի չհասկցուէի ու պիտի հուած-ւէի։ Գիթո հողին պիտի քառէր, անօգուտ այդ նուաստութիւնը դատա-պարտուած էի հանդուրժելու։ Պիտի այրիանար միտքս ու գրելու երազին ցանկութիւնը պիտի ցամքէր նման տունկին, որ կ'աճի աւելնէ գուրկ։ Բոլոր այս պատահականութեան դէմ իմ կեցուածքս անսասան էր։ Պիտի շինէի միտքիս ճամբան, յետոյ՝ միտքս, յետոյ՝ արուեստներու սպասը, իրեն

սկսւ, բայց մոռնալով, որ զուրկ էի զինքը պաշտպանող պայմաններէն:

Մաթիկ Մելիքխանեանց Ճեմարանէն Մոսկուան ըրած էր տառնց այս տաղնապին: Անիկա, մեծ այդ քաղաքին մէջ, սորվիր էր օղէն ու ջուրէն, առանց կաթիլ մը նոխարտինքի ու քրտինքի, նման թիթեռին, որ կը թռչի, կը հասուննայ: Իրեն անծանօթ էր մնացած դժուար, ծանր, դանդաղ, հասկերտեալ ուսումին, աստիկ-աստիկ, ասեղի ծայրով անհրաժեշտ յուսարեկիչ տաղնապր. զապափարի, ընթերցումի իր արագութիւնը, իր ընկալչութեան լայնքն ու խորութիւնը, իր միջոցներուն առատութիւնը՝ գիտական իր պատարասութիւնը զինքը կը պաշտպանէր սա մարդին վրայ, ամէն քարի, ժայռի, հողի երանգի համար գտնելով հաշիւարհէ մըն ըսելիք, բոլորն ալ նոր ինծի համար, որ իր տարիները վատնած էր զրաբար լուծելու ի բայ Ղուկասի կամ Մատթէոսի աւետարաններուն մեկնութիւնները ընդօրինակելու: Կանխահաս պատանի մըն էի, բայց շուքն իսկ չէի արժեք այդ ուղղութեամբ Մաթիկին: Աւելի յետոյ պիտի սորվէի, որ քննութիւններու եւ դասարաններու առաջինները կեանքին մէջ տասներորդները կու տային յաճախ: Հակառակը ունի նմոյշներ զոնկ քանի մը մեծ մարդերու, որոնք իրեն անընդունակ փտարուած ըլլան դպրոցէն, ապագային կոչուելու համար... Զօյա մը կամ Սփէնորը մը: Ձէի կրնար, կրաի կուշտին ծուարած սա մարդը՝ զլուսիւր բոցէն դատել, բառերու միզամածային պատմուհանէն, տեսնելու համար զայն, այսինքն՝ ինծի չափ թշուառ, ինծի չափ անապահով, իր նաւը յանձնած փոթորիկին, իր կեանքը անուրդի հանելու իսկ անկարող զոնկ իր ընկերներուն նման, որ վարր, Մասնոյ սարերուն վրայ մեռնելու համար առնուակն կապար մը կ'արժէին թուրքին պիւսնէին, մինչդեռ ինքը — կասկած չունէի այդ մէկ նախազգացման սառցութենէն — հում-հում բղբաբուր պիտի թէկուզ օրը իրիկուն չեղած, եթէ թուրքերը հոտն առնէին իր անուակին: Դժուար էր Մաթիկին զառաժեշտ դէպի մեր կողմերը ենթարկել իր կանխահասութեան, իր ուսանողութեան շատ փայլուն ամառ: Դիտողութիւններ, բառական ստուար, կը հաստատեն այս կարգի գէշքեր, իմաստի կրկններէ: Ոմանք քսանին շահած՝ իրենեւ զմայելի, բայց անվերադարձ նախախայրէ մը կ'ապրին, յորդ ու փարթամ, ու կը սպասեն ինչ որ քսանին յաջորդ քառասուն տարիները կը վերապահեն մարդոց մեծ մասին իբր փթթում, ծաղկում ու քաղցրացին պտղաւորում: Երբեմն մահը անփոխարինելի իմաստութեամբ մը կը միջամտէ՝ խնայելու համար սա շողարմակ, զցողաթարմ զարուհիին՝ ամօթը երաշտ ամառին ու ստերջ աշունին: Անոնք, այդ զաննարեղձ տղաքը կը փակուին, կը կնքուին քսանի գուռներուն, իրենց հեթիաթը ձգելով մեր կարճ հիացումին: Ուրիշներ ու շատեր են ասոնք, պիտի տառապին յարմարելու համար մեր գիտցած կեանքին, լայն, խորատորոտ, սեփ սեւ կեանքին ու ասոր հաղարհազար խութիւնը, որոնց օանդուխովը կը քսանք, պիտի քսանք դէպի մեր սեփական անդունդիկը, մեր փոքր: Ո՛վ կոչուութիւնը, վրեպանքով գառնակարան տրամուրթիւնը, չորս պատերուն արքայութեան (գրասենեակ) վարժուած անխուսափելի դերութիւնը պատահութեան սա պսակաւորներուն, որոնք փուշ պտակն իսկ պիտի չձգեն իրենց ճակտին, սուղուելու համար, անդարձ, մոռայլութեան, միջակութեան ծոցը...:

Ձգելէ առաջ սա փոքր փախազիծը ընկեր Մաթիկի ուսանողական մեծ տուրքերէն, մաս մըն ալ բան՝ իմ ապաւորութիւններէն անոր հաւատաւոր, անխուսափելի գեղումի մասին, միշտ կազմ ու պատարաստ, դիւրին, զործնական (maniable) տարագործուած (թող ներքուի այս բառը) ներածուած ու բանուած ազրանքի նորութիւնը, առատութիւնը, գիւ-

բաժանորդի գինովը: Այսպէս է, որ այդ դատումները կը ջանային ներկայացնել Սերգեյանականացիներ, այս դարու սկիզբին, իր նաւթի իշխաններուն ահաւոր ասպարադուրովեամբը ու թանձակոտոր ախորժակներովը, իր եկեղեցականներուն տմոյն, անգնեղելի անհոգութեամբը, երբ ունեւնէն չըզթայակապ, բայց անկէ հալածուած, աղօթելու սահմանուած, բայց պետական պաշտօնեայի հողերանութեամբ: Ո՛չ գրող, ոչ ալ սորվեցնող: Ո՛չ ժողովուրդի մարդ, ոչ ալ Աստուծոյ: Մաթիկ գորչ բառեր ունէր ինքնուրոյն, իր գահակալին, գոր կը ներկայացնէր մեծ յեղափոխական, բայց յորովայնէ ընտրեալ տնանկ մը իմաստէ: Ու կը դատաւարտէր միտքանութիւնը, որուն զարգացած միտքիւնները կ'արատաւորէին եկեղեցին ու հին տիպարները զայն կը պահէին ծիծաղելի: Ու տակաւին այնքան բան, ինքի համար բոլորովին նոր, հակապատկեր իմ գիտցածներու: Այս բոլորը, անփոփոխ կանգունովը իր սորվածներուն, կարծրացման մէջը իր համոզումներուն: Այսպէս կը ներկայացնէր նաեւ Տաճկահայաստանը: Թիֆլիսէն Առանա մէկ էր նայուածքը: Ու կը հաւատար, թէ իր ժողովուրդը ճանչնալու կատաղի տարփանքը ուրիշ բան չէր, եթէ ոչ պատշաճեցումը իր գիտցածներուն, բոլորն ալ փորձելի, փորձարկելի մէր հայրենիքին մէջ, գիրքերէն վեր ու գութը, տեսանողի իր խակ եռանդը բանակաւազնեղաւ: Անփոփոխ իր մասնութեանէն ալ, քանի որ իր տեսածներէն առաջ իր ուղածները կը ժանէին գորչապարի մը, իր ուղեղին տակ: Ու ամէն զէժք, ամէն քաղաք, ամէն իրականութիւն իր մէջ կը վերածուէին գիշերաչրիկի զգանութեանց: Պէտք էր լսէր իր բերանէն այլակերպումին առ քերթուածները: Վեհապառը (Որիմահան) չըբանակող բազմիմաստ եպիսկոպոսները, այդ աղջին ընդմէջէն կ'ըլլային միջին դարու պորտաբոյծներ: Ու գրողները՝ նոյն լայնէն դանաւոր, զանակորոնք, զվաճառուած, զփութած արարածներ: Կատէր Շիրախանգազէն, որուն փառքը կը ճոճուէր Աւարանեանի նորոգելիք համարին ընդմէջ: Ու երկար է պատմել արեւելահայ գրողներէն իր վճիռները, որոնք գիտութեան ուսանողի մը բերանէն գին կ'ընէին շուար, ո՛չ թէ իրենց այլանդակութեամբը, այլ այն մասնաւոր վստահութեան համար, որով կու գային այդ կարուկ դատաստաններէն: Ոչ մէկ վարպետի օրօք զանոնք ուզող: Ընկերային մեղաւորներու խորաբմառ պահանջ մը թելադրէին էր այդ ամէնուն: Ու բացի Թումանեանէն, միւսներուն համար զարմեալ մէկ էր ու անփոփոխ իր դատապարտութիւնը: Մարգերէն գութը, այս դարասկիզբի ընկերային խմբումները, մեր յեղափոխութիւնը, պահպանողական-ընկերվար ճակատաները կը գունաւորէին նոյն գորչ յատակին իր գառնութեանց ու կերքին: Եղած էր անոնց հետ, շարաթներով, ամբողջով, բայց ինքզինքը ի վերջոյ հիւրի մը յափ օտար, անկարելի զգալով: Կը հաւատար, թէ կը ճանչնար զանոնք, ամէն մէկը իր պարտքին անցուցած իր շահերուն պիտակը, առ ու ան հոռոտքին փերման: Ու հաւանաբար կը խորէր ինքզինքը, տարուելով տպաւորուելու իր գիւրտութենէն, երբ կ'անցնէր ոտառառուած, անկէրո՛ մէր չըջապարտ մէր մասնախտակին վրայ առանց ամուր սեւեռելու: Ասոր համար է, որ պիտի տառապէր, մէր տպաւորութեանց վրայ խորահաւատ, բայց մէր գաւածին առջեւ ալ կործանած: Անո թէ ինչ կը նշանակէ մարդկութունը քովէն ըլլալ անցած, կարծել՝ զանոնք ճանչցած, հասկցած ըլլալ ինչ-պէս քու մասնակող, ու դարհուրել, երբ տանցմէ մէկը ունիս տնապատկի կերպարանքին մէջ, քեզի դաւող: Անճախա՞ն կեանքով, իրենք իրենցմով հարուստ տիպարներուն ճակատագիրն է ստիկա: Ուրիշները կ'արժեն այն շափով, որ շափով կ'արժէ զանոնք իր մէջ ընդունողը, այդ պահուն: Բանաւտեղծներուն (բառը չունի նկատի ոտանաւորին պարզ կամ փարթամ գոր-

ծաւորները, այլ այն խեղճ հովիտները (*), պատրանքով հարուստ արարածները, որոնք ճակատագրուած են այդ պատրանքները ապրելու, կիներուն շուքովը, ու ասոնք երգելու յիմարութեան, զանոնք վայելելու թանձր իրապաշտութիւնը ձգելով ուրիշներու՝ վերապահուած սա դժբախտութիւնը աղէտ է, երբ կը տարածուի գործօնութեան ալ մարդոց, որոնք անկարող կ'ըլլան կրելու զոյգ պատրանքները, — կեանքը կրելու եւ զայն հերքելու:

Մաթիկ Մելիքխանեան կեանքէն այնքան բան կը հասկնար, որքան... Պետրոս Գուրեանը հարստութենէն: Առատ էին իր բերին մէջ լաւը, պատւաւանը, վատը, կեղտոտը, ամոնագոնը, շահամուլը, ազգաւորը, դաւաճանը: Բնական հոգումով: Խօսեցուցէ՛ք մարդերը, փոյթ ունենալով երկնումները — բառերէ — նոթերու: Մօտիկն է՛ք այդ զանկին վրայէն զանոնք ճանչնալու: Վերի բաժիրը միայն բաւարարեալ բնակիչներ չեն, այլ բոլոր Մաթիկներու ու հանդուստէն բոլոր երիտասարդներուն համար՝ ճարմանդներ, որոնք պատրաստ պիտակի մը դերը կը խաղան, ասոր ու անոր ճակտին կամ կոնա-կին փակցուելէ:

Այդ օրերուն, այսինքն՝ «Քանչի՛ք ձե՛մարանը» դեռ չգտած, պատանի Մաթիկը յեղափոխակա՞ն, ինչպէ՞ս տեսնէ աւելի հաջը, մեր երկրորդական վարժարաններու մէկ քանիին վրայ: Կեղրոնականը (Պոլիս)՝ յեղափոխութեան վառարան յայտարարող կարծիքը աւելի էր, քան կարծիքը: Օտանի տիպարը (Մապլիար) չե՛մ կրցած նախողալ Մաթիկին մէջ, որ աւելի պարկէտ էր, քան յետաւորին միւս դժբախտը, համալսարանէն ինկած, մէկ-երկու տարի անոր սեղանները, սրահները ձանձրացնելէ հաջ ու ինկած՝ նոյն տանն տրորումին, որ մեծ գաղափարներուն գոհն էր, այս դարուն սկիզբը, մեր ուսանողներուն: Մեր գրականութիւնը (Առանձար, Օտան, Պարթեւեան, Բաշալեան, Արփարեան) ըրած են սեւեռումներ տիպարէն, որ այդ ցնիւն պիտի մզուի իր յետին փրկութեան սրբազան մրցանքին, մանաւանդ Կոմկաս, Ազատութեան մատենադարանին բոլոր պրոլիւրները կարժիւր մատրտով ներկած ու վերծանած, փեճելով անոնց պարունակութեան վրայ ինքը իր շուքին հետ, ու պարպելէ հաջ իր ուղեղին անոնց մթերքը, իջած կրկէս իրրեւ գործի՛չ, դիւղերու ապահար աճրոխներուն: Կրնար այդ տիպարին հետեւ ցաւագար մը, կէս խենթ մը, աղտահար ու ազնուակոն երիտասարդ մը բնակել: Մաթիկ Մելիքխանեանց ուրուային Փանջունի մը չէր:

Ու չէր անիկա, անշուշտ, նոր երիտասարդը, վճռականութեամբ, բարձրութեամբ, տառապանքով ապնուացած, որ կը նստէր ահա իմ կուշտին, կովարծ Ակոյի քարայրին մէջ, խանձարուրուած հայոց հայրենիքին խորհրդանիշ գրօշով: Մեմէ կը մեկնիմէ մեզմէ, գմեզ կը պանքիմէ, բայց մեր վրայ տեղ բանալով բոլոր այն ներութիւններուն, որոնք կեանքին ծուկները, մզեղները ինչպէ՞ս կը թափն մեր վրայ, ճակատագրին հոսելիէն...: Բայց էր, միշտ այդ Մաթիկը, իմէզիմէր, այդ հոյակապ օրորանին, ձե՛մարանին մէջ (անոր շրթները խռովէ, հիացէ կը թրթռային, երբ այդ բառը կ'արձակէր դուրս, վերափոխման սկիզէ մը փրթած սրբազան բանի մը նման) աշակերտ-յեղափոխակամը, իր այժմու բառով սւտապիտը, որով կը տարագրուի լման կարգ մը, ա՛ն՝ որ հազիւ ազատուած փողոցէն, հացին ու տանիքին

(*) Հովիտները — արեւոյ՝ որ կը փոխաբերէ ամէմ ազգեցութեանց ենթակամները, որանց ազգիկն տախտակներ ըլլալիմ քաւցած:

տաղինապէն կրկնահարած բլլայուն չափովր, կը լընայ մէկէն, կը հաւնի ինքզինքը, առատ ու դաժան արժեւորմամբ մը, ու կը յոժարի իր բարեհաճ զոհողութիւնը տարածել իր ազգին վրայ, ձրի ուսումը խղճահարութեան մը չվերածելու համար. կը հաւատայ բարիքը վճարել տոկոսով, կը զինաւորուի ազգին կարիքներուն, ինքզինքը հանդերձելով առաջատու ու առնար արդարութեան, ազգերու եղբայրութեան ու երջանկալից փրկութեան նորագիր տասնարանները ուսին...

Ուրիշին պատմումէն դէպքեր կը սեւեռուին, բայց զժուար է կեանք նուաճել: Ձեմ կրնար Մաթիկէն փրցուած սա կտոր-փրթում տեղեկութիւնները իր աստղծ գործածել վճռական կարկառի մը համար, որ յուշարձանէր անոր սերունդը, — դատափնտուած, գժբախտ, կեղբոնագուրկ սերունդ, որ հիմա, Սփիւռքի հայերու թշուառ յուսախաբութեանց համար քառութեան նոխազ ծառայել շատ առաջ, է՛ր, իր կարգին, մէկը մեր անլամանդազ գեղեցկութիւններէն: Մեր պատմութեան դիւաններուն, ժենք քիչ անգամ կը հաստատենք — նուիրման մէջ սա զայրացնումը, սրբազան խնթութիւնը, երազը եւ զգայարանքներու միաթիւնը, մեր անտասն հաւատաւորութիւնը, որ կ'ազատէ մեզ աւերածի հզօր տղակներէն. հոգեկան մեր ուժանութիւնը, զոր յոռոտապէսանք հասարակաց ծաղրին ծածոն յայտարարելով: Մեր դիրէն է, որ այսքան ուժ, ազնուութիւն ու արիւթիւն ո'չ միայն շարժանացան արդար արդիւնքին, այլեւ քաղաքական դէպքերու զատարարութէն դուրսուած մեզի դարձուցան ալանդակեալ, ծաղրանկարային ու տհաւոր չափով մը զղուելի: 1900ին, մեր միտքը, ամբողջութեամբ, ըսել կ'ուզեմ՝ երիտասարդ տարրը այդ մտայն ձգողութեան մէջ կը տուայտի: Պառակտուած մի միայն տկարութեան հետեւանք մը չէ, այլեւ ազգակ մը մեծութեան, պատրուակ՝ որպէսզի յօրինուին մեծութիւնները: Յաջորդ տասնեակը, մինչեւ 1921, կնիքին տակն է մարդոց, որոնք Մաթիկին պատմութիւնը ըրեր էին մեր կեանքին սմէնէն խոռով, արիւնամած ու փոփոխակ երկիւնքը հերկուած յոյսին եւ մտայն հիասթափումներուն կապոյտ ու սեւ երակներովը, երկու Հայաստաններուն ալ վրայ: Ձեմ գիտեր, այն պարագային, երբ ազէտը խնայած ըլլար Մաթիկին, պէտք կ'ընէր անիկա իր սերունդը համադրել, քանի որ այս վէպը զրուած օրերուն այդ սերունդէն խլակներ, հրաշքով ազատուած մէկ-մէկ անկիւն ինքնակորոյտ, հազիւ կը յաջողին փշրանքներ փրկել այդ ահաւոր անցեալէն: Ընկեր Մաթիկ ինծի տուած անուններ, բոլորովին նոր, որոնք այն ատեն դեռ չէին սրբացած, այսինքն՝ չէին տարազըրուած այժմեան աստուածացումին, ինչ որ ընթացիկ քարքառով կը հումանիչէ զուրա մոռացումը, — ճակատագրական շիրմաքար՝ բոլոր գործօնութեան, հերոսներուն, երբ կը քաշուին կրկէսէն, ուրացումէն կրծուած կամ զրկանքէն անգամայն, դէպի հանգիստը հողին, երբեմն դժնդակ բախտովն ալ անէծքներու գրադարաններ բարձրացած զգալու իրենց սակորներուն վրայ: Ընկեր Մաթիկ անուններ տուաւ, բոլորովին տարբեր մեր դիտցածներէն: Բայց չտուաւ, չկրցաւ տալ հարազատ տեղը, մատաղ հոգիները խմորի պէս կակուղ եւ րնկալուչ ընող անորակելի այն շունչը, որով երգահանուած էին աւազներ իր սերունդին, Սփիւռքին այժմեան ակնոցով՝ խեղճ, յիմար մարդեր, բայց երեսուն տարի առաջ, հսկաներ, բոլորովին նման հեքիաթին դուներուն: 1900ին, զրեթէ պատանի իմ միտքը շունչը ուժը անցնելու Մաթիկին բառերուն մօտէն, խոռովքէն անդին, ուղղակի հաղորդուելու համար այդ ողիին, որո՛ւ մէկ տարբերակն էր սակայն մեր ապրածը, այնքան պարզ, ջարդերէն առաջ, ազատութեան երդարաններով ու վտանգին անիվական սարսափովը գոյաւոր, մեզ ընելով փոխն ի փոխ նկուն ու հերոս: Մենք չէինք

տեսած աւագները: Պոլիսը չափ մօտ էր ու արքայութեան շափ ալ հեռու: Ու հայ յեղափոխութիւնը մեզի համար մօտիկ թուրքն էր, աւագն ու վարսպետը:

Դժուար է վերլուծումով, ան ալ յետահայեաց, լրիւ պատկերել ինչ որ մեր պատանութիւնը — իմ սերունդին կ'ակնարկեմ — առած է, իբր ժանդ, անկարող ասելութիւն, անտարազելի սուգ այդ վայրագ ժողովուրդէն, զոր մեր ջիղերը, խելքը, մեր սիրտը պարտաւոր եղան միասնաբար կրորելու ո՛չ միայն անցնող դարու վերջերուն ու ներկային սկիզբը, այլեւ ամենայն հաւանականութեամբ աւելի քան հինգ-վեց դար: Մենք կը ճանչնայինք զայն, մորթիլու, անպատուելու, կողոպտելու արարքներուն մէջ ամբախաբխի, այնքան ինքնաբաւ: Մտայն անեցիկ եմ իմ պատանի բոլոր նեարդներուն, գերազանցապէս թուրք քաղաքի մը մէջ: Երեսուն տարիներ, 1915էն ետք, կը մնան անկարող իմ ներսէն պուտ մը բան կոտորելու, այնքան թուրքը իրաւ էր իմ զգայնութեան վրայ: Ու մի՛ աճապարէք պատմութեան ուրաւականները շարժումի հանել: Մի՛ աճապարէք զասական թեմաներ արժեւորել, որպէսզի այդ ժողովուրդը ըլլայ բացատրելի, առնուազն՝ հասկնալի մեզի: Կը ձգեմ օտարներուն ներկուած հիացումը: Այն գերմանը, այսօր իմ աստատակէր, որ կը յաւակնի այդ ժողովուրդին մէջ ազնուականութիւն, քաղաքական իմաստութիւնը արժեւորեցին անոր ծոցը տեղալով աշխարհի բոլոր բարեքները: Ու հանգիստօրէն կը մտածեմ բոլոր այն ազգերուն, որոնք ո՛չ միայն կարճ տեսնեմ, այլեւ բռնի սխալ տեսնեմ՝ իրենց առ ու ան հայրենիքուն լոյսովը լուսաւորելով պատմութեան գերազանց արատը, որ այդ ժողովուրդն էր, է՛ր աշխարհի երեսին:

Կը դառնամ մերկններուն:

Կը ճանչնայի՞ն զայն անոնք, որոնք Կովկասէն կամ Զուիքերիայէն, Ֆրանսայէն կը վարէին մեր հողիները, մեր ճակատագիրը:

Ահա ողբերգական հարցումը, զոր բերեմ եմ քառասուն տարի առաջ՝ իմ ժողովուրդին ճակտի գիրը նժարի բերող: Այդ մարդերէն հերձուած մը ինչպէս մեր կողմերը մոլորող Մաթիկը աշօքերուս առջիւ էր, անուշ, շնորհալի, յիմար, տաք, հաղորդական, բայց այն քիչ կեանքը ճանչնալու տարբական պարտքին մէջ: Այն օրերուն, իմ պատանի երեւակայութիւնս հիացումով հիւսեց անշուշտ Մոսկուայէն... Պրուսա տարածութիւնը իբր ոտայն մը ընկեր Մաթիկին ահաւոր հերոսութեան: Այն օրերուն, ես չունէի մտածանքութիւնը արեւելահայ գործիչին, քանի որ 96ի գէպերուն մեր կողմերը երեւցող տղաքը Պոլսէն, Ռոտտթոյէն, Պարտիզակէն, շատ-շատ Սեբաստիայէն, Կարինէն կը կրկնէին մեր կաղապարները: Սփիւտքի զալկութիւնները, ծիւրումները պահ մը կը հեռացնեմ դատումի դաշտէն, բերելու համար հոն, մինչեւ 1915 միտացող մարդերը թուրքիոյ բոլոր մեծ կեդրոններուն մէջ: Ատոնք, լայն չափով Մաթիկին երկրէն, չէին սեղմուեր նախատիպ կաղապարին ներքեւ: Իմ էջերը նեղ՝ արտահանելու համար տիպարը, որ 1922էն ետք շարունակեց գործել, իրիւս արեւելահայ գործիչ:

(Շար. 5)

Յ. ՕՇԱԿԱՆ

Վերջին տասնամյակը մեր գրականության համար դժբախտ ժամանակաշրջաններէն մէկը եղաւ՝ թէ՛ Հայաստանի սահմաններէն ներս եւ թէ՛ Սփիւռքի տարածքին: Հոգին դարձան շուրջ երկու տասնեակ գրողներ:

Հայաստանի մէջ՝

Ստ. Զօրեան, Ա. Գրաշի, Վ. Ալազան, Կ. Զարեան, Ն. Զարեան, Հ. Զարեան, Գ. Մանարի, Մ. Արմէն, Վ. Նորենց, Ս. Տարօնցի, Խ. Դաշտենց, Պ. Սեւակ:

Իսկ արտասահմանի մէջ՝

Համաստեղ, Լ. Գարմէն, Եդ. Պոյանեան, Ա. Երկաթ, Բ. Թօփալեան, Գ. Ճիգմեան, Շ. Նարդունի, Ն. Պէշկեպաշեան, Բ. Թաշեան, Շ. Շահնուր:

Երկու շարքին մէջ ալ մոռցուածներ կան հարկաւ, աւ մոռցուածներուն հետ՝ երեսուն գրչի մարդ, երեսուն՝ մեզի պէս փոքր ժողովուրդի մը իմացական տնդատանէն:

Ու եթէ պահ մը մտածենք, որ անվերապահ այս մեկնագներուն զգալի տակտը իբր վերջին խօսքը չէր ըսած սովորին, այն ատեն աւելի տարագրական կը դառնայ արձանագրուած կորուստին տարագրութիւնը:

Այս նոյն տասնամյակին, անհետացողներուն մէկ երրորդ թիւով նորեր յայտնուեցան արդեօք մեր գլխաւորեան մէջ: Հարցումին պատասխանը նոյնքան դժարին չէ:

Անցեալ տարուան ընթացքին ունեցեալ մեր ամսագրին մէջ յիշատակուած երեք նոր կորուստներ, թնեքանի մէջ հոգին յանձնուեցաւ Արամ Գառնէ, իսկ Հայաստանի մէջ՝ Արշալոյս Սարգսեան եւ Գումեղին Միսսեան, քնարերգուներ՝ Երեմի ալ, որոնք ատանց ազնուկի իրենց համեստ ուժերը նուիրեցին հայ գրականության, հաւաքական թէ՛ անհատական քննադատական հազարդիւով օգիտակի քաղթին:

Ի յարգանս ամեն յիշատակին՝ յաջորդ էջերուն ընթերցողին կը ներկայացնենք իւրաքանչիւրէն երկու-երեք բանաստեղծութիւն:

ԻՆՔՆՕՐՈՐՈՒՄ

Լինել մօտիկ ամենքին,
Մտերիմ, պարզ,
Գգուել, սիրել ամենքին
Օրերում այս...

Լինել բարի, ու երբեք
Վատը չլիշել...
Զվշտաճալ ո՛չ ռֆից,
Բախտը չանհիծել,

Անյիշալիք ու գթով
Փարուել բուրբին...
Արտասուել ու ծիծաղել
Այս չար օրերին...



ԱՐԱՄ ԳԱՌՕՆԷ

ԹԷ ՈՐ ՄԵՌՆԻ...

Թե որ մեռնի էս խեղճ տղեն,
Մի՛ հարցնե՛ք — ցանց ի՞նչ էր,
Սիրտը պէս-պէս տաղավ լի՛ք՝
Սրտին դռնած դաղն ի՞նչ էր...

Ինքը խնդուն, երգ ու կատակ,
Կատակի հետ լավն ի՞նչ էր,
Ուրիշներին միշտ յոյս տուող
Արեւ սրտին մահն ի՞նչ էր...

Արեւ ու մահ՝ սկիզբ ու վերջ,
Էլ է՞ն միջի դաւն ի՞նչ էր,
Իր ծնունդից մինչեւ իր մահ
Կեանքից առած համն ի՞նչ էր...

* *

Երբ չեմ լինի, աշխարհը նորից
Գարնան դառնալով կ'ազմվէ, կ'եռայ...
Կ'անցնես, ո՛վ անցարդ, իմ շիրմի մօտից,
Կը կարդաս մամռան սեւ փաթի վրայ՝
«Հեռու հայրենի արեւից, հողից,
Կարօտի երգը շրթներես մեռայ»...

Ա. ԳԱՌՕՆԷ

Բուն տնունով Արամ Բաղդասարեան: Ծը-
նած է Քաւրիչ, 1905ին: Նախնական եւ միջ-
նակարգ կրթութիւնը ստացած է Արամեան եւ
Քեմական Կեդրոնական դպրոցներուն մէջ: 1928-
ին կ'անցնէ Ճրոնես, ուր կը մնայ չորս տարի՝
ուսանելով եւ ուսուցանելով: 1932ին կը վերա-
դառնայ Իրան եւ տեղւոյն վարժարաններուն մէջ
կը վարէ ուսուցչի եւ տեսուչի պաշտօններ: Ա-
ռախէն դորենը ազգայրուած են Քեմանի Վեր-
ադադման ուսուցչին մէջ: Աշխատակցած է դա-
դութաւայ բաղձաթիւ Թերթերու: Հրատարակած
է հետեւեալ գործերը.

«Հրամանատար տղան», Քաւրիչ, 1924:

«Արա եւ Դամիրամ», Քաւրիչ, 1926:

«Օրերի երգեր», Լիւն, 1930:

«Արեւտես», Քեման, 1942:

«Ծաղիկներ», Ծաղիկներ, Քեման, 1942:

«Անմահման», Քեման, 1948:

«Անմահ ծաղիկներ», Քեման, 1960:

Արամ Գառնէն դրած է նաեւ արձակ էջեր եւ
մանկապատանեկան դրօշակներ, ինչպէս նաեւ
կատարած է զանազան թարգմանութիւններ:

Ունի հատորներու մէջ չմտած արձակ թէ
լափածոյ բաղձաթւ դրօշակ:



ԳՈՒՄԵԴԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ

Հոգիս քեզ մէկ անբասիր,
Ու մէկ չար է երեսում,
Ու ծայր չկայ իմ մասին
Կարծիքներդ երբեք՝ ուն:

Ո՛չ ուրիշին հաւատաւ,
Եւ ո՛չ էլ ինձ, ի՛նձ անգամ,
Վերցրու երգե՛րս կարդա
Երգերից դուրս ես չկա՛մ:

Ինձ նամակներ ես չգել,
Ինչպես վազը մայր հողին,
Սիրտս փարուած է եղել
Նրանց օսէն մի տողին:

Այժմ ամզամ իբր նրանք
 ինձ քո սիրո՛ւց են խօսել
 Ես կեանքն այնքան բազմեանց
 Ու գեղեցիկ եմ տեսել:

Մակայնը սրտիս մէջ պահած
 Անքի՛՛ծ, անքի՛՛ծ մի յուզում,
 Ես ուզարկո՛ւմ եմ ահա,
 Երբ դրանք ե՛տ ես ուզում:

Բայց չե՛ս կարող դու երբեք
Այդ նամակները վառել,
Այդ նամակները վազուց,
Վազուց երգե՛ր եմ դառն՛լ:

ԳՈՒՄԵԴԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ

Ինչպես է 1927ին, Միսսուրիի բանակումը գերազել:
Աւարտած է գերազել միջնակարգ դպրոցը, ապա՝
ընդունուած է Երեսանի պետական համալսարանի
էր բանասիրական բաժնին, զոր աւարտելէ ետք,
Երեսանի տարբեր դպրոցներէն ձէլ իջ զատա-
ւանագէ լեզու եւ զրականութիւն: Ինչպէս հիշանդու-
թիւնը իջ առիթն էր ինն հետեանալ տաղարկէն եւ
ձիւթթարուրէ միմիայն բանաստեղծութիւն գրե-
լով:

1956-ին, Եվսեպիանյան գրականության ամսագրին մէջ էլ տպագրւի Գոմեզին Մինասեանի առաջին գործերը, որմէ ետք պարբերական մամուլին մէջ լաճախ է հերկւայ իր ստորագրութիւնը, միւս բանաստեղծութիւններու տակ:

Հրատարակած է արևելա գրքոց հանդեսը՝ «Զրույց
սլաւոն հետ», «Դարերի հետ» և «Օրերի հետք»:

Անցեալ տարուան Յունիսի վերջերուն, իր
ժամը պուժող յուրին մէջ իջ կարդանք:

«Իր գրառագրեմի վրայ քոզել է նրգերի մոր
ժողովածուն՝ «Ի՞նչ ծագելիները» խորագրով. որն
այդպես էլ չհասցրեց յանձնել տպագրութեան»:



ԱՐՇԱՆՈՅ ՍԱՐՈՅԵԱՆ

Մնած է Սանդղրիւր գիւղը, 1923ին: Աւարտած է Լենինականի մանկավարժական դպրոցը եւ ուսուցչական պաշտօն վարած էր ծննդավայր գիւղին մէջ: Վարած է նաեւ պատասխանատու պաշտօններ՝ մայրապիւտի, պատկերասփիւռի թէ թերթերու խմբագրութիւններուն մէջ:

Ա. Սարոյեանի առաջին գիրքը լոյս տեսած է 1947ին, «Ռազմի խոնքը խորագրով: Այնուհետեւ, յաջորդաբար լոյս կ'ընծայէ հոր ժողովածուներ՝ «Համապարհներ», «Խաղաղութեան երբ», «Սարն ի վեր», «Աշխարհի մամբանքով», «Տափառամունւմ», «Քեզ կետ», «Իմ սիրտը», եւ այլն:

Վերջին գիրքը՝ «Համապարի ծառը» լոյս տեսած էր մահէն չէլ մը առաջ, 1974ին:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Հայրենի ծաղկի քայրը չըզգայի՝
Ինձ չէին յուզի ծաղիկներն օտար,
Թէ մեր երգերով չկախարդուէի՝
Ձէի երազի ծաղիկներն օտար:

Ձեր լինի աշխարհն այսօրն հմայիչ՝
Թէ չսիրէի հողն իմ հայրենի,
Արեւի խաւածն էլ կը թաւար ինձ քիչ՝
Թէ սրտիս չիջմէր շողն իմ հայրենի:

Իմ հայ ժողովուրդ, քեզ չսիրէի
Այսօրն զերմագին, այսօրն խանդավառ,
Ու իմ կրծքի տակ քեզ չունենայի,
Սիրտս չդադար թեկորիդ համար,


Ես չարիշներին ինչպէ՞ս սիրէի,
Կեղծիք կը լինէր երգուէի թէկուզ.
Դու իմ աչքերն ես, երկիր հայրենի,
Աշխարհին մայրդ աչքերը հոգուն.
Իմ սիրտն ես, սիրտը, արեւս վկայ,
Քեզնից քանկազին աշխարհում չկայ:

Մերք թում է, թէ իմն ես դու՝
Իմ Արարատ սարի մեմն,
Ու երդում եմ, թէ իմն ես դու՝
Իմ Արարատ սարի մեմն:

Բայց երբ սրտով սիրակարօտ
Ձեռքս եմ մեկնում քեզ, իմ անգի՛ն,
Դու դառնում ես ամիստ, հեռու՝
Իմ Արարատ սարի մեմն:

Երագով ես գիրկս գալիս,
Երագով եմ փարում շուքիդ,
Քո կարօտն է սիրտս վառում՝
Իմ Արարատ սարի մեմն:

ԱՐՇԱՆՈՅ ՍԱՐՈՅԵԱՆ



ՏՊԱԳՐԱԿԱՆ ԴԱԻԵՐ...

«Բազմից» 1974 թվականի թիվն մէջ տրուած Սուրէն Սահինեանի նշմարէն ընթերցողը որոշ գաղափար մը կազմեց անշուշտ ամերիկացի երբ-տաւարդ գրողներու զօնդակ բախտին մասին: Կը թուի, թէ կացութիւնը աւելի վաղուն չէ նաեւ միւս երկրներու նորայայտ աղանդներուն: Ահաւասիկ քանի մը տարագ տեղեկութիւններ ֆրանսացիներուն մասին:

Քանի մը տարի առաջ, Նիքոլ Պուլանժէ Վը մուկէլ օպերովաթէօր»-ի մէջ կը պատմէր հետեւեալը.

«Երիտասարդ հեղինակ մը, ձեռագիր մը ձեռքը՝ մերս կը մտնէ Փարիզի մէկ հրատարակչութեւն:

« - Օրիորդ, - կ'ըսէ ան հիւրերը ընդունող պաշտօնեային, - բերած եմ վէպ մը: Ի՞նչ պէտք է ընել:

« - Շատ պարզ է, պարս'ն, - կը պատասխանէ օրիորդը, - պիտի բաւէր ձեռագիրը հոս ձգել, սպասել վեց շաբաթ, որմէ ետք պիտի ստանանք մերժողական մամակ մը»:

Կ'ըսեն, թէ 330է աւելի հրատարակչատուններ հաշուող լոյսի քաղաքին մէջ աճէն օր կը կրկնուի այս տեսարանը եւ հրատարակիչները աճէն տարի տասնեակ հազարաւոր ձեռագիրներ կը մերժեն:

Տարին շուրջ 24-000 անուն գիրք կը հրատարակուի ֆրանսայի մէջ, բայց հեղինակներուն մեծ մասը իրենց գրիչով չեն ապրիր, կը ստիպուին ընել երկրորդ գործ մը: Վնասը 80 առ հարիւրը, օրինակ, փրոֆեսէօրներ են: Քումպրովի, որ իր առաջին գրութիւնը հրատարակեց 1932ին, հեղինակի բաւարար իրաւունք սկսաւ ստանալ իր մահէն քանի մը ամիս առաջ միայն: Տասը գրողին իննին կացութիւնը անկայուն է եւ ասիկա կը վտանգէ ասպարէզին մէջ երկարօրէն մնալու անոնց քախտը, օրովհետեւ ոչ ոք գրական գործունէութիւնը կը ճկատէ «իբրաւ» պաշտօն մը:

«Գրելը շան արհեստ է», կ'ըսէ անոնցմէ մէկը, «Գրելը պոռնկանալ է», կը գոչէ Եւրիշ մը: Վլասօր, ֆրանսայի մէջ, բանաստեղծի մը համար հետզհետէ աւելի կը դժուարանայ իր ձեռագիրը հրատարակել տալու գործը», կը գրէ բանաստեղծ Մարք Ալին, աւելի անգին յայտարարելով, որ «Երիտասարդ քանաստեղծ մը, ինքզինք կարենալ պարտադրելու համար՝ տաղանդէն

տելի պէտք է ունենայ համբերութեամբ և տոկոսաւորեամբ ամսասիւման կարողութիւն մը:

Տաղնապարսուր Հանգամանք մը ստացած է յատկապէս բանաստեղծութեան կալուածին մէջ: Քերականայի մէջ հրատարակուած բանաստեղծական ժողովածուներուն մեծ մասը, — կը գրէ Վլ. Մանուշի (4 Օգոստոս 1973) մէջ Վասիլի Ալեքսանդրով, — լոյս կը տեսնեն հեղինակներուն հաշւոյն: Բանաստեղծութիւնը, ամէն մարդ գիտէ, չի ծախուիր: Վերադառնալով ձեռքի պիտի չըսեմ, — կ'ըսէր գրողներու ընկերակցութեան քարտուղարը, Ֆիլիփ Տիւմէն, — բայց ան համրածանկօք բանաստեղծ մըն է: Դեհ, լաւ, ինքզինք գոհ կը զգայ, երբ տարին յաջորդի յիշումն օրինակ ծախել իր գիրքերէն:

Հրատարակիչները, որոնց մեռնէ է գիրք մը հրատարակելու, ցրուելու, արժեւորելու եղանակներուն ամբողջ մեքենան, կը նախընտրեն լոյս ընծայել Հոշակուած գրողներու երկերը, անյայտ տաղանդներու յայտնարբժան Համար իրենց անտարբերութիւնը ջանալով արդարացնել թուղթի, տըպագրութեան, տուժման և յարակից ծախքերու աննախընթաց բարձրացման պատճառներով:

Օտարներուն տաղնապարսուր մզենք օտարներուն և արագ ակնարկ մը նետենք մեր գրողներուն ստեղծագործութեանց բախտին, որ պայծառ չէ նորէն, ոչ Հոս՝ Սփիւտքի մէջ, և ոչ ալ Հոն՝ Հայրենիքի սահմաններէն ներս: Հոս՝ գրողը ուզածը գրելու և գրածը ուզած մեծով հրատարակելու ազատութենէն զատ գրեթէ ուրիշ միջոցաւորութիւն չունի, իսկ Հայաստանի մէջ նոյնիսկ այդ չկայ, որովհետեւ ըմբռնման, իմ կարծիքով, հրատարակչութիւնները գրողներին նկատմամբ անտարբեր, եւ կ'անէին նոյնիսկ սառը վերաբերմամբ ունենալ, այսինքն՝ այնպիսի կացութիւն մը կը տիրէ Հոն, որ «գիրք հրատարակելը գիրք գրելուց անկի մեծ տաղանդ է պահանջուած»:

Այս առնչութեամբ, «Գարուն» ամսագիրը անցեալ տարի երկու անգամ Հարցաթերթիկ ներկայացուց գրողներուն, Հեղ մը Յունուարի Համարով, Հեղ մը Յունիսի և ընթերցողին հաղորդեց սրտցաւ արտայայտութիւններու ահադին քանակ մը, որուն մօտաւոր պատկերը կը ներկայացնենք ստորեւ:

Թուղթի, աշխատավարձի, առաջման ծախսերուն անհրեւակայիք բարձրացումը, որ վերջին հնգամեակին պատճառ դարձաւ Արեւմուտքի շատ մը օրաթերթերուն ու Հոնդոններուն զազարման, տաղնապարսի իրողութիւն եղած է նաեւ մեր հայրենիքին մէջ, ու ազրիւր՝ դժգոհութեան պարբերական ճիշերու:

Անկէ առաջ առիթ տրուած է մեզի մասնանշելու («Բագին», 1969, թիւ 9) այդ երեւոյթին և անոր շարժառիթներուն վերաբերող ազդանքներ, ուր յիշատակուած փաստերուն համաձայն՝ գեղարուեստական գրականութեան համար նախատեսուած միջոցները կը տրամադրուին տարբեր նպատակներու և այդ նոյն պատճառով «լոյս չեն տեսել տպարաններում գտնուող մի քանի տասնեակ վէպ, վիպակ, բանաստեղծական և գրագիտական ժողովածուներ»: ... «Յաւօք, — կ'աւելցնէր «Հայաստան» հրատարակչութեան գեղարուեստական գրականութեան խմբագրութեան վարիչ Լեւոն Միրիշանեան, — ինչպէս տնտեսական տարուայ ընթացքում, այնպէս էլ մամուլում տարեկանները, հրատարակչութեան հնարաւորութիւնները տնօրինուած են ոչ յօգուտ գեղարուեստական գրականութեան խմբագրութեան...: Տարիներ շարունակ այս գրականութիւնը դարձել է փառքեան նախագէշ:

Հրատարակչութեան հնարաւորութիւնները միւս պահանջներուն օգտին օգտագործուելով միայն սուտած է ու կը տուժէ արդեօք գեղար-

ւեատական գրականութիւնը, թէ գեղարուեստական գրականութեան անու-
նով կատարուած բոլորովին անօրուտ յանձնառութիւններու հետեւանքով
նաեւ: Անշուշտ ոչ լաւ անտեսուած, երբեմն սնպատուաբեր, հիմնովին ան-
շահ շտաշութիւններու գծով: Քիչ չէ թիւը այն հրատարակութիւններուն
եւ վերահրատարակութիւններուն, որոնց կարիքը զգացող մարդ հազիւ թէ
դտնուի մեր իրականութեան մէջ, մինչդեռ «արդիական հարցեր շօշափող
քաղմաթիւ աշխատութիւններ, տպարան գնալու փոխարէն, տակաւին մը-
նում եմ մեր պահարաններում»:

Նոր դժգոհութիւններուն արձանագրութիւնը մատնանշելէ առաջ,
պարբերութիւն մը եւս կարդացէ՞ք վեց տարի առաջ կատարած Միբիլան-
եանի ախտանշանաշումէն:

«Ըստ բաժանորդագրութեան պայմանների, Լեոյի երկերի
10րդ հատորը պիտի լոյս տեսնէր 1967 թուականին: Այժմ 1969 թը-
ւականն է, լոյս են տեսել առաջին երկու հատորները միայն: Այս
նոյն տեղագով շարժուելով, մենք Լեոյի հրատարակութիւնը կ'աւար-
տենք 1977 թուականից ոչ շատ շուտ: Ո՞ր բաժանորդը մեզ կը նե-
րի...»:

Ոչ ոք, ի հարկէ:

Նոյն գրողը, «Գարուն»ի Յուլիոյ թիւին մէջ կ'ընէ սա յիշեցումը.

«Թիշեցնեմ, որ Կամիտասի երկերի ժողովածուի հրատարակումն մա-
տիմ ՀՍՍՀ Միմիստրների ատկետի որոշումը եղել է 1949 թուականի Սեպտեմ-
բերի 16ին եւ անցած քառորդ դարի ընթացքում հրատարակուել է ընդամեն-
նը... 3 հատոր»:

Բայց աններելին ուշացած տպագրութիւններու պարագան չէ միայն,
հիւթացուած տպագրութիւնները յաճախ աւելի սաստկութեամբ կ'ընդվը-
զեցնեն ընթերցողը: Անկախ կուսակցական ու քաղաքական պէտքերու հաշ-
ւոյն կատարուած անհարկի մոխումներուն, «Հայաստան» հրատարակչու-
թիւնը տեղական ու արտասահմանեան այնպիսի ուշադրութիւններու կը ծախ-
սէ իր ուղղ միջոցները, որ տունալ հաստատութեան նիւթական հաւասարա-
կչութեան հետ խախտուած պատկեր մը կը ներկայացնեն նաեւ բարոյա-
կան չափանիշները:

Հայրենիքի տպագրական գծուաբութիւնը, ուրիշ գծուաբութիւններու
պէս՝ հեռեւանք է ընդհանրապէս կամայականութիւններու եւ հաշուա-
խօյր վերաբերումներու, որոնց առաջացուցած աղէտին մասին բաւական
վկայութիւններ երեւցան անցեալ տարուան Յունուարին, «Գարուն» ամսագ-
րի «Մտորումներ» ստեղծուած ևւ ստեղծուելիք գրական գործերի մասին»
անունին տակ շրջագայութեան դրած հարցաթերթիկին արձանագրութեան
մէջ, մա'նաւանդ Անահիտ Սահինեանի, Գրիգոր Քէշիշեանի եւ Յովհաննէս
Գրիգորեանի պատասխաններուն համապատասխան բաժինն մէջ:

«Գարուն» ամսագրի հարցաթերթիկը կը բովանդակէ չորս հարցում:
Առաջինը՝

«Ենթադրում ենք համառոտակի պատմել Ձեր տպագիր եւ ամ-
տիպ այն ստեղծագործութիւնների մասին, որոնք ծնունդին 1973
թուականին»:

Այս հարցումին Անահիտ Սահինեան կը պատասխանէ.

«1973 թուին ես աւարտեցի «Սեփական ոտնահետքերով» խո-
րհւրդ կրող իմ ցնկեցնող գրական վէպիս առաջին մասը եւ յանձ-
նեցի «Սովետական գրականութիւն» ամսագրին (ե՞րբ կը տպագրե-
ւի, Աստուած գիտի, մի նիւար ամսագիր, գրողների միութեան մօտ

երեւել հարկեր անգամ, մի այդքան էլ ոչ անդամ) :

Ուշ տպագրուելու Անահիտ Սահինեանի առաջ քաշած պատճառները (ՀՄԻ նիստի անուագիր, գրադնելի միութեան մօտ հրեւ հարկեր անդամ) իրենք չեն տպագրական դանդաղութեան բուն պատճառները: Իր պատասխանին շարունակութեան մէջ Սահինեան կը թուէ չլրացուցիչ» ուրիշ ալ խոչընդոտներ: Այսպէս:

«Կը տպագրուի», արգիւտ, եւ ե՞րբ, իմ այն յօդուածը, որ տարուց անկի ընկած է մեր քերթերից մէկի խմբագրութիւնում: Այն գրուել է ոչ խմբագրութեան, այլ իմ՝ գրողիս խղճի պատուէրով, եւ հենց դա էլ յօդուածի դժբախտութեան պատճառն է: Ոչ էական ու ամենահետաքրքիր, հասարակական պակաս փարեւոր ինչ հարցի մասին էլ քեզ խմբագրութիւններում պատուիրեն, գրէր, ինչ որակով ու բարեխղճութեամբ ուզում ես, իսկայն կը տպագրուի: Բայց եթէ սխալուեցիր եւ քո սեփական նախաձեռնութեամբ յօդուած կամ ակնարկ տարար որեւէ խմբագրութիւն՝ քեզ ու հասարակութիւնը յազոյ որեւէ հարցի մասին... Ահա մի թարմ օրինակ:

«Վերջերս ես ներկայացայ մեր քերթերից մէկի խմբագրութեանը մի յօդուածով, որ իմ խնդրանքով խմբագիրն ինձն անձամբ կարդաց: Կարդաց ու մերժեց, որովհետեւ իրենց պատուէրով չէի գրել: Յօդուածը, որ իմ կարծիքով անկի յարմար էր այդ քերթին, տպագրուեց *«Գրական թերթ»*ում եւ ինձ հասած արձագանգներից դատելով, լաւ ընդունելութիւն գտաւ: Շնորհակալ եմ *«Գրական թերթ»*ից, նա էլ եթէ չտպագրէր, ի՞նչ պէտք է անէի, նա էլ իր հարցերն ունի, նա էլ իր պլաններն ունի, պլանից դուրս ներկայացուող միւսերը ոչ մի խմբագրութեան հանելի չեն:

• • • • •

«Գրեցի նաեւ մի շարք յարուր պատշաճի յօդուածներ, դրանք արդէն խմբագրութիւնների պատուէրով, որոնց տպագրութիւնը բնականաբար ջանքեր չպահանջեց ինձանից:

«Կարողացայ գտնել ինձ, մի շարք յօդուածներ էլ չգրեցի, որպէսզի տպագրութեան նոր հոգսերից ազատուեմ: Եւ գերադասեցի մի կողմ դնել վաղուց սկսածս վէպը (ինչո՞ւ շտապել, երբ աւարտուած այդպիսի վէպ եօթնարդ տարին է գտնուում հրատարակչութիւնում, եւ երկու տարի է, ինչ այնտեղ է գտնուում նաեւ իմ վիպակների ու պատմութեան ժողովածուն, որոնց բախտը անյայտ է), եւ գրեցի մի հեքիաթ վիպակ ու մի պիես՝ տիկնիկային թատրոնի արտիստների համար»:

«Գարուն»ի հարցաթերթիկին բովանդակած նոյն հարցումին իր տրամած պատասխանին մէջ տպագրական նոյն դժուարութեան անդրադարձած է նոյնպէս Գրիգոր Քէշիշեան, հետեւեալ փորձառութիւններով ու տրամադրութիւններով:

«... «Բարեբախտաբար» շատ չեմ գրում: Մեզանում այնքան քիչ են հրատարակելու հնարաւորութիւնները, որ քեզում հեղինակները անպայման կը կանգնեն դժուարութիւնների առաջ: Ոչ մի խմբագրութիւն տարեկան մէկ, կամ առաւելագոյն երկու պատմը-

ւածքից աւելի չի կարող ֆեզանից տպագրել՝ շատ տրամաբանական պատճառներով, իսկ հեղինակը ուզում է տպագրուել, այսինքն՝ իր ասելիքը, իր ճշմարտութիւնը հասցնել ընթերցողին: Չտպագրուելու վստահութեամբ գրելը համարում եմ ինչ-որ չափով հերասութիւն, որը քիչ է հասկանալի ինձ:

Ահա եւ երկտասարդ բանաստեղծ Յովհաննէս Գրիգորեանի նոյն հարցին մէկ տարբեր երեսին վերաբերող սրամիտ խօսքը.

«1973 թուականին գրել եմ քննադատական 10 բանաստեղծութիւն, որից նը տպագրուել է: Նախագայից սկսած քննադատւած է յաջորդաւոր համարել անտիպ բանաստեղծութիւնները: Ձագնաւով խախտել մեր մարմնիկից եկած այս գեղեցիկ (փրկարար) աւանդաբը, անտիպ չարս բանաստեղծութիւններս յամառօրէն չեմ յամձնում տպագրութեան, զօնէ յաջորդաւոր չարս բանաստեղծութիւն ունենալու ակնկալիքով: Ի դէպ, «Հայաստան» հրատարակչութիւնը նոյնպէս հետեւում է այս աւանդաբին՝ յամառօրէն չի տպագրում գիրքը, եւսիս զօնէ մէկ յաջորդաւոր գիրք ունենալու ակնկալիքով. այս, ի հարկէ, կատակով»:

Յովհաննէս Գրիգորեանի պարագային, «Հայաստան» հրատարակչութեան պատճառով չի տպագրուում ունի աւանդաւոր եօթը տարուան պատմութիւն, որուն սկիզբը պէտք է նկատել «Գարուն» ամսագրի 1967 թիւ 3ին մէջ տրուած հետեւեալ ծանօթագրութիւնը.

«Շուտով «Հայաստան» հրատարակչութիւնը լոյս կ'ընծայի երկտասարդ բանաստեղծի առաջին ժողովածուն»:

Շուտով...

Տպագրական դժուարութիւններու մասին խօսող այս երեք զրոյհներէն երկուքը՝ Անահիտ Սահեան եւ Գրիգոր Քէչիկեան նոյն դժգոհութիւնը կ'ըստեն նաեւ «Գարուն»-ի Յուլիոսի համարին մէջ երեւցած «զրոյհ-հրատարակչութիւններու» խօսակցութեան ընթացքին:

Այն հարցումին, թէ «Քանի» գրքի հեղինակ էք: Ձեր տպագրուած գրքերից ո՞րն է (որո՞նք են) Ձեզ աւելի սրտամօտ: Ինչո՞ւ, Անահիտ Սահեան կ'ը պատասխանէ.

«Ինձ աւելի սրտամօտ են չտպագրուած գրքերս՝ «Կարօտ» վէպս եւ վիպակների ու պատմութեան պիտի ժողովածուն, որ ամբողջ վիճակում ընկած են հրատարակչութիւնում, եւ չգիտեմ ի՞նչ է տեղի ունենալու եւ ե՞րբ, որպէսզի բախտը ժպտայ նրանց»:

Իսկ «Ե՞րբ է տպագրուել Ձեր վերջին գիրքը: Ե՞րբ էք այն ներկայացրել տպագրութեան» հարցումին, Գրիգոր Քէչիկեան կ'ը պատասխանէ.

«Իմ վերջին «Կղզի եման չիք մեր կիպրիայ» գիրքը տպագրուել է 1970 թուականին: Ձեւ յիշում, թէ երբ եմ ներկայացրել տպագրութեան: Հաւանաբար 2-3 տարի դրանից առաջ, որովհետեւ իմ գրքերն անպայման մի քանի տարուայ կիսմէ են ունենում «Հայաստան» հրատարակչութիւնում»:

Այս երկրորդ հարցումին տրուած ահաւասիկ համեմատաբար աւելի երկտասարդ գրողի մը՝ Վահէ Պողոսեանի պատասխանը, որ տպագրական գողգոթաներուն վրայ կամ լարերինթոսներուն մէջ ապրած ութամեայ շարժարալին փորձառութիւններուն հետ՝ ուշադրաւ է նոյնպէս հսկայական պատճառներով կորսնցուցած ռուբ տարիներուն» համար մօրմօրող թախիծով.

«Միակ գիրքս՝ «Կանգառում եւ սլացքի մէջ» պատմութեան հերթաւոր ժողովածուն, տպագրուել է 1972ին: Այն հրատարակչութիւն ներկայացուել է 1964ին, ՀՍԳ միութեան կոնսուլտացիոն բիւրոյի միջնորդութեամբ ու ե-

բաշխառութեամբ:

«Ուր տարի... Կարծում եմ, քիչ չէ, երբ գիրքը տպագրութեան յանձնած 19 տարեկան պատանին այն գրախանութի ցուցադրկում տեսնելիս, իր մէջ զգում է 27 տարեկան հասուն երիտասարդի թախիծը:

«Ուր տարւայ ընթացքում ձեռագիրն անցաւ հինգ գրախօսի ձեռքի տակով, «փոխեց» վեց բաժնի վարիչ, երկու խմբագիր, մէկ ամբաստանաւ տպարանում եւ լոյս տեսաւ միայն եօթներորդ բաժնի վարիչի օրօք:

«Այդ ուր տարիները ինձ համար, որպէս ստեղծագործողի, կորած տարիներ էին: Այդ ընթացքում գրել եմ երեւի երկու կամ երեք պատմածք: Վերսկսել եմ ստեղծագործել գիրքն տպագրութեան յետոյ միայն»:

«Ինչպիսի՞նք անտիպ ստեղծագործութիւններ ունէք: Ե՞րբ էք տպագրելու դրանք», *Հարցումին՝ գրողները դարձեալ կ'անդրադառնան տպագրական գծաւարութիւններուն, ոճանք մատր ուղղակի վերջին վրայ դնելով, ուրիշներ՝ ճկուն դարձուածքներով, ինչպէս, օրինակ, Սերո Խանգազեանը, որ կ'ըսէ.*

«Հիմա անգղալի ասեմ՝ շատ են իմ անտիպ գործերը, աւելի շատ, կրկնակի շատ, քան արդէն մարդկանց յայտնիները: Իսկ թէ երբ եմ տպագրելու դրանք, դժուարանում եմ ասել: Դժուարանում եմ, որովհետեւ մեր սիրելի «Հայաստան» հրատարակչութիւնը սեղ չունի շատ հիւրեր ընդունելու, թէկուզ դրանք թանկագին են, սիրելի, անմասնաւի, թէկուզ այդ հիւրերը գալիս են լաւ ու ծանր շալակներով: Իսկ եթէ իմաստութիւնը ասուի է՝ բռնով հիւրի երեսը պարզ կը լինի, ձեռքը՝ բարձր»:

Շատ ալ այդպէս չէ իրականութիւնը, ճշմարտութիւնը «Հայաստան» հրատարակչութեան հիւրարարաններուն մէջ, ուրիշ բնուով եկած հիւրերէն աւելի բարձր ձայն ունեցողները բնա դարձողներն են առհասարակ:

Անոնք անոնցմէ մէկը, անանուն մը, Անահիտ Սահինեանի նկարագրումը թեմք.

«Վերջերս մէկը ներկայացաւ «Գիտներ»ի խմբագրութիւն եւ ասաց, որ տասնեօթ գրքի հեղինակ է, տպագրել է վէպեր, վիպակներ, պատմածքներ, ակնարկներ, յօդածների ժողովածուներ, մեծագործութիւններ: Մարդը տասնեօթ գրքի հեղինակ է, եւ ես անունը չէի լսել: Ինչպէ՞ս է կարողացել տասնեօթ գիրք հրատարակել եւ մնալ աննկատ: Գիրք հրատարակելը գիրք գրելուց աւելի մեծ տաղանդ է պահանջում: Վերջին տարիներին գիրք հրատարակելու տաղանդով օժտուածները զգալիօրէն բազմացել են: Դրանով պէտք է բացատրել բազմաթիւ գրքերի տէր, ստուերում գտնուող բազմաթիւ հեղինակների գոյութիւնը»:

Կր նշանակէ, թէ բոլորովին անհիմն են Սերո Խանգազեանի ծեփեքումները, որովհետեւ ձեռք միակ սիրելի «Հայաստան» հրատարակչութիւնը ոչ թէ չաա հիւրեր ընդունելու տեղ չունի, այլ տրամագրելի տեղը յատկացուցած է աներես հիւրերուն, անանուններուն, «ստուերում» գտնուող ստուերներուն:

Ունկնդրեցէք նաեւ սա քառուկը.

— Ե՞րբ եմ տպագրելու: Այս հարցը սիրում եմ տալ: Եթէ հնարաւոր լինէր. կը տպագրէի այսօր» (*Խաժակ Գիւլնազարեան*):

— Աշխատում եմ իմ գիրքերը հրատարակելու վիճակի հասցնել, իսկ մնացածը... Ոչ ոք չի կարող իմանալ» (*Գրիգոր Քէչիկեան*):

— Ես, ի հարկէ, իմ այդ ստեղծագործութիւնները կ'ազնեայի հնարաւորին չափ շուտ տպագրուած տեսնել, բայց, ինչպէս գիտէք, այդ հարցում միայն իմ ցանկութիւնը քիչ է» (*Գրիգոր Զանկեան*):

— Թէ որքան կը տնի այդ գրէիս հրատարակչական «երկունքը», կեանքը ցոյց կը տայ» (Վահէ Գողոտեան) :

Ուղղուած ժխտ հարցումներուն առթիւ եւս գրողները արատաւաւ տած են նոյն ցաւը : Առանձնապէս շահեկան է «Առաջիկայում ինչպիսի՞ գրքեր կ'ուզէիք, որ տպագրէր կամ վերահրատարակէր «Հայաստան» հրատարակչութիւնը» հարցումին տրուած խորատու Ուլուրաբեանի պատասխանը .

«Ձեռք կ'արծում, քէ իմ ցանկութիւնը որեւէ գիր կ'ունենայ «Հայաստան» հրատարակչութեան առաջիկայում տպագրելիք գրքերի ցանկի վրայ : Բայց կ'ուզեմայի, որ այդ ցանկում տեղ գտնէր Սարգիս Աբրահամեանի գիրքը, եւ վերջապէս, շարունակէի վիճակից դուրս գար Սուրէն Գալստիսեանի «Զորքորդ չափում» վէպը, որի (նաեւ եղիմակի) զարմանալի նակատագրին տարիներ առաջ անգրադարձել է «Գարուն», հունդէսը, սակայն, ցաւօք ապարդիւն :

«Եւ մէկ էլ կը ցանկանայի, որ ապրող գրողի լիակատար որեւէ ժողովածու առայժմ չվերհրատարակուէր : Մա՛նաւոր, եթէ դրա համար պահանջ մերկայացնողն ինքը՝ հեղինակն է» :

Այս ցանկութիւններուն վրայ, ցանկութիւն մըն ալ ծննդ յայտնենք, ա՛յն՝ որ «Հայաստան» հրատարակչութիւնը աւելորդ վերհրատարակութիւններու, ոչ — անհրաժեշտ հատրտութիւններու տուած տուրքերը նուազեցրեալ չափին հետ՝ չա՛փ դնէ նաեւ արտասահմանի ոչնչութիւնները հիւրերկալելու իր շտապանջութեան : Առհասարակ դրականութեան հետ որեւէ ազերա չունեցող մարդոց հատորները, հեղինակներուն նկարներով միասին տպագրութեան կը յանձնուին այնպիսի՜ փութկոտութեամբ մը, որ ուղղակի վերաւորական է «յամառօրէն» շտապորդուող երկրասարդներուն ու հրատարակչութեան ներքնցքներուն տարիներով քաշըլուող օժտուածներուն համար :

ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՇԵՇՏԸ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա.

Մարդկային գոյութիւնը կենսական առումով կորելի է պատկերացնել ուղիղ զծի ձեւով, երբ դէմքը ուղղուած է «ապագային», իսկ թիկունքում այն է, ինչ որ համարուած է անցեալը: Այդ պայմաններում փաստօրէն ներկայ չկայ, քանի որ ապագայից իւրացուող իւրաքանչիւր պահ անմիջապէս սահում, հեռանում եւ լուծւում է անցեալի մէջ: Ձկան նաեւ կողմեր, որովհետեւ ընթացքը ուղղագիծ է եւ «հայեացքը» սեւեռուն:

Այսպիսով, միակ կենսադաշտը անհրաժեշտաբար ապագան է մնում, իրբեւ մարդկային շարժման ու գործունէութեան անփոխարինելի ասպարէզ, կենսական ուժերի դրսեւորման ու այլեւայլ ծրագրային իրագործումների ստեղծման կարողակ, ապրելու պայման: Ապագան այն իւրայատուկ «հում նիւթն» է, որից կեանք ու այլապան արժէքներ են ծնւում ապրողների կողմից ու նրանց համար: Ահա թէ ինչու, բոլոր աւաղումներով հանդերձ, մարդկային դէմքը ինքնաբերաբար ուղղուած է լինում դէպի ապագան եւ նրա հետ են կապւում անխտիր բոլոր սպասելիքները, ինչպէս եւ անելիքները:

Կենսադաշտի ընոյթը պայմանաւորում է եւ տեսադաշտի դիրքը: Բեւեռանում են իրողութիւններն ու պատկերացումները: Բեւեռների գլուխ են կանգնում «նորութիւն» եւ «հնութիւն» հասկացութիւնները, երբ որակային բժրոշումներին փոխարինում են դիրքային բժրոշումները: ապագայից բխող ամէն ինչ

նորութիւն է համարւում, իսկ ամբողջ անցեալը՝ հնութիւն, քրտաքրտի սպասում են նորութեան, մոռացութեան տալով մնացեալը:

Բայց կենցաղային իմաստով գոյութիւն ունի նաեւ ներկայ, ինչ որ երբեմն ոմանց մօտ նոյնիսկ բացարձակում է, անցեալի եւ ապագայի անտեման զնով: ներկայ առելով հասկացւում է որոշ թրւով կենսական իրողութիւններ ամփոփող ինչ-որ ժամանակաշրջան, կենսական ճանաչարհի փուլ կամ հանգոյց, որը մատչելի է անմիջական ընկալման համար: Իրականում, այդ ձեւով պատկերացուող ներկան պայմանական ու առածական է, իրբեւ անցեալի ու ապագայի զսահմանաձեւած գօտիներից» հիւսուած մօտաւոր ոլորտ: Ոմանց համար դա կարող է սահմանափակուել մէկ րոպէով, իսկ ուրիշներին երեւալ օրուայ, ամիսների, տարւայ տեսքով եւ, ամենաշատը, սեփական գիտակցական կեանքի ամբողջ տարողութեամբ: Դա անցեալի ու ապագայի սահմանադի շուրջը անընդհատ գոյացող այն կապող օղակն է, որն ապահովում է անձի ինքնազգացողութեան տեւողութիւնը:

Բոլորովին այլ ձեւով պէտք է պատկերացնել մարդկային գոյութեան հոգեմտաւոր ոլորտը՝ իրբեւ մի շրջանագիծ, որի կենտրոնում մշտապէս գտնւում է մտածող էակը: Աւելի՛ն. այդ շրջանագիծը սոսկ մէկ հարթութեան վրայ չէ եւ ոչ էլ սահմանափակուած: Շառաւիղներն անծայր են եւ սահմանները չարժական:

Ըստ էության, չըջանազմերը մարդուն օղակում են բոլոր կողմերից, ու՛յն առաինան, որ փաստօրէն կողմեր չեն մընում, այլ մնում է ճառագայթող կէտը եւ շուրջը տարածուող դեղածեւ անասնմանութիւնը, ամենկողմեան հորիզոններով:

Այս պարագան այլ բնութի տեսագաւտ է ստեղծում: Իրողութիւնները եւ պատկերացումները անպայման չեն բեւեռացում, հնի ու նորի մակնիշներով, այլ բնկաւում են ըստ իրենց, ուսեւք, տիեզերական դիրքի ու վաւերականութեան: Միաժամանակ, ամէն ինչ դառնում է իւրաքանչիւ ներկայ եւ անցեալն ու ապագան միաձուլուած են ներկայի գրկում, հանդիսանալով սոսկ մտածողի կողմնորոշման բաղադրատարրեր, երեւոյթները աստիճանաբար փոփոխուելով:

Տեսագաւտի այս կտմ այն շրջանակում զխտանում է ժամանակը, իրար միադնելով տարանջատ երեւոյթները, որից ծնւում են ամբողջական աշխարհներ եւ ամբողջական պատկերացումներ: Պարզուած են այլեւայլ սինսակարար կըշիւներ, հիմք ծառայելով հնարաւոր կըրահուններին համար: Հեռաւարտութիւնները ծօտեցնելու այս հոգեմտաւոր յառկութիւնը դերծ է պահում միակողմանի եւ բեւեռացուած վճիռների տիրակալութիւնից եւ ասպարէզ բացում առաւել յոյահայեաց ու հաւաստի հետազօտութիւնների առկել:

Ուստի՝ դարմանալի չէ, որ երբեք չի թուլանում մարդկային հետաքրքրութիւնը պատմական իրականութիւնների նկատմամբ: Պատմութիւնը եթէ իսկապէս անցեալ է անմիջական կենսական առումով, այլեւ անգոյ ու անվերադարձ, բոլորովին այլ բան է հոգեմտաւոր պատկերացումների զաւտում. մի մշտական ներկայութիւն, մի դարմանալի գրուցակից, որը շատ հարցերի շատ պատասխաններ է առլիս: Անընդհատ նոր միջոցներ են որոնում այդ պատմութեան վարագոյրները պատուելու եւ նորանոր ճշմարտութիւններ կորզելու ճանապարհին: Պատմութիւն ասելով պէտք է հասկանալ, բնականաբար, թէ՛ մարդկային

հասարակութիւնների եւ ամբողջ մարդկութեան եւ թէ՛ առհասարակ բնութեան ու տիեզերքի միջայտմեան իրականութիւնը: Եւ յայտնի է, թէ ինչ է արւում յատկապէս մեր օրերին պատմութեան բոլոր կողմերի առաւել խոր ուսումնասիրութեան գծով, ինչ որ միաժամանակ նաեւ ներկայի՝ ուսումնասիրութիւն է:

Բայց մարդու համար ամէնից ապաւորիչը մարդկութեան՝ ճարդկային ցեղին պատմութիւնն է: Մանաւանդ այդ պատմութեան ա՛յն մասը, երբ քանականութիւնը վաւերացուած տեղ ունի եւ գրաււոր վիպութիւնների շնորհիւ մատչելի է մեր մտքին: Անօրեայ դիրքերից այդ պատմութիւնը, ի հարկէ, ուղղակի անասնման է թւում, մինչդեռ տիեզերական դիրքերից՝ դա մի պարզ ընթացք է, լիցք, ամբողջական երեւոյթ, որի կարճատեւ կամ երկարատեւ լինելը էական նշանակութիւն չունի: Հետեւապէս, այդ ամբողջական երեւոյթի մէկ փուլի պատկերը իմացական աղբակ կարող է ծառայել նաեւ միւս փուլերում ազդողների համար:

Ընդհանուր պատմութեան շրջանակում առաւել ապաւորիչ ու յուզիչ է մըշակոյթի՝ պատմութիւնը, երբ մեր առջեւ տեսնում ենք ո՛չ թէ պարզապէս ծընւող, սնուող ու մեծնող մարդակերպ կենդանիների, այլ դպրուն, մտածող, տառապող եւ ստեղծող արարածների, որոնք այնքան մօտ ու հարազատ են մեզ եւ որոնց կեննքն ու հաւաքական փորձը ուսանելի հետքեր են թողել այս աշխարհում: Պարզ է, որ իւրաքանչիւր շրջանակի մէջ կարելի է յայտնաբերել ուրիշ շրջանակներ, աստիճանաբար կատարել եւ հարազատութեան այլեւայլ երանգներ ճշդել: Բայց ամէն ինչից վեր, տիեզերական չափանիշով, առկայ է մարդու դոյութեան ամբողջական երեւոյթը:

Ահա եւ այդ բոլորը հաշուի առնելով՝ այս ուսումնասիրութեան մէջ բացատարար կը ներկայացնեմ մի նիւթ, որը թէ՛ զուտ պատմական է եւ թէ՛ մշակութային:

Պօքը վերաբերում է փիլիսոփայութեան եւ նրա մէկ բնագաւառին՝ բարոյագիտութեան:

Յայտնի է, որ ինչպէս առաջներում,

այնպէս էլ մեր օրերին, բարոյագիտութիւնը փիլիսոփայութեան բաղկացուցիչ ճիւղերից մէկն է հանդիսանում եւ իրրեւ այդպիսին արտացոլում է թէ՛ մասնագիտական հետազոտութիւնների եւ թէ ուսումնական դասընթացների մէջ:

Անուշտ, տարբեր երկրներում տարբեր ժամանակ տարբեր հեղինակների կողմից տարբեր ձեւով է ներկայացւում փիլիսոփայութեան բաղկացուցիչ տարրերի պատկերն ու փոխադրանքները: Շեշտւում կամ զեղչւում են որոշ տարրեր, Բայց միաժամանակ ակնյայտ է, որ տրամաբանութեան ու հոգեբանութեան գոյաբանութեան ու տիեզերաբանութեան եւայլնի կողքին բարոյագիտութիւնը իր համապատասխան տեղն ունի:

Տեղին է նաեւ մի այլ բացատրութիւն:

Վաղուց ի վեր եւրոպական լեզուներում շրջանառութեան մէջ են յունարէն «մորալ» եւ «էթիկա» բառերը, որոնց իմաստի տարբերութիւնը զրեթէ ոչ մի տեղ յատկորէն չի ճշգրտւած եւ դրանք յաճախ ուղղակի նոյնական են համարւում: Հետ սովորական է կարդալ, օրինակ, «այդպիսի ձեւեր» «մորալ» (կամ՝ էթիկա), «էթիկա» (կամ՝ մորալ): Թէեւ նուրբ տարբերութիւն անպայման կայ, դրանք իրականում փոխարինում են միմեանց:

Այդ բառերին ընդհանուր առմամբ համապատասխանում են հայերէնի «բարոյագիտութիւն», «բարոյականութիւն», «բարոյախօսութիւն», «վարքաբանութիւն», «վարքագիտութիւն» մերձիմաստ, բայց ըստ իս ոչ նոյնիմաստ բառերը: Այս ուսումնասիրութեան մէջ, սակայն, խօսքը միայն եւ յատկապէս բարոյագիտութեան մասին է՝ իրրեւ փիլիսոփայական մտքի մի արտայայտութիւն, թէեւ պատմական որոշակի շրջանակում:

Ձեռն ներկայացուելու առհասարակ բարոյական պատկերացումների հոգեբանական խորքն ու էութիւնը, հանրային դրոնւորման հանգամանքները: Խօսք չի կարող լինել նաեւ բարոյական որեւէ համակարգի բարոյախօսական հիմնաւոր-

ման, ոչ էլ ընդհանրապէս մարդկային վարքագծերի բազմազան արտայայտութիւնների զոտակարգման մասին: Արանք տարբեր բնագաւառներ եւ նիւթեր են: Նպատակն է հանրամատչելի ակնարկի մէջ ցոյց տալ, թէ փիլիսոփայութեան պատմութեան ընթացքում երբ, որտեղ եւ ինչ պայմաններում է յատուկ շեշտ դրուել բարոյագիտութեան վրայ եւ ում կողմից է դրուել այդ շեշտը:

«Փիլիսոփայութեան պատմութիւն» ասուելիս նկատի է առնւում միջերկրածովեան եւ յարակից երկրներում դրոնւած փիլիսոփայական մտքի ամբողջութիւնը, որը անմիջապէս վերաբերւում է նաեւ հայերիս: Փիլիսոփայութիւն մը շահուել է եւ ուրիշ հեռաւոր երկրներում, կրօնի եւ բանաստեղծութեան հետ խառը: Բայց մեզից 2600 տարի առաջ Յունաստանում ձեւաւորւած փիլիսոփայական միտքը ունի իր առանձնայատկութիւնները, որոնք փոխանցուել են հետագայ դարերի եւրոպական մտածողներին, մինչեւ մեր օրերը: Ահա այդ փիլիսոփայութեան պատմութիւնն է հիմք ծառայում այս ակնարկի համար:

Արդ՝ իւրաքանչիւր մարդկային հասարակութեան մէջ մարդկոնց կողմից մշակուած փիլիսոփայութիւնը արտացոլել է այդ հասարակութեան մշակութային մակարդակը եւ նրա պատմութեան մաս կազմել: Հասարակութեան պատմութիւնը այս կամ այն ձեւով արտայայտւել է եւ փիլիսոփայութեան պատմութեան մէջ: Ուստի եւ, ինչպէս ընդհանուր պատմութիւնը քաղաքաբար բաժանւում է երեք շրջանի՝ հին, միջին եւ նոր, այնպէս էլ փիլիսոփայութեան պատմութիւնն է պարբերացւում, որոշ շեղումներով հանդերձ, որոնք պայմանաւորւած են որոշ հանգամանքներով:

Առաջին շրջանի տեւողութիւնը աւելի քան 1100 տարի է՝ մօտ 800 թուականից (մ. թ. ա.) մինչեւ մ. թ. 529 թուականը, երբ բիւզանդական կայսր Եւստինիանոսը փակեց Աթէնքի նոր-պլատոնական փիլիսոփայական դպրոցը:

Երկրորդի տեւողութիւնը մօտ 800 տարի է (800-1600 թ. թ.):

Իսկ վերջինն էլ՝ ահաւասիկ գրեթէ 400 տարի :

Առաջինի համար ընդհանուր առմամբ բնորոշ էր բնագանգութիւնը եւ բարոյա-դիտութիւնը, երկրորդի համար՝ տրա-մարանութիւնն ու աստուածաբանութիւ-նը, նաեւ բնագանգութիւնը, իսկ երրորդի համար՝ դիտութիւնն ու հասարակագի-տութիւնը :

Իւրաքանչիւր շրջան իր հերթին, բը-նականաբար, բաժանուած է աւելի փոքր ժամանակաշրջանների, երբ գործել են փիլիսոփայական տարբեր դպրոցներ, ձե-ւակերպուել տարբեր ուսմունքներ եւ շեշ-տը դրուել է փիլիսոփայութեան այս կամ այն կողմի վրայ :

Առաջին շրջանն, օրինակ, սովորա-բար բաժանուած է երեք փուլերի :

Առաջինը՝ նախասոկրատեսական փու-լը, ընդգրկում է Թալեսից մինչեւ Սոկ-րատես ընկած ժամանակաշրջանը (600-420, մ. թ. ա.) եւ բնորոշում է տիեզե-րաբանութեամբ :

Երկրորդը՝ (420-322, մ. թ. ա.) մին-չեւ Արիստոտելի մահը, եւ բնորոշում է բնագանգութեամբ :

Իսկ երրորդը՝ մինչեւ յիշեալ 529 թը-ւակա՛նը, որք բնորոշում է բարոյագի-տութեամբ :

Այս պարբերացումը, ինչպէս իւրա-քանչիւր պարբերացում, մոտաւոր է եւ իմաստ ունի միայն ընդհանուր կողմնո-րոշման համար : Պէտք է ասել, որ փիլի-սոփայութեան պատմաբանները, յունա-կան փիլիսոփայութիւնը բնութագրելիս, երբ հերթը հասնում է բարոյագիտական փուլին՝ բաւական թուլացնում են իրենց գնահատական խօսքի թափը, երբեմն էլ այն համարում նահանջ կամ նոյնիսկ ան-կում : Անշուշտ, այդ փուլում Սոկրատես-ներ, Պլատոններ եւ Արիստոտելներ չեն ծնուել, փիլիսոփայական լայն համա-կարգի չեն ստեղծուել եւ առհասարակ դոյաբանութիւնն ու իմացականութիւնը առաջուայ չափ տեղ չեն ունեցել : Բայց այդ երեւոյթն էլ թերեւս իր հիմնաւոր պատճառներն ունի :

Պատճառները կարող են լինել թէ՛ ընդհանուր հասարակական եւ թէ՛

զուտ փիլիսոփայական : Ինչո՞ւ հա-տարակութեան կեանքի յոտկապէս այդ փուլում չէշտը դրուեց բա-րոյագիտութեան վրայ : Ձէ՞ որ դա մէկ-երկու անհատ փիլիսոփայի դործ չէր, այլ իրար յաջորդող բազմաթիւ սե-րունդների՝ հարեւրամեակների ընթաց-քում : Հնարաւոր է նաեւ մտքի գործու-նէութեան ինչ-որ օրինաչափութիւն, երբ իմացական հետաքրքրութիւններն էլ ի-րենց յաջորդական առաինականներն ունեն, երբ հոնրային առումով իւրաքանչիւր շարունակութիւն յենում է սկզբի վրայ եւ ըստ այնմ էլ ընթանում, նոր հոսանք-ներ յարուցելով եւ վիճակներ ստեղծելով : Այդ բոլորի հետեւանքով փոխւում է նւ շեշտերի դասաւորութիւնը :

Թէեւ բարոյագիտական փուլը ինչ-իւնչ նկատաւորներով ամէնից քիչ է գնահատուում, դարեւ շարունակ եւ հենց մեր օրերին այնպալ առիթներով ամէնից շատ այն փիլիսոփայների ա-նուններն են հռչակում եւ ամէնից շատ նրանց ասոյթներն են մէջբերում, ով-քեր այդ փուլի բնորոշ ներկայացուցիչ-ներն են : Սա ցոյց է տալիս, որ բարո-յագիտութիւնը, իրրեւ այդպիսին, չի հնանում եւ պիտանի է բոլոր դարերի համար՝ ասնուազն պատմական վկա-յութեան կարգով :

Յիրաւի, տիեզերաբանական պատ-կերացումները կարող են հնանալ եւ իս-կապէս հնացել են, նորանոր յայանա-գործութիւնների լոյսի տակ : Իմացա-բանական խրթին ձեւակերպումները մատչելի են սոսկ համեմատաբար սա-կաւաթիւ մասնագէտների : Մինչդեռ բարոյագիտութիւնը վերաբերում է կենդանի մարդու ամբողջութեանը եւ անհամեմատ շատերի է մատչելի ու նոյնիսկ ընդունելի : Դա՛ է, ըստ երե-ւոյթին, նրա երկարակեցութեան, ան-պայման նաեւ մշակակցութեան դադա-նիքը :

Աւելի՛ն. փիլիսոփայութեան մէջ բա-րոյագիտութիւնը տեղ է ունեցել ո՛չ միայն յիշեալ ժամանակ եւ յիշեալ աշ-խարհամասում, այլեւ ամէնուրեք եւ ամէն ժամանակ : Տարբերութիւնը մի-

այն տեսակարար կշիռն ունի է: Ձինական փոխհարաբերություններն համար, օրինակ, խիստ բնորոշ է եղել զործնական, բարոյական նկատառումը (կոնֆուցիոս, եւայն): Ձենք կարող առել, թէ միջին դարերի Եւրոպայում, երբ առաւելագույն թիւնն էր իշխում, բարոյագիտութիւն չի եղել: Բոլոր դարերի փոխհարաբերութիւնն այս կամ այն չափով գրադարել է եւ բարոյագիտութիւնը: Հենց մեր օրերին, երբ շատերին թիրախացաւ բար թւում է, թէ բարոյագիտութիւնը արհամարհուած ու զանազուրի է, բնորոշակաւ, անշափ առաւ է բարոյագիտական գրականութիւնը, բայց ժամանակակից կեանքի տուեալներին ու պահանջներին: Հարկ չկայ յիշելու այն փոխհարաբերութիւն, մտածողներին ու հեղինակներին, որոնց երկերում ու տեսագաւառում բարոյագիտութիւնը հիմնական ուղղութեան է արժանացել: Բայց որքէ յիշել, որ նոյնիսկ այն փոխհարաբերութիւն, որոնց մտածողութեան համար առաջնայինն ու առաջնայինը եղել է իմացարանութիւնը, ի վերջոյ դիմել են բարոյագիտութեան ու այդ բնագաւառում եւս իրենց խօսքն առել, միաժամանակ շնչաւոր, թէ ինչու: Այդպիսիք էին, օրինակ, Սպինոզան, Կանտը, Ենիքը, Ֆիխթեն:

Յունական փոխհարաբերութեան մէջ բարոյագիտական տարրեր կային եւ նախորդ փուլերում: Սոկրատեսը նոյնիսկ համարում է այդ ուղղութեան իրական հիմնադիրը: Բայց այդ փոխհարաբերութիւնը ամբողջով ինքնաբերական չէր: Այնպէս ընդհանրապէս, որ հազիւ թէ հնարաւոր լինի ամփոփել բարոյագիտութեան շրջանակում: Դեյվիդն տաճարի «մանր գեղ» նշանաբանով դիտուած Սոկրատեսը ամէնից առաջ ձգտում էր մարդկանց զրոյցել ինքնաճանաչման, «ճիշդ մտածողութեան», երեւի կարծելով, թէ ճիշդ մտածողը ինքնաբերաբար նաեւ ճիշդ կ'ապրէ: Նա ուզում էր, որ բանականութիւնը չափաբայութիւն բանականութեան ձեռքերով եւ ոչ էլ պարտադրուի իբրեւ պատրաստի եղբայրացութիւն, այլ հաստատուի ու ամրապնդուի ներքին հակասութիւնների

յաղթահարման ու լուսարանման ճանապարհով, զառնայ մի տեսակ ապրում, կեանքի մաս, հետեւապէս եւ անջնջելի:

Յայտնի է, որ փոխհարաբերութեան (իմաստասէր) բարը առաջին անգամ դործ է անել Պիթագորասը (մոտ 540-480), մ. թ. ա.) ի տարբերութիւն «իմաստուն» յաւանատ Բատի: Յայտնի է նաեւ, որ տիեզերաբանական գոնազան տեսութիւնների յարուցումը շփոթութեան միջոցառում հետապնդում հանդէս եկան «սոփիստները» (իմաստակները): Նմանապէս յայտնի է, որ Սոկրատեսը պատկանում էր սոփիստների սերնդին եւ իբրեւ այդպիսին էր ճանաչում: Բայց բայց էութեան նստարար մտածելակերպ ունէր եւ պարզապէս ջանում էր սոփիստների զէնքով՝ բանականութեան ուժով ապացուցել նրանց սխալ լինելը եւ սկզբունքորէն պարտութեան մատնել: Եւ Սոկրատեսի օրօք ու նրա ջանքերով՝ առհասարակ փոխհարաբերութիւնը երկնքից երկիր իջեցուց (Կիկերոն): Ահա նրա մեծագոյն դերը: Դրանով էլ որոշմանաւորուած են միւս բոլոր «նորամուծութիւնները»:

Սոկրատեսին շատերն են աշակերտել: Նա ինքը, ինչպէս յայտնի է, ոչինչ չի գրել, բայց նրա հայացքներն ու գործունէութիւնը յայտնի են դարձել հետագայ սերունդներին իր աշակերտների՝ մանաւանդ Պլատոնի եւ Բենեդիկտի շարադրած երկերի շնորհիւ: Աշակերտների շարքում եղել են պարզ հետաքրքրասէրներ, ուսուցչի գաղափարները ժողովրդականացնող մտաւորականներ եւ զուտ փոխհարաբերութիւն, որոնք իրենց յատուկ դպրոցներն են հիմնել, միեւնոցից հետաւելով:

Կիկերոն Մեդարացին հիմնեց «էրիստիկները» (միճարանողներ)՝ դպրոցը, որից դուրս եկան Պիրոնը եւ «սկեպտիկները» (թերահաւատներ):

Անտիսթենեսը հիմնեց «պիրիկները» (յանականներ)՝ դպրոցը, որի աշէրն ընկնող ներկայացուցիչները եղան տակաւադաս Դիոգենես Սինոպցին եւ Կրատեսը:

Արիտիպես Կիրենացին հիմնեց կիրենեանների դպրոցը:

Եթէ ցինիկները զրկանքների ենթար-

կրելն էին առաքինութիւն համարում, կիրենիանները, ընդհակառակն, չեւոր ղնում էին հաճոյասիրութեան վրայ:

Բայց Սոկրատեսի ամենաարժանաւոր ժառանգորդը եղաւ, ինչպէս ասուել է պատմութեան ընթացքում, Վեստուսիան Պլատոնը:

Այսպիսով, Սոկրատեսի աշակերտները, չեւոր ղնելով իրենց ուսուցչի զաւակներին այս կամ այն կողմի վրայ՝ այն մեկնաբանեցին իւրովի, հասնելով չափազանցութիւնների եւ իրականում միմեանց հակադրուելով: Եւ քանի որ բոլորի համար փիլիսոփայութեան ազդիւրը Սոկրատեսի բարոյադիտութիւնն էր, ներանք եւս մեծ մասամբ բարոյագիտական ուղղութեան փիլիսոփաներ են համարւում, թէեւ տարբեր կողմերից մօտենալով հետազոտութեան առարկային՝ հակառակ եզրակացութիւնների էին յանդու: Յիշեալ ուղղութիւնների հիման վրայ հետագայում ձեւաւորուեցին փիլիսոփայական այլ ուղիներ, որոնցից բովանդակութիւն տալով բարոյադիտութեանը: Դրանք էին՝ էպիկուրեանները եւ ստոյկիկները: Հիմնականում նրանց անուանով է բնորոշւում փիլիսոփայութեան պատմութեան աւելի քան 500 տարուայ ժամանակաշրջանը:

Էպիկուրեանները եւ ստոյկիկները երեւան եկան մի ժամանակ, երբ Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալական նուաճումների հետեւանքով նոր իրադրութիւն էր ստեղծուել: Յունաստանից եզրկտուս ու մինչեւ Հնդկաստան եւ այլուր՝ աշխարհակալ պետութիւն էր դոյացել: Ու թէեւ Մակեդոնացուն յաջորդեցին դիագորիները իրենց Թալուսութիւններով, իսկ հետագայում էլ Հոմէրական կայսրութիւնը ժառանգեց այդ Թալուսութիւնների մեծ մասի հոգեւրը, քաղաքակրթական առումով միասնական իրավիճակը տեսց հրկար դարեր, հող պատրաստելով որոշակի մտայնութեան համար: Հելլէնական աշխարհի տեղ դուրս եկան ունէր հելլէնիստական աշխարհը, Հելլէնական մշակոյթին փոխադրուել էր հելլէնիստական մշակոյթը, իրար էին խառնում Հելլադան

ու ասիական արեւելքը:

Վերադառնալով յոյների համար այնքան հարազատ, հասկանալի ու մատչելի քաղաք-պետութիւնները: Ի դժբախտ չէին այլեւս անհատը համայնքին կապող երբեմնի քաղաքացիական ու բարոյական ըմբռումները: Ընդարձակ էին Թալուսութեան պետութիւնների սահմանները: Եւ այն համեմատութեամբ էլ աւելացել էին անհատի մտահոգութիւնները, որը մէկ-մեկտեղ իրեն դնում էր գրեթէ ամբողջ աշխարհի դիմաց, գրեթէ անարժան, անպահով եւ երեւում: Եւր պայմաններին յարմարուելու համար հարկաւոր էր մշակել նոր վարքագիծ: Եւ ահա այդ պայմաններում աշխուժացաւ փիլիսոփայութիւնը, ինքնաբերաբար չեւոր ղնելով անհատի տեղն ու զերը որոշող բարոյագիտութեան վրայ:

Հելլէնիստական ժամանակաշրջանում՝ փիլիսոփայութեան կենտրոն Աթէնքում աղէտ չպատահեց: Պլատոնի հիմնած ճիւղ-կաղիմիան՝ եւ Արիստոտելի հիմնած ճիւղ-ցէյը (նիմարանք) շարունակեցին իրենց գործունէութիւնը, հասցնելով սերունդներ սերունդների յետեւից: Բայց այդ պարագաներ հիմնականում դադարեցին հիմնադիրների ուսմունքը ուսուցանելով, իսկ հետագայում էլ՝ առաւելադէպ մեկ-նարանելով: Ստեղծագործական միտքը տեղից չէր շարժւում: Դա այդպէս էր, որովհետեւ իմացաբանութեան բնագաւառում ասելիքն ասուել էր եւ ժամանակ էր պէտք իւրացնելու համար: Յամենայն-դէպս, դասական ուղղութեան դպրոցները յետին զիծ էին մղուել:

Մինչդեռ նորայայտ էպիկուրեանները եւ ստոյկիկները զնալով աւելացնում էին իրենց ժողովրդականութիւնը, կողմնակիցներ չանում, աշակերտներ դրաւում հեռաւոր վայրերից եւ իրենց զաւակաւորները քարոզում նաեւ այդ հեռաւոր վայրերում: Սա եւս ցոյց է աւելիս, որ նրանք ժամանակի հետ համաքաջ էին ընթանում եւ գոհացում տալիս որոշ հոգեւոր պահանջների:

Նրանց բարոյագիտութեան առանցքը մարդու երջանկութիւնն էր: Բայց տարբեր պատկերացում ունենալով երջանկու-

Թեան էութեան եւ նրան տանող ճանապարհների մասին՝ այդ դպրոցները հակադրում էին միմեանց։ Թէեւ փիլիսոփաների կենցաղի մէջ էական տարբերութիւն չկար, բայց էութեան, հակառակութիւնը անհիմն չէր, որովհետեւ բխում էր աշխարհաշայնացից եւ թերեւ էլ նրանց հոգեբանական խմորից։ Այսպէս թէ այնպէս, էպիկուրեանները եւ ստոյիկեանները երջանկութեան մօտենում էին տարբեր, նոյնիսկ հակառակ կողմերից։

Սա նշանակում է, որ առհասարակ նոյն բանը անպայման նոյն ճանապարհով չի հետապնդում։ Յաճախ ճանապարհորդ աւելի կարեւոր է համարում, քան նշանակէտը, եւ պատակամունքն էլ հետեւանք են լինում ճանապարհների տարբերութեան։ Նշանակէտը հեռու է եւ վերացական, իսկ ճանապարհը՝ ամէնօրեայ ու անմիջական, որի վրայ աւելի հեշտ է հորեւում, թէ ով ում է հետեւում եւ ում խանդավորում, թէ կուզ եւ փոքրիկ մանրամասնութիւնների մէջ։

Սկզբից եւեթ պէտք է ասել, որ էպի-

կուրեանները արտայայտում էին տեղական, յունական հոգաբանութիւնը, ամփոփուելու արամադրութեամբ, իսկ ըստոյիկեանները, որանք ծնունդով էլ հեռաւոր վայրերից էին՝ կղզիներից ու փոքրասական ծովափերից, նկատի ունէին առաւել յայտնի հորիզոնների տակ ապրող մարդկանց հոգեբանութիւնն ու մտայնութիւնը, բարեկամ էին մեծամեծների՝ եւ խորթ չէին համարում բնդարձակ պետութիւններն ու այդ մեւով մեծ թւով դանդաղածներ նոյն մականի տակ հաւաքելու մզտումները։ Այդ իւրայայտուկ աշխարհաբաղադրական մտայնութիւնը ցայտուն կերպով արտայայտում է եւ նրանց ուսմունքի մէջ։

Թէ՛ էպիկուրեանները եւ թէ՛ ստոյիկեանները իրենց խօսքն ուղղում էին անհատին աւելի շուտ՝ փիլիսոփաներին, որոնց միջոցով էլ ուղում էին տարածել իրենց դադարների։ Բայց ոչ մի հասարակական քաղաքական յատուկ համակարգ նրանք չէին յաւանդում առաջարկել, քանզի այդ բանը իրենց դուրծր չէին համարում։

(Շար․ 1)

Լ․ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ւ Տ Ե Ա Ն

ՖՐԱՆՍԱԿԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

ԱՆԻՄԵԱԼՆԵՐՈՒ ՆՈՐԱԳՈՅՆ ՍԵՐՈՒՆԴԸ

«Ազէտ մըն է բանաստեղծ ծնիլ գիտութեան եւ ուսողութեան դարուն մէջ», կը բացագանչէր ասկէ մէկուկէս դար առաջ Լամարթին, «եւ բանաստեղծ ըլլալը ամէնէն մեծ յանցանքն է ա՛յն մարդոց աչքին, որոնք կը տիրեն ճիշտակամ աշխարհին վրայ»:

Պատէր աւելի հետուները կ'երթայ, եւ իր «Օրինութիւն» քերթուածին մէջ կ'ըսէ հետեւեալը.

Ա՛ն, ինչո՞ւ աշխարհ չրելի իժերու համգոյց մը,
Փոխանակ ալգանդիս մէջ կրելու այս վիժուկը:

«Վիժուկ»ը բանաստեղծն է:

Մէկ խօսքով՝ բանաստեղծը երկինքէն իջած սեւ հրէտակ մըն է, աքսորուած մարդոց մէջ, որոնք զինք չեն հասկնար եւ կ'ուզեն վրէժ լուծել ահոր վեհութենէն, զայն կը ծաղրեն ու կը տառապեցնեն:

Այսօր կացութիւնը աւելի ահաւոր է, որովհետեւ վրէժ լուծել կամ տառապեցնել կը նշանակէ կարեւորութիւն տալ: Այսօր մարդկային ընկերութիւնը ո՛չ միայն չ'արհամարհեր կամ չի ծաղրեր բանաստեղծը, այլեւ կատարեալ անտարբերութիւն կը ցուցարբէլ անոր հանդէպ:

Բանաստեղծները կ'անդրադառնան, որ կը կատարեն մարդկային ամէնէն վտանգաւոր պաշտօնը եւ կը քալեն նեղ արահետի մը վրայ, որուն մէկ կողմը կայ զարհուրելի դեպքերութիւնը, եւ միւս կողմը՝ մահը:

Անոնք, որ կը շլանան աջ կողմի լոյսէն, բնագոյրաւ կը շնորհի դէպի ձախ, դէպի մահաւան անդունդը, լուսթիւնը նկատելով արտայայտութեան գերադոյն եղանակը:

Անոնք կը դիմեն անձնապահութեան՝ բողոքելու համար մարդկային ընկերութեան կուրութեան եւ անտարբերութեան դէմ: Մարդկային ընկերութիւնը, նախնական ցեղախումբերէն մինչեւ քաղաքակրթուած մոդըրնիզմը, անձնապահութիւնը կը նկատեն աններելի ոճիւր մը, տեսակ մը դասալքութիւն անհատական պատասխանատուութիւններուն առջեւ: Բոլոր

կրօնքները, միաստուածեան կամ բազմաստուածեան, անհատին անձնապահանութիւնը կը նկատեն անբուհի ոճիւր մը աստուածութեան դէմ :

Այս բոլորը գիտնալով հանդերձ, այն բանաստեղծները, որոնք կամովին վերջ կը դնեն իրենց կեանքին, նկատուած են տեսակ մը հայէններ, յաւիտենական անիծեալներ :

Անձնապահութիւնը ունի զանազան զրդապատճառներ, — խելագարութիւն, թշուառութիւն, սիրային յուսախաբութիւն, զաղափարական եւ քաղաքական տարակարծութիւն, մահացու հիւանդութիւններու կամ մահապատիժներու կանխում :

Բանաստեղծներու պարագային այս բոլորը կան անշուշտ, բայց կայ աւելի վե՛հ զրդապատճառ մը, որ ճակատագրական բնոյթ ունի : Բանաստեղծին որդեկորած ուղին կը ատնի յաճախ անելի մը առջեւ : Այդ անելի յաղթանարեւու երկու ելք կայ միայն, կա՛մ հրաժարիլ բանաստեղծութենէն եւ դառնալ հասարակ մահկանացու մը, կամ նեւաւելի անէութեան անդունդին մէջ : Շատ քիչերը, սակայն, քաջութիւնը կ'ունենան ընելու այդ անդառնալի ոտտումը :

Գրականութիւններու պատմութիւնը կը յիշէ այդ անիծեալներէն ու մանց տնունները : Շարքը էջեր պիտի լեցնէր : Պիտի բաւականանա՞նք յիշելով ամէնէն ծանօթներուն անունները :

Թոմաս Չլորրթըն, անդլիացի, որ թոյն խմեց 18 տարեկան հասակին : Ժերար տը Ներվալ, Ֆրանսայի մեծագոյն բանաստեղծներէն մէկը, որ ինքզինքը կտիւնց Գլունուարի ցուրտ գիշեր մը, մութ փողոցի մը մէջ :

Եղիս Տէմիրճիպաշեան, հայ գրականութեան խորհրդաւոր քորմը, որ նոյնպէս ինքզինքը կտիւնց :

Կարմիր յեղափոխութեան Ռեմպոն, Սերգէյ Եսենին, որ ատրճառակ պարպեց իր գանկին մէջ :

Մեղ հետաքրքրող ժամանակաշրջանին՝ անձնապահութիւնը կարծէք համաճարակի բնոյթ առած է երիտասարդ բանաստեղծներուն շարքերուն մէջ, մանաւանդ գերիբրապաշտութեան տիրապետութենէն ետք :

Այստեղ պիտի գրադինք այն բոլոր երիտասարդներով, որոնք ծնած են 1930(էն) ետք, ու իրենց պատանեկութեան, ապրելէ ետք Համաշխարհային Երկրորդ պատերազմի դժոխային անդունդներ, յուսախաբ եղած են անոր յաջորդող մռայլ ու նիւթապաշտ վաղորդայններէն եւ իրենց ներշնչումը ներկած են սեւ ու անդարձանելի յոռետեսութեամբ մը, որմէ խուսափելու համար ոմանք դիմած են թմրեցուցիչներու, ուրիշներ՝ բանաստեղծութեան : Իսկ ոմանք այս բոլորը անբաւարար նկատելով իրենց մղձաւանջին ամոքման, դիմած են գերադոյն թփշկին՝ մահուան :

Հարկաւ վարը յիշուած անուններէն ոմանք զեռ կ'ապրին, անոնք պիտի գառնան ապաղայի սեւ աստղերը եւ առանց վհատելու պիտի շարունակեն արտադրել այն քանը (բանաստեղծութիւնը), զոր ոչ ոք կը կարդայ կամ կը ղնահատէ : Բայց աւելի լայն տեղ պիտի տանք այն միւսներուն, որոնք նախնաբեցին դառնալ սեւ հրեշտակները խորհուրդի երկնակամարին վրայ :

Միշտիկ ՏԼԿԻ. — Մնած է 1930ին: Կը նկատուի իր սերունդին ամէնէն արժէքաւոր բանաստեղծներէն մէկը: ՏԼԿԻ խորաթափանց եւ խուզարկող միտք մըն է, որ յանդգնօրէն կ'ընթանայ դէպի ներշնչումի կոյս անդաւաճանները: Իր արուեստին երանդները եւ պատկերներուն տարողութիւնը կը յիշեցնեն Սէն-ձոն Փէրսը:



ԽՈՎԱԾՈՅԸ

Երկար ամառը կը սկսի ինձ, ուր կ'անի ու կը նուագի փառասիրութիւնը,
Եւ կ'ապրիմ մարախներու ճշացող պտուղներուն տակ
Եւ թուղթէ միջատներու մէջ, գորս հովը կը ցրուէ.
Հաճար կայ գրագէտին ծունկերուն վրայ եւ կոհակին կ'անձրեւին ցորենները.
Ականջը գրած հոգին վրայ կը լսէ ամառ արիւնը.
Ան անգարծ է:

Տեսարանին անիւր կը դառնայ արեւի փառքին տակ,
Երկինքին ներմակ երիզները կ'ուղղուին երկրագունտէն անդին,
Կողմերը կը ծուռան, մակընթացութիւնը երեւան կը հանէ լորներու
Փեթակներ, որոնք աւերումներու զոյնն ունին,
Ուր կը խմորուին անողմայարները,
Տե՛ս, ծովածոցին հորիզոնական թաւալումը ամբողջ,
Պարապներուն սահիւր եւ կենեղենիներու փունջերուն ճեղքը,
Կանաչ շառաւիղներ հորիզոնի առանցքին վրայ:
Հովը կը խօսի շատ քայտը
Եւ ամառ փորած փոսերուն մէջ կը կծկուին ագարակի շունները,
Արտայտը կ'իյնայ անգողար:
Էութիւնս ամբողջ կը պատասխանէ հովուն, բացի...
Ամէն ինչ կը ճկի՝ միացնող երանգներն տակ,
Մագերը՝ աւելի խիտ դաշտի մը պէս,
Կոհակը՝ միւսն բուններուն, աչքերը՝ բացուած աղին տակ,
Սրունքները՝ փլած բարերուն վրայ
Եւ սայլներու ակոսներուն ձայնը, ամէ՛ն ինչ...
Բացի կանգուն ձայնէն, որ կ'ուզէ հասկնալ ամառ ծնած տեղը, ամէ՛ն ինչ...
Բացի ամառ անմիջանորոքներէն զարամացած ձայնը:

(«Կայտածային սահմաններ»)



Ռոմի ԱՌԵՈՒ ՌԻՎԻԷՐ — Մեծ է 1930-ին և անձնասպան եղած է 29 տարեկան հասակին մէջ: «Ապրեցայ՝ գիտնալու համար, բայց չգիտցայ ապրիլ», կը գրէ իր բանաստեղծութիւններէն մէկուն մէջ, Ռիվիէրի ներաշխարհին մէջ գոյութիւն ունէր անդարձանելի ճեղք մը, ուրկէ կը ժայթքէր իր ներշնչութիւնը, Ջոյսուն, խելացի, մշակուած և ոչրեւապաշտ՝ Ռիվիէր իր միտքերը կը ծածկէ խորհուրդի և դադունիքի երկաթէ վարագոյրին ետեւ, հանրութեան չյայտնելու համար իր էութեան ծալքերը:

ԵՍ ԱՅԳԱՐԱՑԻՆ ԳԳՈՒԱՆՔՆ ԵՄ

Ես այգարացիմ գգուանքն եմ, կէսօրուան բիրտ խոյանքը եւ իրիկուան դաւադիր դարձումքը,
Ես զիշերուան զլխապտոյտ տուող ցցունութիւնն եմ եւ ցերեկուան ճնշող հորիզոնականութիւնը,
Ես գագաթներն եմ ու վիհերը՝ գագաթներ, ուրկէ վաք կ'իյնամք վստահաբար, վիհեր, ուրկէ չենք կրնար դուրս գալ:
Գիտեմ, որ տառապանքի նամբան ունի սահմանափակ թիւով կայաններ,
Գիտեմ շունչի ընդհատումը, շնչահատութիւնը, ապականած շունչը՝ ածխային կազի սփռումը,
Գիտեմ ունայն գիրկընդխառնումները, յախճապակիներու վրայ ցայտող սերմը,
Կը ճանչնամ դիմացիծը այն քառին, որ ձեզ վնասեց ապտակի մը պէս,
Գիտեմ, որ սէրը եւ քարեկամութիւնը միջուկ չունին,
Գիտեմ, որ կտրուած պարանոցներ, կտրուած վիզը, եինցած ներքանը ունին հասարակ յայտարար մը՝ — չունան:
Գիտեմ, որ պայթիւնը կը պարունակէ աւելի ձայնի ծաւալը, քան արտի քաթախումները, որոնք կը կառուցանեն ամբողջ կեանք մը:
Ապրեցայ՝ գիտնալու համար, բայց չգիտցայ ապրիլ:

Ո՛վ կին,
Լուսաշող սկիւն
Վէրքերուս եւ ըզձանքներուս,
Ուր մահս ապաստան կը գտնէ...

(«Բանաստեղծութիւններ»)

ԺԱՆՓԻՆՔԻ ՏԻՒՓՐԻ.— Ժանֆրէր Տիւփրէ ծնած է Ռուան, 1930ին, զպրոգի նստարաններուն վրայ կը կարգայ Արթուր Ռեմպո, կը հետաքրքրուի գրական շարժումներով, կը դրէ բանաստեղծութիւններ: 1944ին կը հաստատուի Փարիզ եւ կը դարձակցի գերբնական շարժումներ:

Իրարու հետեւէ կը հրատարակէ «Ստուերին ետերը», «Ուրուականներ», «Աղեղնաւոր ստուերը», «Սրբապիղծ տնտաւը», «Ճերմակ հագած ժամանակը»:

1951ին՝ կը լքէ բանաստեղծութիւնը եւ կը սկսի փորագրութիւններ ընել երկաթի վրայ: 1958ին՝ ըմբոստ կեցուածքին համար կը մերժակալուի, կը բանտարկուի, յետոյ կ'արդէն փախուի Սէնթ Միքէլ մտային բուժարանին մէջ: Հոն է, որ 2 Դեկտեմբեր 1959ի ազատացին, զայն կախուած կը գտնեն իր խուցին մէջ: Իր ծնած օրէն, Տիւփրէ անգոյշէ մղում մը կը գոչուի մահ: Դասարանի նստարաններուն վրայ գրած բանաստեղծութիւնն կը քողենք հետեւեալ յատկանշական երկու տողերը:

«Ես անոնցմէ եմ, որոնք չեն տեսներ ծովուն մակերեսը, այլ անոր յատկանշական երկու տողերը»:

«Ես անոնցմէ եմ, որոնք աչքերը մեկնած են հորիզոնէն անդին»:

Ուրիշ անգամ մը բրած էր հետեւեալ խոստովանութիւնը, որ կը յիշեցնէ Վիլիս ալ Լիլ Ատմի տեղեկանքի հառաչանքը.

«Լիլ, պիտի յմտնամք երբեք այս մտորակը»:

Տիւփրէ բաժնէր. «Ես այնքով ունիմ մեր մտորակին հանդէպ»:

Տիւփրէի համար բանաստեղծութիւնը ազատագրումի արտայայտութիւնն է: Բառերը կը վերածուին մոխրի եւ միտքը կը թաղուի անոնց մէջ: Տիւփրէ կը մեկնի տեսանելիէն՝ հասնելու համար անտեսանելիին, ընթերցելիէն՝ անթերցանելիին...

ՄՈՆԻՏՐԵՐՈՒ ՎԱՐԴԸ

Վարդէ ձեռք մը կը հանգչի սեւ առաքելայի մը վրայ, Ի՞նչ կը մնայ, Ի՞նչ կը մնայ: Երկինքէն, որ ուրուականներու նմաբնութեամբ հսկայ կերպաս մըն է եւ որուն աչքերը կը լեցնեն միայն անկախապիներու պարապութիւնը: Մարդ մը կը տեղափոխէ գիշերը. ան մեռած կնոջ մը երազն է: Ան իր մէջ ունի գիշերուան տեսլիւն անգամը եւ անոր պոփոկները պիտի տեսնեն ապրողներուն ժամը:

Անտառի ֆայլ մը կը գոցէ լուսնեան փոսը: Եւ աստղը կը տեղափոխուի:

Հարսանական սեմակին մէջ կը մշակուին սեւ սրտեր: Լորեքթա, Օլիմ հալածուած իրենց շաւերէն: Կշիռը հակեցաւ անգուններուն կողմը: Պատերու երկայնքին կը վառուին մոմակալներ, որոնք չեն լուսաւորեր, այլ կը ցոլացնեն մեռելներուն աչքերը, բնակիչները:

Եւ հիմա, «օ՛ն, առա՛ջ», կը հրամայէ ուրուական տասնապետը: Ուշադրութիւն: Ստորերկրեայ խորութիւն մը, ստորերկրեայ աշխարհներու կանչը կ'ընկելու խորաշարժ անցեալի մթաթիւններուն մէջ: Կանչ մը երկար, պարապութեամբ զանգակներուն պատասխանն է, պարապութեամբ զանգակներուն, ծածկուած պարապութեամբ:

Օ՛, աշխարհի պատմութեան մէջ միտած փուշը:

(«Նպատակը եւ ձեռք»)

ԺԱՆ ՊՐԸԹՈՆ. — Ծնած է Ավինյոն,
1930ին: Արհեստով գրավաճառ է: Ան հա-
կառակ է գրական դպրոցներուն եւ կ'ա-
ռաջարկէ բանաստեղծութիւն ժը, որ
մարդկային մակարդակի վրայ բլլայ:

Իր գործերէն յիշենք՝ «Կայր դէմք»
(1955), «Միս եւ արեւ» (1960), «Ար-
գիլուած պոետներ» (1960), «Ոչ բնի»
(1964), «Մարմիններու ամառը» (1967):



Ա Ն

Բռնացմները ցոյց կու տար արեւին,
Զուրը կը ճանկատէր եղունգներով.
Եւ կը զարնէր հսկում կոնակին:

Ան մեծ էր լուսանքի մը չափ
Եւ մարմինը կը ճկէր պարապութեան մէջ:

Երեւակայական անուններ,
Այնքան քաղցր, որքան խնձորի գինին.
Ի գուր կանչեցի գայն
Թուի քաղաքս եւ հասարակութիւնս,
Թալանուած ժողովուրդներս
Զայրացած եղեամբ մը կռիւմէ:
Սիրտս կը դողար ապակիի մը պէս:
Կարելի չէ առանց ճիգի բանտել փոթորիկը:

(«Միս եւ արեւ»)

ՏԱՆԻԷԼ ՍԵՐԵՐԱՆ.— Ծնած է 1932ին :
Ան ունեցաւ ողորդական ճակատագիր
ժը : Անոր կենքը տեւեց 17 տարի միայն ,
որովհետեւ անձնապահ եղաւ 1949ին :
Մեռնելէ առաջ՝ սեզանին վրայ ձգած էր
խոշոր պահարան ժը , որուն մէջ կային
երկու դպրոցական տետրակներ եւ քանի
ժը թերթիկներ , որոնց վրայ տարաբախտ
աղջիկը գրի առած էր իր բանաստեղծու-
թիւնները , որոնք պիտի կաղմէին հաւոր
ժը՝ «Օսթրաք» անունով : Այդ տողերը կը
հանդիսանան արդի բանաստեղծութեան
ամէնէն սրտակեղեք ճիշերը :

Օ Ս Թ Ի Ա Ք

Պիտի փորձէք ամուսն տալ , բայց անկեղծ ըլլալու համար ըսեմ , որ
պիտի չկարենաք ներքեք գիտ անուամբ , որովհետեւ ետ բացակայ եմ բացա-
կայութեան գագաթը : Դուք՝ որ գիտ ամէնէն լաւ կը ճանչնաս , բան մը չես
գիտեր իմ մասին , ոչ թէ որովհետեւ ինքզինքս կը բողբոջեմ , այլ որովհե-
տեւ ամէն ինչ գիտեմ կը բողբոջեմ : Ես կը նմանիմ գետերու սուր գոնիկութեան ,
որոնք կ'անգիտանան իրենց վրայ նետուած շիւղերը , որոնք չեն գտար իրենց
ծոցին մէջ թափուող կլար խիւսերուն առնական եամբ : Անոնք խաւ ու կոյր
են , անթեւ եւ անսրմամբ , անոնք նոյնիսկ համը են :

Ես ապակի մը եմ՝ ապակիներու պալատին մէջ , ես ոչինչ կը բաժ-
նեմ : Դէմը տեսնելիք բան չկայ : Ետեւը բնաւ տեսնելիք բան չկայ : Կոյրը
գիտէ լոյսին յիւրանաւատութիւնը :

Մի՛ լինք երբեք գոհաբերութեան կայծաւոր , որովհետեւ Աստուծոյ
խնայմանը անշափելի են : Ըսէ տեղեկ , որ դուք ընտրուած թագուհի ես ,
կատարելու համար սրբապաշտութիւնը , եւ թէ՛ առանց քեզի կրակը գոյու-
թիւն պիտի չունենար այս երկրին վրայ , ուր ցօղցները կը միան խոտերուն
մէջ : Հանգչէ՛՛ միայն ինծի հաւատալու ստրատիկն մէջ , որովհետեւ ես եմ
այն միակ ստրուկը , զոր պիտի կարենաս օր մը այրել : Պիտի բացա՛վառիմ
փրկութեանդ պահուն եւ վերջին համբոյրդ պիտի ըլլայ պղպեղը վերջին
վրայ , որ պարտականութիւն ունիս երանելու : Միակ ժպիտս կը ծնի հա-
յածուած անձկութենէս , այս երկիրներուն աւերակներէն , որոնք երբեք չկըր-
ցան հաւատալ անուան : Ես ծնած եմ՝ ատելութեանդ զագաթնակէտին քեզի
հանելի ըլլալու համար : Ես ծնած եմ՝ քեզ կառուցանելու համար ամօքամե-
քներով , եւ քեզ փնայնելու համար ամէնէն յարմար ժամուն : Ես կը կռուիմ
հաւատարմութիւն ընտրուած մահուան :

Քրիստոս մտաւ հոգիիս մէջ եւ ինծի ըսաւ . «Ո՛չ շատ ուշ է եւ ո՛չ ալ
կամուխ : Բալար իջեալները գիրար կ'արժեն : Անոնց տեսողութիւնը ոչ մէկ
նշանակութիւն ունի : Ամէնէն կարեւորը այն պահն է , երբ փայտին շեղբը
կը մխրձուի սրտին մէջ : Այն ատեն երկրպագեցի եւ մրմնջեցի . «Ամէն ,
Ամէն» :

(«ՕՍԹՐԱՔ» անտիպ հատորէն)

ՏԱԼԻՆԻ ԱՊԷԼ. — Մենք է Շաթել-Սիւր-Մոզէլ, 1933ին: Իր բանաստեղծի տապա-
րէզը կը պարտի երկարատեւ հիւանդու-
թեան մը, որ իրեն առիթը ընծայեց ըն-
տելանալու Միւսի, Պրըթոնի եւ Արթոյի
գործերուն: Մտերմացաւ Անարէ Պրըթո-
նի եւ անոր կողակիցին հետ: Ապէլ կը
զրադի նաեւ գծագրութեամբ: Իր «Սպա-
նաթիւններ» հաաորը ցարդ անախդ կը
մնայ:

Ո Ր Բ

Տունը հրդեհելէ առաջ, մեծ հայրս արգելափակած էի պահաբանին
մէջ, մեծ մայրս թխմած էի հացի սնտուկին մէջ, հայրս ու մայրս բանտար-
կած էի շտեմարանին մէջ:

Զեռք ճեռքի բռնած՝ վալանթին եւ ես կը դիտէինք հրդեհը:

Յանկարծ մայրս երեւցաւ պատուհանէն եւ ռտքը դրաւ ելարանին վրայ:

Ամէն ինչ պիտի վերսկսէր.

Ելարանը քաշեցի արագօրէն, մայրս քաջախոսեցաւ գետին,

կրակը սկսաւ ճարճատիւ աւելի ուժգնօրէն:

Այլեւս որք էի: Վալանթինը չեցի առաջին քառուղիին վրայ ու հեռացայ

սուլիւնով:

Հիմա աշխարհը կապոյտ առազաստանաւ մըն է եւ հլու իմ ըղձամեծներուն:



ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԱԿ

Քեզի հասնիլը անբաւարար կը նկատեմ,

Կը վագեմ դէպի քեզ

Եւ պատերը կ'անէտան մշուշէ զանգուածներու պէս

Եւ տուններու տանիքները անգղի թւեր եմ

Եւ ուղղաձիգ փողոցները կը սուրան նիզակներու պէս...

Մկաններու իւրաքանչիւրը կը պատրաստուի ցայտելու.

Մարմինս պատռած է անշարժութեան պատանքը,

Մարմինս փշրուած է իզոներու կացինին տակ,

Մարմինս վերագտած է հեշտանքին թոյրը,

Կը լսեմ ճարճուած միսիս կանչը:

(«Սպանութիւններ»)



ՄԱՐԺ ԱԼԻՆ.— Ծնած է Փարիզ, 1937ին: Քսան տարեկան էր, երբ արժանացաւ Մաքս Ժաֆույ մրցանակին, «Միւսներուն ժամանակը» հատորին համար: Փարիզի Թոհուրոհը արդեւ կը հանդիսանար իր ներշնչումին: Լեւոյ մայրաքաղաքը ու հաստատուեցաւ Իւդէս քաղաքին մօտերը, միայնակ ազարակի մը մէջ: Հիմա ան բանաստեղծական մատենաշար մը կը գեղաժարէ Ֆլամանրիոն հրատարակչատան համար:

Իր գործերէն յիշե՛ք՝ «Միւսներուն ժամանակը» (1957), «Այլի կրակը» (1959), «Ջնջելիներ» (1962), «Գերազայն գիշեր» (1968):

ՀՈՆ ՌԻՐ Կ'ԵՐԹԱՆՔ

Հոն՝ ուր կ'երթանք, միջոցը ծծումք է, եւ վազք՝ անշարժութիւն:

Մեր հետ կը տանին շատ քիչ բան, գիտնալով որ այդ քիչն ալ

Մեզմէ պիտի խլուի:

Հոն՝ ուր կ'երթանք, բառերուն յատակը — որ լռութիւն է — կը շոյէ մեր
ձեռներուն անգոյ ասքը:

Եւ հիւսիսն մէջ, երբեմն, եթէ պատահի, որ քիչ մը աւելի երկար ըլլայ,

Յաւիտեականութիւն մը կը կորսնցնենք ուզելով զայն բռնել:

Հոն՝ ուր կ'երթանք լաւ կամ գէշ, հագիւ կը տառապինք:

Ո՛չ բոցեր, ո՛չ հրէշներ, միայն անգոյ շրթունքներուն վրայ ազի անորոշ
յիշատակ մը

Եւ այն խենթ գաղափարը, թէ առաքաստանաւ մը ծովուն վրայէն

կ'առաջանայ մեր կողմը:

Հոն՝ ուր կ'երթանք, ժամանակը կ'երազէ գոյատեւել, ծնիլ ու մեռնիլ,

Առանց դադարի, ծխորով, ալիքներուն եւ հովերուն հետ:

Ազատագրուած իրենց կաղապարներէն, մեր շարժումները կը հետեւին
մեզի,

Պէտք է աւելի սեղմուինք՝ անոնց տեղ բանալու համար

Ստուերի շեղքին վրայ, ուր կը ճօնուինք

Գլխապտոյտի երկու ողկոյզներուն միջեւ:

Հոն՝ ուր կ'երթանք, անհուն գիշերը կը ծուարի,

Անոր սեւ ճիւղը կը սասի հինցած շրթունքներուն մէջէն

Մինչեւ անգոյ մկանը, որ կը շարունակէ բաթսիսի եւ յիշել

Իր երբեմնի վանդակին մէջ:

(«Ջնջելիներ»)

ԺԱՆ-ՖԻԼԻՓ ՍԻԼՎԱՊԻՆՈՅ (1940-1969) .-

Մալապրէօյ դասուած է անիծեալ բանաստեղծներու շարքին, որովհետեւ ան, իր 29 տարի տեւող կեանքին ընթացքին, ապրեցաւ մահուան գաղափարով եւ ուղեց օր առաջ հետախուզել անոր անընային տիկերբը:

Ան հիացաւ աշխարհի պարզ զեղեցկութիւններուն առջեւ, բայց ամէն անգամ որ բախեցաւ մարդոց բրտութեան եւ անտարբերութեան, զգաց, որ այս այն աշխարհը չէր, որուն մէջ պիտի ուզէր ապրիլ: Ժայռերու եւ խութերու դարձնուող հեղեղի մը պէս՝ ան վերջապէս գտաւ իր բանաստեղծական հունը, բայց արդէն ունայնութեան ովկիանոսը զինք տոած էր իր կոհակներուն մէջ:

Իր կարճատեւ սապարէզի ընթացքին Մալապրէօյ փնտռեց ու գտաւ ինքնուրոյն լեզու մը, խորունկ, ամուր ու մոգական:



ՆԱԽԱՐԻ ԳԱՇՏԱՎԱՅՐԻ ՄԸ ՎՐԱՅ

Այդ բանը կը սկսի եւ նոյն վայրկեանին մէջ կը վերջանայ: Աշխարհէն հեռու կորսուած երկշատ քոչուինի մը կորստուած ողբը: Մերադրած սեւ խոտերուն մէջ եւ հագած հնամաշ ծիրանի մը, ան է (թանձր մութին մէջ մեր նիւար ու վայրենի սպասուհին), եւ առանց աղմուկի կը մրթմոքայ աղօթք մը: Կարծր իրիկուն մը զգեստեց ցերեկը գիշերուան ետեւէն, դարերէ ի վեր աղփատիլ պարտեղին մէջ: Այսօր, ան անելի դանդաղ եւ անելի ուշադիր, զիս կը գտնէ, եւ ես ալ զինք կը գտնեմ ու կ'երթանք միասին սալքելու մէկս միւսին մէջ:

Այս խոսվառնոյց կէտին վրայ երկինքը վերցուցած է հիւանդ տանիքիս տնկիւնը: Հիմա եւ դէպի հիւսիս լոյսերով բնակուած ամպ մը կը ծփայ զիշերուան առջեւ: Ան կը նմանի մշուշներու մէջ կորսուած, լուսաւորուած բնակարանի մը, որ կը յառաջանայ այդ անբերրի բարձրութեան վրայ: Բայց մեր տունը երկրագունտի մեր տունը մութ է եւ միմակ եւ իր դուռը կը բանայ մարած խորութեան վրայ: Այն պահուն, երբ հոն կը մտնեմ մեկական պայուսակ բռնած ձեռքիս մէջ, կը լսեմ վայրագ աղբիկը՝ ցցուած կոնակիս վրայ, որ կը դիմաւորէ զիս եւ դարպասը կը գոցէ շտառով ու կը փախչի նամբուն վրայ:

Մենակեաց՝ ես անուն չունիմ: Պիտի իսկեմ խաւարի արտիս վրայ՝ ինչպէս անանուն լեռ մը լամբարներու ձիւնին մէջ:

(«Անդունդին ճշգրիտ վերադարձը»)

ԹՐԻԽԹԱՆ ՔԱՊԻՏԱԼ.— Բուն անունով՝
Սամուէլ Ռապօ, ծնած է Նիմ քաղա-
քին մէջ, 1944ին: Երկրորդական ուսու-
մը իր ծննդավայրին մէջ աւարտելէ
ետք, Թրիսթան կը շարունակէ ուսումը
եւ կը ձեռնագրուի պատուելի: Բողոքա-
կան համայնքի իբր ժողովրդապետ՝ կը
դրկուի Միջօ քաղաքը, ուր դաշխակղու-
թիւն կը ստեղծէ իր ըմբոստ կեցուած-
քով եւ քարոզներով: Ժողովուրդը կը
հրաւիրէ բժրոստութեան:

Այս կեցուածքին համար կը հեռաց-
ւի եկեղեցիէն եւ կը դառնայ գործօն յե-
ղափոխական: Կը ժամակցի 1968 Մա-
յիսի խռովութիւններուն, մաս կը կազ-
մէ պաղեստինեան Ֆետայական խմբե-
րուն եւ քիւրտ բժրոստներուն: Կ'անցնի
Թուրքիա եւ պայքար կը մղէ ընդդիմա-
դիրութեամբ շարքերուն մէջ: Կը ձերբակալ-
ւի, կ'ենթարկուի շարժարանքներու եւ
բանտարկութեան: Ծրանսական կառա-
ւարութեան միջամտութեամբ ազատ

կ'արձակուի: Երբ կը վերադառնայ իր
հայրենիքը, արդէն երեւան կու գան խե-
լադարութեան նշանները: Կ'արդէլափակ-
ւի Քիտաքի մտային բուժարանը:

1972ի ամբոյն օր մը, ղինք կախուած
կը գտնեն միջանցքի մը մէջ: Թրիսթան
Քապրալ 24 տարեկան էր:

Մէկ խօսքով, Քապրալ մարդկային
ընկերութեան ողջակէզն է, ընկերութիւն
մը, որ կը խեղդէ իսկայի բժրոստները
իւր կոյր մեքենային գլաններուն տակ:

Թրիսթան Քապրալ չէր խօսեր վա-
ճառականներու, ելեւմտադէտներու, զը-
բաղէտներու, հասարակ մարդոց լեզուն,
այլ արդէլաբանի մէջ փակուած մահա-
պարտի մը լեզուն, աւելի ճիշդ՝ այդ
մահապարտին արձակած աղաղակները
եւ լուտանքները: Ան ձայն էր, որ կը
բարբառէր անապատին մէջ, եւ որովհե-
տեւ արտասանած վանկերը կը վերաու-
րէին, կ'արբեւէին կոկորդը, օդնութեան
կանչեց մահը, որպէսզի ղինք լուցնէ:

Ահա իր բանաստեղծութիւններէն քանի մը նմայնէր.

✱

Թո՛ղ վիզս կարեն կտրօճի մը գլուխը,
Թո՛ղ երակներուս մէջ ներարկեն կարկուտ,
Ես պիտի չդադրիմ հարցնել քէ ինչո՛ւ,
Զեմ մոռնար ամբողջ աշխարհի արիւնը.
Ինչո՛ւ միտս կը փտի ամէն տեղ, ուր կը լռեմ,
Եւ ինչո՛ւ կը կարծեմ, որ ունիմ անչափելի մարմին մը.
Կը գինովեամ՝ բերնիս մէջ քացուած վերքերէն,
Կ'ուզեմ վերջ տալ կեանքիս՝ ամէն ինչ օդը հանելով
Եւ սահեցնել մորթիս տակ ժանտաւնոյի բոյրեր:

✱

Բայց արդէն շատ ուշ է՝ ամէն ինչ վերսկսելու համար,
Առաւօտը կը ինքի գաւաթիս մէջ
Եւ ես կը փսխեմ տառերներ քարէ ծունկերուս վրայ.
Ո՞վ գիտէ, քերեւս այսօր կախուած մը ունեցեմք:

(Շար. 8)

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

ԲԱՐՈՒԹԵԱՆ ԱՍՊԵՏ ՀԱՅ ԳՐԱԳԷՏԸ՝ ՈՒԻԼԵԸՄ՝ ՍԱՐՈՅԵԱՆ

Կենսքը դիտելու, ապրելու, հեզնելու ամբողջական արամագրութեամբ հայեցի, Ուիլեմ Սարոյեանի գրական կուռքը իրենց գեղարուեստական այնքան լեցուն հարստութեամբ եւ բանաստեղծութեամբ, իրենց տիպարներուն զուարթախոհութեամբ եւ առինքնող մթնոլորտով՝ կրնան փառքը կազմել ունէ ազգի գրականութեան:

Անոր բոլոր հերոսները՝ բոլոր գէպքերուն մէջ եւ յարաբերութիւններու ընթացքին կեանքին վերէն նայելու եւ աշխարհի բաներուն վրայ ծիծաղելու անըստ արամագրութիւններ ունին:

Արտասահմանեան առաջին եւ մեծագոյն հայ դրացեան է Սարոյեան, որ այնքան բարձր կարելիութիւններով օժտուած արձակով մը յաղթական մուտք գործեց ամերիկեան գրականութեան մէջ եւ նախանձելի բարձունքներ նուաճեց միջազգային գետնի վրայ:

Իր ստեղծագործութիւնը համեմուած է ամէն բանէ առաջ բանաստեղծականութեամբ մը: Կեանքի բոլոր երեւոյթները բանաստեղծական պայծառութեամբ կը վերլուծէ. արագ, հատու, ջգային, ծիծաղով ու քաջշուքով, պատրաստարան եւ սրամիտ:

Այդ բանաստեղծականութիւնը կը գտնենք իր գրեթէ բոլոր հերոսներուն մօտ՝ նպարտաճառ ըլլան անոնք, ազարակապան, բանուոր, հեռագրիչ թէ լրագրագնաց: Որովհետեւ իր գրականութեան հիմը կը կազմեն անեղծութիւնը,

բնականութիւնը եւ հարազատութիւնը: Այս էտտարբերը, երբեմն խոցելի ուժգնութեամբ իոկ գրապէտ Սարոյեանին գլխաւոր առաքելութիւնները կը կազմեն եւ իր գրական մթնոլորտը համակող ջերմութեամբ մը կ'օժեն:

Սարոյեանի արագ գրիչն ու խիտ ակնարկները հոգեբանական աղուոր պահեր տեղեկ վրտնն. պահեր, ուր բառերէն վերջ լուսութեամբ, մարդոց խօսիլ կուտայ, լուսեան մէջ այնքան վառ, իմաստալից եւ սրտցաւ երկախօսութիւն մը կը կատարուի յաճախ հերոսներուն միջեւ:

Բառերուն մասին խօսելով՝ Սարոյեանի «Անունս Արամ է» հատորին հերոսը տեղ մը կ'ըսէ. «Ընդհանրապէս մեծ օգուտ մը չունին անոնք: Մենք զանոնք կը գործածենք անի շատ քաջցնելու ինչ որ իրապէս ըսել կ'ուզենք եւ կամ ինչ որ չենք ուզեր, որ ուրիշներ գիտնան»:

Բնութենապաշտ մըն է Սարոյեան, որ բնութեան զանազան երեւոյթներուն մէջ իմաստ եւ արժէք կ'որոնէ եւ զանոնք կը բացատրէ մարդկային արամագրութիւններով: Նոյնիսկ բնութեան զարգացումներուն եւ փոփոխութիւններուն մէջ կը փնտռէ մարդկային մեր ալլազան վիճակներուն պատճառները:

Բնութեան հանդէպ իր պաշտամունքը ուժական բնոյթ ունի սակայն: Որոյհետեւ, իր առաջագրած բացատրութիւններուն ան կը միացնէ իր սեփական եւ գործնական իմաստասիրութիւնը, արագ եւ խիտ վերլուծումներով, առանց ճառի,

առանց զարգացմանի մարդանշանի, որովհետեւ կենսի զարգացումներուն հետ կը վազեն իր դէպքերը, իր ստեղծած պահերը անուամբ եւ գերաճումի միայուն գործընթացի մէջ են եւ այս արագութիւնը կարծէք զինք կը զարգանան անհեթեթի գրադարս: Կենսի ամէն օրերգութիւն, մեր առօրեան լիցնող ամէն պատահար, հանդիպում, շահ եւ դուրսութիւն՝ իրեն համար անքննելի արժէք, որքան գաւաթ մը ողիւնի ըմպելիին տուած արքայականը:

Բարութեան զրոյնում. — Բարութեան, ժպիտի, արդարութեան կարօտ է Սարգիսի հոգին: Ժպիտ ու քնքշանք, մարդկայնական նուիրում, բարեացակամութիւն կը փնտռէ մարդոց մօտ եւ անոր պոյութեամբ շատ յաճախ կ'արժեւորէ թեւէ մարդ:

Իր հերոսները ո՛չ միայն չար չեն, այլեւ իրենց անմիջական շրջապատին բարիք ցանկացող, անոնց ուրախութեամբ վերացող, անոնց վիշտերով, տխրութիւններով տառապաւոր: Անոնք իրենց բոլոր կարելիութիւններով կը փափաքին մարդկային խոր անկեղծութեամբ օգտակար ըլլալ ծանօթ թէ անծանօթ բոլորին:

Երբ «Մարդկային կատակերգութիւն» գործին մէջ երեք զինուորները արձակուրդով կը գտնուին այլ քաղաք մը, կը հանդիպին երկու աղջիկներու, որոնց կ'առաջարկեն պատերազմի ընթացքին իրենց միօրեայ արձակուրդը միասին անցընել եւ անծանօթ աղջիկները կ'ընդունին անոնց հաճելի ժամեր շնորհել, առանց որեւէ յետին նպատակի, մարդկայնական ոգիով:

Սարգիսի վերջին վէպը՝ «Հայրիկ, դու եւ խնձոր»-ն, իր ստեղծագործութեան եւ մարդկայնական ըմբռնումներուն ուշադրաւ եւ յստակ խտացումը կը հանդիսանայ:

«Մարդկային կատակերգութիւն» հատորին մէջ սկսած սեմպլիզմը այստեղ ամբողջութեամբ կը պրկուի եւ այդ հանդամանքը այնքան զեղեցկօրէն կը ցուցնէ կենսի մօթ ու պայծառ օրերը: Հոն կայ արժամարանք՝ մարդութիւն-

ներուն, անտարբերութիւններուն, նիւթական եւ անցողիկ բարեքնիւն հանգիստ, ու հրճուանք՝ զեղեցիկ պահերու, եղած նուաճումներու հանդէպ: Ահա թէ ինչու, այս երկու վէպերուն մէջ դիտարկողները փոքրիկներն են: Ասոնք երեւութապէս անշտիմահաններ են, սակայն իրականութեան մէջ անոնց բերնով, անոնց կողմէ բանաձեւուած վճիռները դառն ճշմարտութիւններն են, ու զեկուցումները՝ մարդկային բաղձանքներ, բարութեան ու անկեղծութեան ձգտումներ:

Ինչպէս Տոսթոյեւսկին իր «Գարաւազով եղբայրներ» անդուգական վէպին մէջ մանուկը իմացակա՞ն այնքան ուժեղ պակասով մը ներկայացուցած է, նոյնպէս Սարգիսի վէպերուն մէջ մանուկներուն կարեւոր դերեր կու տայ: Անոնց աշխարհով կ'ուզէ դիտել ու պարզել, անոնց չափանիւնն եւ ըմբռնումներուն վեհութեան դէմ կ'ուզէ դնել կենսաքի եւ մարդկութեան շարունակները:

Եւ որքան ծանօթանանք Սարգիսի գործերուն, այնքան կը սիրենք իր մանուկները՝ Համբար, Իւլիսիս, Օկին, Լալոն, Շէկը՝ իրենց խորափնտրումով, սխալներով, մեծ-մեծ ապրումներով, փոքրիկ ուրախութիւններով եւ միշտ՝ ծառայելու, օգտակար հանդիսանալու բաղձանքներով, այնպէս՝ ինչպէս մեծերը՝ Սիմոնով, Կրտին, Պէյֆիլտը, Արամը, Հայրիկը:

Պատերազմի աւերը չէտուած է իր բազմաթիւ էջերուն մէջ: Դժգոհ են մարդիկ, որոնք իրենց հարազատներէն կը բաժնուին թերեւս անվերադարձ: Անոնք սիրոյ, բարութեան եւ ժպիտի մթնոլորտէն պոկուած՝ կը տարուին մահուան, սփռի եւ ակամայ սպանութեանց: Բայց գիտակից եւ յուզիչ Հայրենասիրութիւն մը զիրենք կը զինէ հպարտութեամբ, կը մոռնան ամէն դժգոհութիւն, կ'արհամարհեն մահը եւ իրենք զիրենք կը պրկեն մեծ սիրով մեռնելու Հայրենիքին համար:

Տարբեր ժամանակներու, տարբեր պարագաներու տակ արձանագրուած զէպեր եւ խտացուած ու բռնուած պահերը կը բացատրեն գերիշխանութիւնը

տիպարներու կեանքին, կը բացատրեն մա'նաւանդ նիւթակունէն եւ Ֆիզիքսիկոսնէն անդին անցնող անոնց ուղին, ապրումնէն ու անկատար ձգտումները: Ասոր համար ալ մարդկայնական ազնիւ խորքով օժտուած են անոնք:

Ողեկան ապրումներու այս կարեւորութիւնը կը բխի ենթագիտակցական կեանքի, յիշատակներու, անցեալի եւ ներկայի, երազի եւ իրականութեան միաձուլումէն: Աւելի'ն. միաձուլումէն ժամանակի եւ տարածութեան, հոգեկան հակադիր միջակներու եւ արամադրութիւններու: Եւ ամենայն աւելի քան իրական կը դարձնէ իր վէպերը:

Մարդկայնականութեան վրայ մեծ հաւատք ունի Մարոյեան: Նկարագրելով հանդերձ ապականութիւնները, մարդոց չարութիւնները, ոճերները, կ'ընդունի, թէ չարութեան կողքին անոնց մէջ գոյութիւն ունին բարի սերմեր: «Մարդկային կատակերգութիւն» հատորին մէջ ուշադրաւ է աս հաստատուածը. «Գնորդմանը եւ բանտերը լեցուն են ամերիկացի բարի երիտասարդներով, որոնք պարզապէս չորս բախտ ու դժբախտ ճակատագիր ունեցած են: Չարագործներ չեն ամենքը»:

Այսպէս կը խօսի հեռագրատան տնօրէնը, որուն ճակտին գինուոր մը ուղղած է իր ատրճանակը, անկէ պահանջելով ունեցած ամբողջ գրամը:

Իր հերոսները:

Անոնք հեռու են կոխէներէ, ոճերներէ, իրարանցումներէ: Բոլորն ալ կը սիրեն յարգել իրենց անմիջական բարեկամը, խոտակիցը, յարաբերական կեանքի մէջ ինքնատիպ, երբեմն խենթ բլլայու տոտիճան հատկեղորոն, բայց միշտ ուժեղ անհատականութեամբ օժտուած, առանց բախելու ուրիշներուն, ընդհակառակն, գերուսմանթիք բլլալով հանդերձ, զգացումներուն մէջ չեն խեղդուիր, իրենց զգացումներուն թէ մտածումներուն նըպաստը առարկայական է, իսկ միասը՝ ենթակայական:

Բայց անհրաժեշտ է շեշտել այն հայեցի կամքն ու վճռականութիւնը, որոնցմով օժտուած են գրեթէ իր բոլոր

հերոսները: Ինք՝ հեղինակը, այս երկու առաջինութիւններուն հաւատացող է: Իր հերոսները, կեանքի դժնդակ պայմաններուն մէջ իսկ, իրենց զօրաւոր կամքով եւ վճռականութիւններով կը յաջողին մարդոց ակարութիւններով հիւսուած միջավայրային վնասեցուցիչ երեւոյթները նուաճել, նոյնիսկ իրենց նպատակներուն մէջ չկարենալ յաջողելու պարագային իսկ՝ մնալ անդաւաճան, միշտ հաւատարիմ, իրենց առաջադրութիւններուն եւ սկզբունքներուն:

Արդեւքներ, խոչընդոտներ միշտ գոյութիւն ունին, բայց փոքրիկ չորմբէն սկսեալ մինչեւ Սփէնկլոր, մինչեւ շաբաթիկը զինուած են այդ արդեւքները յաղթահարելու ուժականութեամբ:

Հայրեմիթի սփոստանէ՛ր... Ափսոսանք՝ այո՛, բայց երբեք սուղ ու սղբ: Սփոռաբաճայ զրազէտներուն մէջ այն քիչերէն է Մարոյեան, որուն համար հայրենիքի կորուստը որեւէ բարեգոյթ չէ բուսեղծած:

Հայ է ինք: Հայ կը զգայ, հայութիւն կ'ապրի իր բոլոր առողջութեան մէջ: Հայկականութիւն կը շնչէ:

Բայց եւ ամերիկեան քաղաքացի է: Այս իրողութիւնը եւս իր գրականութեան կը բերէ շատ անկեղծ եւ հպարտ շնչաւոր մը: Ինքզինք ամբօրէն, անթերի քաղաքացի մը հռչակելէ ետք, իր բոլոր դատումներուն եւ հակադրութիւններուն մէջ, միշտ ներկայ են իր ցեղին ենթագիտակցական զեղումներն ու պոռթկումները:

Ամերիկեան՝ իր ժողովուրդով, իր քաղաքներով ու բնութեամբ՝ Մարոյեանի տիեզերքն է, ստիպան այդ տիեզերքին մէջ իր բոլոր գործերուն զխաւոր հերոսը եղող հայ տղուն՝ Արամին՝ այնտեղ գտնուած բլլալու հիմնական իմաստը կը բացատրուի:

Մեր հայրենիքին, մեր կոտորածներուն մասին ողբեր, ճառեր չէք գտներ Մարոյեանի մօտ, նոյնիսկ թուրքին դէմ ատելիւթա խօսքերու քիչ կը հանդիպիք, սակայն այնպիսի ուժգին, այնպիսի՝ զօրեղ անհրաժեշտութիւններ կան, որոնք մանրամասնութիւն բլլալով հանգեւր ընդհա-

նուր համարուադին մէջ, զայն կ'օժտեն իր իմաստին վայել արժէքով: Մտածել տուող խորհրդածութիւններ, նիւթէն փախող պատկերներով իրենց հետ կը տանին ընթերցողը, նոյնիսկ տողերէն անդին, նոյնիսկ հետագայ հիւսուող պատմութենէն անդին, բարի ժպիտներով ընթերցողին փափաւով, թէ ո՞վ է այդ մարդը, որ այսօր ամերիկացի է, բայց երէկ հայ էր, թէ այսօր է ա՛յն, ինչ որ երէկ էր, բայց ուժգնօրէն կ'ապելով երէկի եւ այսօրուան շղթան:

Ինչուներ չկան իր ժօտ: Կորստեան ափսոսանք չկայ, մեկնակէտը թանձր իրականութիւն մըն է, թանձր զգայնութիւններով: Ժողովուրդի մը զաղթական վաւերներուն նոր նուաճումներուն, տառապանքներուն եւ ձգտումներուն թարգմանն են իր էջերը:

Եւ այս ամպխիւններն ճամբով է, որ Սարոյեան կը բանայ իր նոր հոգին, իր հայու հոգին. ու իր բացուած հոգիէն աւազօրէն կու գան Գարօղիւսները հրապարակութեամբ կամ դժբախտութեամբ մուտք գործելու նոր աշխարհէն ներս, իրենք զիրենք պարտադրելու ամերիկեան ընկերութեան:

Ու իշխում Սարոյեան խորհուրդներու, խորհրդապատկերներու, գործնական իմաստութիւններու քննդակողն է: Ան արթուն, սրամիտ ընթերցողները զիտէ շարժումի մէջ դնել եւ մասնակից դարձնել իր հերոսներուն գործունէութեանց:

Անոր գրականութեան հոգեբանական տարողութիւնը ըմբռնելու համար անհրաժեշտ է յամենալ դէպքերու, դժգեքերու, կարճ նկարագրութիւններու եւ մանրամասնութիւններու վրայ, որոնք բոլորն ալ մեծ գրողէտին տաղանդով օժտուած են:

Այս մանրամասնութիւնները, նիւթ նիւթ ուսումները, անոնց լույստայն, բայց իմաստային հաղորդակցութիւնները դերիտապաշտ նախատարբերու հանդուրժելի նպատակով մը կ'օժտեն իր գրեթէ թաւալող տողերը:

Պարզ ու անպաճոճ մահկանացուներ են իր վէպերուն մարդիկը, մենք ենք, բայց ընթերցողներն են, որոնք իրենց դժբախտութիւններուն թէ ուրախութիւններուն մէջ կը յաջողին զանազան կապաւորակներ, որոնց հետ կը նոյնանան եւ այդ նոյնացումով իսկ կը սփոփուին:

Ամերիկացի, հայ, պոեմ եւ գրադէտ:

Ահա այն մարդը, որուն ամբողջ կեանքը ինքը վէպ մըն է, ուր անգամ մը եւս մարդկայնական արժանապատուութիւնը կը յաղթանակէ, ուր անգամ մը եւս հողեկան թոխշները կ'արհամարհեն մեղ իրենց ճիրաններուն մէջ բանտող նիւթը, ուր մարդոց հետ եւ մարդկութիւնը իմաստաւորող արժանիքներու խտացումին, թանձրացումին վայելքը ժպտուն կերբով մը կը բացալայտուի:

Իսկ կիրքի բնական ելակէտը, ծագման օկնադրերը, նման անխարդախ ոգիի տէր արուեստագէտի մը համար չէր կրնար բլլալ աւելի խոր, քան իր նոր շրջապատին բարեքները, չէր կրնար անցնիլ այն Գողգոթային, ուրկէ անգամ են իր ցեղին բոլոր օժտեալ ու ծիծաղկոտ Սարոյեանները:

Շէ, շատ բնական է, այս ոգիին անգիմադրելի պոռթկումը անուրանալիօրէն ամերիկեան գրականութիւն զառնալով հանդերձ, իր մէջ կարծիք դոյներու առողջ երանգներով կը յամառի պահել հայկական ոգին:

Սարոյեաններ ի՞նչ լեզուով ալ գրեն, ի՞նչ թեմաներու շուրջ ալ ուղեն կառուցանի իրենց մաքի եւ զգացումներու աշխարհները, չեն կրնար ձերբազատուիլ Պիթիսէն, Տրապիզոնէն, Պոլսէն:

Մշտանորոգ գրագէտն է ան, որուն աչքերն ու զգայարանները նոր աշխարհին, նոր միջավայրին հարազատ ըլլալով հանդերձ, հոգին տակաւին կը միայն հայրենի աշխարհին կարօտով:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Յ. Ն Ա Գ Ո Ւ Լ Ե Ա Ն

ՓԱՐԱՃԱՆՈՎԻ ՀԱՄԱՐ...


1973ի վերջին ամսոյն, Քիւնի մէջ ձերբակալուեցաւ ու չորս տարուան քանտարկութեան դատապարտուեցաւ Սերգէյ Փարաճանովը (Փարաճան-եան)՝ «Լեյթանիկ շահագիտութեան եւ միասնականութեան յանցանքներով»։ (Այլ մեղադրանքներ եւս եղան թերեւս, որոնք առայժմ յայտնի չեն)։ Մեր նպատակը ռուս համարել չէ տուեալ մեղադրանքները, բան մը, որ ներքին օրէնսդրական հարց մըն է, բայց մեր մտահոգութիւնը այն է, որ ըստ տը-նայններուն, վարագոյրի ետին ծրագրուած հալածանքի նորօրեայ, մուրք ու քաղաքական ճակատէն մէկն է ասիկա։

Անոր քանտարկութեամբ ժողովուրդի մը մշակոյթէն կը խլուի չորս տարուան փարաճանովեան տաղանդը, որուն վրայ կը գումարաւին աճորդ-բեղիւք ենթացողի հետեւանքները։ Բան մը, որ թեթեւ գացում մը չէ հայ մշակոյթին համար։

Բանտարկութեան շարժանքը՝ ժողովուրդի թշնամի, դաւաճան կամ խռովարար չէ այս պարագային։ Միւս կողմէ, սակայն, վիճելի իրականու-թիւն մըն է։ Մա՛նաւանդ երկրորդ կէտը, միասնականութեան հարցը (Փա-րաճանով ամուսնացած է գեղանի կնոջ մը հետ) եւ այդ պատճառով մեծ ար-ւեստագէտ մը (ըստ շատերու, էյզընշտայնէն ետք մեծագոյնը հորիզոնային Միութեան մէջ) քանտարկելը ծիծաղելի է մա՛նաւանդ այն երկրին մէջ, ուր առիթաբեղով մէկ ծանօթ միասնականի մը՝ Չայնովսկիի «յեղափոխական» անհուտն ու գործը հասցուցած են երկինքները։

Ինչպէս որեւէ երկրի դատական խնդիրներուն մէջ՝ այնպէս եւ խորհր-դային օրէնսգիրքի յօդուածներուն յաճախ կը կցուին մեղմացուցիչ հանգա-մանքներ։ Օրինակ, երկար տարիներ կուսակցութեան ծառայած քլլալու հան-գումանքը։ Միւս կողմէ՝ մարդկային տեսակետէն, իսկապէս մեղմացուցիչ հանգամանք մը չէ՞ մշակոյթին եւ, հետեւաբար, ժողովուրդին ծառայելու անփոխարինելի հանգամանքը։ Վերջին հաշւով, ճայնիք խորհրդային հիմ-նարկութիւններն էին, որոնք իբր ժապաւէններէն մէկը՝ «Հրեղէն ձիեր»ը ար-ժանացուցին 16 մրցանակի։


Մեր խօսքը Փարաճանովը դատող ու քանտարկութեան դատապարտող ուժբանացի դատարաններուն չէ ուղղուած, այլ Հայաստանի պետու-թեան ու մշակութային կազմակերպութիւններուն (Գրողներու Միութիւն, Արտաստեանի հետ Մշակութային կապի կոմիտէութիւն, խմբագրութիւն-ներ, եւ այլն), որոնք իբրեւ պետութիւն ու ներկայացուցչական եիմարկու-թիւններ՝ պատասխանատու են հայ ժողովուրդի մշակութային ներկայ պետ-ւութեան եւ, հետեւաբար, իրենց գործն է Փարաճանովը ազատ արձակելու գլխաւոր պարտաւորութիւնը։ Մեր կողմէ, մեր սրտագին փափաքն է, որ ա-զատ արձակուի Փարաճանովը եւ կարենայ ի կատար ածել մշակած բազմա-քիւ ծրագիրները, որոնց շարքին կը գտնուի Սասունցի Դաւիթ հեֆիաթը ներկայացնելու կոչուած ժապաւէնը։



ՍԵՐԳԷՅ ՓԱՐԱՃԱՆՈՎ ԵՒ ԻՐ ԺԱՊԱԻՆՆԵՐՈՒՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ :
ՆԿԱՐԸ ՀԱՄԱԴՐՈՒԱԾ Է ՆՈՅՆԻՔՆ ԱՐՈՒՆԵՍԱԳԷՏԻՆ ԿՈՂՄԷ

Ջանազան երկիրներու դատարանները յաճախ դատապարտած են տա-
ղանդաւոր արուեստագէտներ : Կարկառուն օրինակ մըն է ժան ժընէի քան-
տարկութիւնը՝ զոգութեան, միասեռականութեան եւ դէռ այլեւայլ պատ-
ճառներով : Բայց նոյն եւ այլ երկիրներու մշակութային յառաջագէմ կազ-
մակերպութիւններուն եւ անհատներուն պարտականութիւնը եղած է կոչերով
միջամտել ու յանգանքի մեղմացուցիչ համզամանքներով ազատ արձակել տալ
ժընէն, քաղաքակրթութեան, մշակութիւն, մարդկութեան ու յառաջդիմա-
քեան սիրոյն : Վերջին հաշւով, կշիռ մը կայ յանցանքին ու մարդուն ընծա-
յելիք կարելիութիւններուն միջեւ : Մա՛նաւանդ Փարաճանովի պարագային,
այդ կշիռը կը մնայ բալորովին անհաւասարակշիռ :

Արեւմտեան երկիրներուն մէջ եղան քանտարկութիւններ, որոնց կա-
պակցութեամբ խորհրդային մամուլը 250 միլիոն մարդու անունով կոչ ըրաւ
ազատ արձակելու բանտարկեալ արուեստագէտները, ինչպէս պատահեցաւ
Սիկէյրասի, Փապլօ Ներսիսայի եւ ուրիշներու պարագային : Փարաճանովի
պարագային ինչու ոչ մէկ կոչ ո՛չ թէ 250 միլիոն յառաջագէմ մարդոց շար-
քերէն, այլ զանէ՛ Հայաստանի մեր կարկառուն արուեստագէտներէն, պէտք
չեղած տեղը փաստաբան դարձող բանաստեղծներէն :



ՆՄՈՅԵ ՄԸ ՓԱՐԱՃԱՆՈՎԻ ՀԱՄԱԿՐԱՅՈՒՆ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵՆԷՆ

Միջազգային բազմաթիւ դէմքեր ստորագրեցին Փարանաճովը ազատ արձակելու անշահախնդիր կոչեր, ֆելլիին, Անթոնիոն, Ժան-Փօլ Մարթր եւ ուրիշներ: Իսկ Հայաստանի եւ Սփիւռքի մամուլը բոլորովին անգիտացաւ այդ հարցին գոյութիւնը: Մա՛նաւանդ «յառաջդիմական» մամուլը: Հայ մշակայթը հարստացնելու եւ հայապահպանման գործին քաջաբա՛ր լծուած կազմակերպութիւնները, ըստ սովորութեան, մնացին լուռ ու անտարբեր: Իսկ պապանճումը արդարացումը չէ անոր բանտարկութեան: Այս երկիրներում մէջ, ուր մամուլի ազատութիւն գոյութիւն ունի որոշ չափով, արուեստագէտներու հայածանքը՝ տարբեր պիտակներով՝ պէտք է դատապարտուի աչ ու ձախ հատուածներէն միաժամանակ: Բարեբախտաբար, այդպէս է բարձր մակարդակի վրայ: Օրինակ, Արակոնի մը համար դատապարտելի եմ Լորթան սպաննողները ա՛յնպէս՝ ինչպէս Սոյժենիցիներ հայածանքի ենթարկողները:

Խօսք ունենալու հերթը մերն է Փարանաճովի համար: Տարիներ ետք, սխալներու վերագրելու եւ ամոքողական փոխարէն (ինչպէս Զարեմցի, Բակունցի պարագաներում եղան) հիմա է այդ մասին մտածելու ժամը: Հիւանդութեան կանխարգելումը: Խրաժանչիւր հայ մտաւորականի մարդկային պարտականութիւնը:

Յ. ՆԱԳՈՒԼՅԱՆ

Լ Ե Ռ Փ Ո Լ Տ Լ Ա Պ Է Ց

ԳՐՈՂՆԵՐՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ
ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ
ԸՆԹԱՑՔԻՆՀայացուց
ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ

Գրականութեան եւ յեղափոխութեան միջեւ բախումի նուազ ծայրայեղ մէկ օրինակը, թէեւ համաշխարհային չափանիւշով ամէնէն հետաքրքրականը, Ծիտէլ Քասթրոյի Քուպան է։ Անիկա անգամ մը եւս կ'ընդգծէ այն երեւոյթը, որ կը պարզուի ընդմէջ յաղթական յեղափոխականներու եւ գրողներու։ Այստեղ եւս, պարագայական մանրամասնութեանց մէջ, գոյութիւն ունին հիմնական տարբերութիւններ, բայց իբրեւ ընդհանուր եզրափակում՝ նմանութիւնը ակերբախ է։

Երբ Քասթրո իշխանութեան գլուխ եկաւ, իրեն նեցուկ ունէր միջին դասակարգին պատկանող մտաւորականները, որոնք կը դատապարտէին Պաթիսթայի վարչակարգը։ Անոր զաղափարաբանութեան մէջ շատ տեղ չունէր մտաւորական պարունակը։ Քասթրո մտաւորական մը չէր․ ան ինքզինք պարզապէս կը նկատէր իբրեւ «յեղափոխական ամբի մարդ»։ 26 Յունիսի Շարժումին՝ ան արագօրէն կը ձեռնարկէր ինքզինք վերոյիշեալ նեցուկներէն, որոնք աւելի ազատական էին եւ նուազ յեղափոխական, քան ինքը։ Բայց Քասթրո համայնափար չէր։ Ձանազան պատճառներով՝ Քուպայի միայն համայնափարութեան ազդեցութիւնը եղած էր աննշան։ Քասթրո ինքզինք կը հռչակէր «մարքսիստ-լենինիստ» մը, բայց կը խոստովանէր Նոյն ատեն, որ «Քափիքալ»ը կարգացած էր միայն մինչեւ էջ 270։

Քուպայական յեղափոխութիւնը իբր

եռին չունէր տեսական-զաղափարաբանութիւն մը, զոր այլ յեղափոխութիւններ մշակած կ'ըլլային արդէն իշխանութեան գլուխ դալէ առաջ։ Աւելի ետքն էր միայն, որ չփոթ զաղափարաբանութիւն մը մը չափուեցաւ, Թզնիթի տերիւով ծածկելու համար յեղափոխութեան ընթացքը։ Ինչպէս Ձէ Կեփարա իր «Նոթքեր աւտում» ճառերնու համար Քուպայական Յեղափոխութեան գաղափարաբանութիւնը» (Notes for the Study of the Ideology of the Cuban Revolution) գործին մէջ կը յիշէ․

«Ասիկա եզակի յեղափոխութիւն մըն է, որ, ինչպէս կարգ մը մարդիկ կրնան առարկել, կը հակադրուի Լենինի կողմէ արտայայտուած յեղափոխական շուրժումներու ամէնէն ուղղափառ մէկ մասնադրեալին, ա՛յն մասնադրեալին, ըստ որում՝ «Առանց յեղափոխական գաղափարաբանութեան յեղափոխական շարժում գոյութիւն չունի»․․․ Այս յեղափոխութեան գլխաւոր դերակատարները իրարու համընկնող չափանիշներ չունէին․․․ Քուպայական Յեղափոխութիւնը կը սկսի Մարքսիստ հետեւի ա՛յն կէտին մէջ միայն, ուր Մարքս ինքը մէկըն կը ձգէ գիտութիւնը, ուր առնելու համար յեղափոխութեան երացանք․․․ Մարքսեան օրէնքներ գոյութիւն ունին Քուպայական Յեղափոխութեան մէջ, անկախ անկէ, քէ տեսական դիտանկիւմէ ինչպէս կը դաւանին եւ կամ ինչ գիտեն անոր զեկալար-

ները յիշեալ օրէնքներում մասին:

Քաթրօ, որ բռնուած նման յեղափոխութեան տենդէն, բոլորովին անտարբեր էր տեսութիւններու հանդէպ, նոյնպէս կը շէտէր, որ շահկա-մարքսիզմ է փորձել մարքսիզմը պարփակել տեսակ մը կրօնական ուսմունքի (catechism) սահմաններում մէջ: Եւ այսպէս, տոաջին Հերթին, անհրաժեշտութեան պակասէն կերտելով առաքինութիւն մը:

Որովհետեւ Քաթրօ եւ Կեմալա աւերաբարձին ինքնաբերա Քուսայական Յեղափոխութեան համար կը մերժէին Հետեւողական գաղափարաբանութիւն եւ վարդապետական սահմաններ, եւ որովհետեւ նկատելի էր յարատեւ գինւորական վարչակարգը եւ համեմատաբար քիչ տեղ կուտային կուսակցական ընդհանրութեան, անոնք խանդավառութեամբ կը դիմաւորուէին յեղափոխութեան տենդէն բռնուած ճակատին թուականներու թափառաշրջիկ մտաւորականներուն կողմէ: Քաթրօյի մօրուքը (habrudos) կը նուազեցնէր անկէի արտադրիչներուն շահը աշխարհի որեւէ համայնարանէ ներս: «Կուսակցականութեան ռոմանթիկ կոչը թէ-եւ կարելի չէ համեմատել Վա Մարտէշէ-գի» կամ Վիշապալանկանին հետ, բայց Քաթրօ իր գեր-արմատական ժողովրդական Հետապնդումներուն մէջ արտօնեց նաեւ յառաջադիմութեան եւ գրաւորութեան: Բռնանա Բոսանտա, որ այն ատեն տակաւին PCI-ի մէջ կը գտնուէր, «Լիւնիք» թերթին մէջ գրեց խանդավառ յօդուածներ Քաթրօյի մշակութային հանդուրժողութեան մասին. նոյնը ըրաւ նաեւ Ժան-Փօլ Սարթր Վերանա Սուարսի մէջ: Խորհրդային Միութենէն ետք, Սարթրի համար, Քաթրօյի Քուսայան կը զստնար իր երկրորդ Խթովիան: Քուսայա տուած իր այցելութենէն վերադարձին, Սարթր անհրաժեշտութիւն չըզգաց անգամ գրելու, ինչպէս ըրած էր 1954ին Խորհրդային Միութենէն վերադարձին, որ իրենց միութենէն վտարուած գրողներ կրնան իրենք գիրենք վերադարձաւորել՝ «գրելով աւելի լաւ գիրքեր»: Զախակողմեան մտաւորականներ աշխարհի բոլոր կողմերէն խուժեցին Հաւանա,

ինչպէս ըրած էին ատկէ 40 կամ 50 տարիներ առաջ ռուս գրողները, Մոսկուա խուժելով: Քուսայական Ֆիլմեր կարօտախտով մուտք գործեցին Փաքսթինի Հետ, Քաթրօ Տը լաս Ամերիկաները՝ Զախ Գիրք Ակուսութիւն Հետ: Բառաջդիմական ռզմիսներ (bien-pensants) հրախրուեցան մաս կազմելու արուեստի եւ գրականութեան զատակազմերուն, Հաւանայի մէջ:

Այսուհանդերձ, Հաւանայի մէջ գրական յառաջապահութեան երեւոյթները Հետզհետէ դարձան նուազ եւ նուազ վարդապոյն: Առաջին Հերթին փոքր ամպեր երեւցան Հորիզոնին վրայ, օրինակ, Հիմնադրութիւնը Մշակոյթի Ազգային Խորհուրդին, որ իրաւունք ունէր միջամտելու արուեստի գործերուն: Բայց Յունիս 1961ի իր ճառով, հակադրուելով Մարտի եւ Ստալինի՝ Քաթրօ կը մատահեցնէր մտաւորականները եւ գրողները, որ վախճալու ոչ մէկ պատճառ ունին:

«Յեղափոխութիւնը, իր բնութեան իսկ պատճառով, չի կրնար թշնամի մը ըլլալ ազատութեան: Եթէ կարգ մը անձեր կը մտաւորուին, որ յեղափոխութիւնը կրնայ ջլատել իրենց ստեղծագործ եզրին, այդ մտաւորութիւնը անտեղի է եւ իրաւունք չունի գոյութիւն ունենալու... Մշակութային կարգերու մէջ իշխանութեան մը գոյութիւնը չի նշանակեր անպայման. որ այդ իշխանութիւնը կրնայ չարաշահութեան ենթարկուիլ»:

Բայց ամպերը Հետզհետէ կը բարդանային եւ, հետեւարար, աւելի ծեծ թիւով մտաւորականներ սկսան «ֆուլթարկել իրենց ուսմունքը»: Շատեր աջադիմացան, ներառեալ Քաթրօյի պաշտպանները, ինչպէս «Լիւնիք»-ի խմբագիր Կ. Քուսայիլըս Ինֆանթ: Իսկ անոնք, որ մընացին, դէմ յանդիման գտնուեցան Համակերպում պարտադրող աւելի սաստիկ ճնշումներու: Քուսայի համարաւոր բանաստեղծ Հէրպէրթ Փատիլլայի պարագան կուգար լրումը հանդիսանալ այդ ճնշումներուն:



ՀԵՐԹԵՐԹՕ ՓԱՏԻԼԼԱ

1968ին, երբ Փատիլլա՝ իր «Ֆուլերա տել փուելո» բանաստեղծական հատորին համար կը ստանար տարեկան գրական մրցանակը, բանակի հանգչար «Վերտե Օլիվո» կատաղի յարձակումներ գործեց մրցանակը յանձնող դատական կազմին վրայ եւ ամբաստանեց բանաստեղծը աւժն տեսակ մեղքերով, ի՛ մասնաւորի յեղափոխական խանգալաւորութեան պակասով: Միթէ Քասթրօ ինք ըսած չէ՞ր, որ «յեղափոխականը լուստես ըլլալէ զատ ուրիշ ոչինչ կրնայ ըլլալ»: «Վերտե Օլիվո»ի համաձայն, Փատիլլա մէկն էր աւոնոցմէ, որոնց «ռոմանտիկի պակասը համառաւար է իրենց պոետիկագրութեան եւ հակայեղափոխականութեան»: Ատիկա ալիւս մաս չէր կազմեր պաշտանքներու այն շարքին, որ կը գործադրուէր աւոնոցին, երբ Զէ Կելարա նոյն այդ «Վերտե Օլիվո»ի էջերուն մէջ՝ «նոթեր մարդուն եւ ընկերվարութեան մասին» յօդուածով կը գրէր. «Ենչո՞ւ մենք պարտադրուած պիտի ըլլանք գտնելու արուեստի միակ ուղեգիծը ընկերվարական իրաւյաշտութեան ստանձնեալով մէջ»:

Գրական գործունէութիւն վրայ ի գործ դրուած ճնշումները աւելի եւս բացայայտ կը դառնան Փատիլլայի վրայ գործող յարձակումներուն ընդմէջէն: Երիտասարդ Համայնականներու պարբերութեան «Էլ Փելյումս տարալուսո», իր 1968ի թիւերուն մէջ լոյս ընծայած գանազան յօդուածներով Փատիլլան կը յայտարարէր յանցաւորութեան անարժան (viciosus) ձեռնարկ յօդուածներէն մէկը, գրուած մշակութային պաշտօնատար Լիդանտրօ Օթէրոյի կողմէ՝ կը կրէր յատկապէս Ժողովրդական ռեւոլյուցիոնար պարագան ոչ մէկ ձեռնարկէնց Սուզան Սոնթալը «Բամպարք»ի մէջ ստորագրել յօդուած մը (1969 Ապրիլ) «Գարգ մը մտածումներ ուղիղ մտնայարիին վրայ (մեզի համար), սիրելու Գուայանական Յեղափոխութիւնը», ուր ան կը յայտարարէր, որ «Գուայանական Յեղափոխութիւնը գարնանայիւրէն գերեմ կը մնայ ճնշումներու կիրարկումէն» եւ կը վստահեցնէր, որ «ոչ մէկ ճակատագրի գործը բանտ եղած է, կամ է՛, եւ կամ ծախսած է լոյս ընծայելու իր որեւէ մէկ գիրքը»:

Փատիլլա կը ձեռնարկուէր 1971ի Մարտին եւ աւելի քան մէկ ամիս բանտ մնալէ ետք, ստայիներէն ոճին յարմարագոյն եղանակով կը խոստովանէր եւ կ'ընդունէր իր դէմ եղած բոլոր ամբաստանութիւնները: Այո, ինք հակայեղափոխական էր, գէշ բանաստեղծ մը, կողմնորոշուիլ չգիտցող եւ վնասակար անձ մը: Ան տեղեկութիւններ տուած էր CIAի երկու գործակալներուն՝ Ք. Ս. Քարոլի եւ Բենէ Տուսոնի (որոնք Քասթրօյի փառիշտեանի երկու ձախակողմեան բարեկամներն էին եւ որոնք իրենց նորադոյն հաստորներուն մէջ կատաղօրէն քննադատած էին Քուպան): Այսպէս, ուղեկան կը հիւսուէր:

Երբ «Էլ Մոնտ» լման էջ մը յատկացուց Փատիլլայի հարցին, ձախակողմեան մտաւորականների ալիւս չկրցան համբերել: Մարթը, Սիմոն տը Գոփուար եւ այլ «յառաջդիմականներ» խիստ բաւեր պարունակող բաց նամակ մը յղեցին Քասթրօյի, բողոքելով Փատիլլայի պարագային համար: («Էլ Մոնտ» 9 Ապրիլ

64

1971) : 22 Մայիս 1971ին, «ԷՆ Մոնտ»ի էջերում կ'երևներ երկրորդ բաց նամակ մը, զոր ստորագրող 61 մասնորականներու շարքին տեղ գտած էին նաեւ Սուգան Սոթակի, Ալպերթո Մորալիայի, Ժորժ Սէմբրէօնի եւ Քարլոս Ֆունէթի անունները :

«ԷՆ-տէրթօ Փատիլլայի ստորագրած ողբայի խոստովանութեամբ պարունակութիւնը ծնունդ կրնայ ըլլալ միայն յեղափոխութեան արդարութիւնը եւ օրինաւորութիւնը ժխտող միջոցներով : Այս խոստովանութեամբ պարունակութիւնը, իր ինքնանկարագրումին ամենքեք եւ ցնորածին խօսքերով, ինչպէս նաեւ Փատիլլայի պարտադրուած ինքնագնահատութեան ցաւալի հեղեմներով... կը յիշեցնեն Ստալինեան իշխանութեան ամէնէն դաժան վայրկեանները, իրենց կանխամըտածուած դատաստաններով» :

«Փրկեալ Լատինայի Համաձայն (Քուպայական յրատու գործակալութիւն), Փատիլլա կը յայտարարէր վերոյիշեալ ստորագրութեան տէրերուն «զաւաճանութիւնը» (ԷՆ Մոնտ, 30-31 Մայիս, 1971), հետեւեալ բառերով.

«Դուք գարծնալ ալիտի քսէք, որ այս նամակը ես գրած չեմ, որ ասիկա իմ ռմբ չէ. դուք, որ երբեք հետաքրքրուած չէք իմ ռմով, դուք, պարծնաւ՝ ագատականներ, որ միշտ նկատած էք զիս իբրեւ քերան գրող մը, եիմա միայն հաշուի կ'առնէք զիս, յարձակում գործելու համար յեղափոխութեան վրայ... շատ աղէկ, շարունակեցէք ծառայել CIA-ի, կաշաբապաշտութեան, միջազգային հեղափոխութեան : Քուպան պէտք չունի ձեզի» :

Քասթրօ, ինք յոտակացուց կացութիւնը իր մէկ ճառով՝ ուղղուած Կրթութեան Մշակոյթի Առաջին Ազգային Համագումարին, որ տեղի ունեցաւ Հաւանայի մէջ, 30 Ապրիլ 1971ին : Բողոքողներուն վրայ Առաւելագոյն Առաջնորդը կը յարձակէր հետեւեալ բառերով.

«Այս տարիներուն մեմք աւելի լաւ ծանօթացանք աշխարհին եւ անոր ժողովուրդներուն : Յիշեալ ժողովուրդներէն մաս մը կը ներկայացուի այստեղ որոշ

եւ ամփոփ բացատրողականով : Նման անոնց, որոնք իրենք գիտենք կը ներկայացունէին իբրեւ Քուպայական Յեղափոխութեան պաշտպանողները, որոնց մէջ կային իսկական թակարդ լարողներ եւ ծայրայեղականներ» :

Քասթրօ կը մեղադրէր «պուրօրոշ ազատականները» եւ «կենդի ճախակողմեանները», «սոնպները արեւմտեան նորածեւութեան» եւ կը յայտարարէր, որ արուեստի իր մօտեցումը քաղաքական էր՝ եւ կը շնորհէր «մշակութային գաղութարարութեան» մրցոյթը. կը մերժէր քանի մը «կուրսուած ոչխարներ»ու մաշած իրաւունքը : Քուպայական Յեղափոխութեան գրական հետեւորդներուն դէմ իր դայրոյթը բարձր էր եւ յստակ. ոչ մէկ քննադատութիւն կը թոյլատրուի եւ պիտի չհանդուրժուի ոչ մէկ «կենդի բարեկամ», որ կ'իյնայ այդ մեղքին մէջ : Ներքին ճակատի վրայ, «Փատիլլայի պարտադրածին ազգեցութիւնը նուազ յստակ չէ քուպացի գրողներու եւ մտաւորականներու վրայ : Ատիկա կը բացատրուէր Համագումարին կողմէ որդեգրուած Յայտարարութեան մը մէջ.

«Կը մերժուին եւ կը դատապարտուին այն բոլոր երեւոյթները, որոնք արտաքինապէս կ'իմնուած կ'ըլլան ագատութեան գաղափարին համար, քայց կը ծառայեն իբրեւ դիմակ հալայեղափոխական գործունէութեան թոյնին եւ կը դաւեն յեղափոխութեան գաղափարաբանութեան, որուն վրայ հիմնուած է ընկերվարութիւնն ու համայնավարութիւնը» :

Համագումարին Յայտարարութիւնը կը մէկտեղէր չարք մը չափանիշներ, որոնք կը միտէին Կրթութեան եւ մշակոյթի դաշտէն ներս միօրինակութեան ըստեղծութիւն, գործադրելով պաղաւտաբանական կուռ վարդապետութիւն եւ աւելի խիստ հսկողութեան միջոցներուն վրայ : «Պոսիմիա» շարաթաթերթին նուազ կատարի խմբագրապետը՝ Էմիլիօ տը լա Օզա կ'արձակուէր, մինչ ծանրաշուք զվերտէ Օլիվօյի նախկին խմբագիր եւ Փատիլլայի խիստ քննադատ Լուի Փաւսն կը յայտարարուէր Մշակութային Ազգային Խորհուրդի ղեկավար : Փատիլլայի

կիներ, Պելլիս Քիւզա, կը մերժէր Արեւմտեան ձախակողմեան գրողներու բողոքը իր ամուսնոյն պարսպային դէմ, իրրեւ ճանաձօթ գրողութիւնն: Քիւզա-Տէ լաս Ամերիկաս»ի տնօրէնուհին՝ Հարտի Սանթամարիա անհրաժեշտ գտաւ ինքզինք մերսագատելու անոնց յայտարարութիւններէն, պաշտպանելու համար մտաւորական ազատութիւնը, փերուցի գրող Մարիօ Վարկաս Լիոզայի ուղղուած իր մէկ բաց նամակով, ուր կը պաշտպանէր պաշտօնական գաղափարները:

Արեւմտաքի ձախակողմեան բողոքող գրողներ կ'աջտորուէին դէպի Թշնամի ճամբարներ: «Յառաջդիմական» զբաղանթեան եւ յեղափոխութեան միջեւ՝ հովուերգութիւն մը եւս վերջ կը գտնէր:

Յեղափոխական բազմաթիւ շարժումներու ընդմէջէն կ'անջատուի կէտ մը, որ պարզապէս շատ յատկէ է. ինչ ալ ըլլան յեղափոխութիւններու ազդեցութիւնները, որքան ալ օգտակար կամ փնտաւար համարուին անոնք, տնտեսափոխ յուսախաբութիւն եւ յաճախ ողբերգութիւն պարունակող աւարտ մը կը բերեն եւ յեղափոխական, եւ նախապետական վարչաձեւերով խանդավառ գրողներուն: Ուրիշ առկարէշներու մարդիկ կրնան կամ չեն կրնար օգտուիլ յեղափոխութենէն, բայց գրողները որոշապէս կը տուժեն: Արեւմտեան Եւրոպայի մէջ անոնց եւ իշխանութեանց միջեւ եղած բախումը կը հաստատուի այդ պարագան: Այդ բախումը կ'արդարացուի այն իրողութեամբ, որ յեղափոխական բոլոր վարչակարգերը, ի բաց առեւել Եւրոպայի ժողովրդային, ներածւած էին արտաքին աշխարհէն եւ անոնցմէ եւ ոչ մէկը տեղական ներքին բնոյթ կը կրէր: Բայց Եւրոպայի մէջ անկամ գրողները տառապած են նըմանօրինակ ճակատագիրներէ եւ հակազդած վաւերական յեղափոխութիւններու մէջ միտքուած իրենց բնկերգերը գրողներու արարքներուն: Լեհաստանի,

Հունգարիոյ, Չեխոսլովաքիոյ եւ Արեւելեան Եւրոպայի այլ երկիրներու գրողներուն տնկախութեան համար մը զած պայքարին պատմութիւնը կարելի չէ ամբողջութեամբ մէջբերել հոս: Արեւելեան Գերմանիոյ Մտաւորականներու Ուփաքանդը, Լեհաստանի 1956ի Հոկտեմբերը, Հունգարիոյ 1956ի յեղափոխութիւնը, Փրակայի 1968ի վաթուշը իրողութիւններ են, որոնց մէջ գրողները խաղացին տիրապետող զերեր: Արեւելեան Եւրոպայի մէջ ամէնուր, մարդիկ պատրանաթափ եղան՝ իրենց պարտադրուած «յեղափոխական» վաթականարներուն հետեւանքով: Նոյնի եղաւ նաեւ պարագան յեղափոխական գրողներուն:

Վերջին պատերազմէն առաջ՝ Լեհաստանի մէջ մշակուեցաւ յեղափոխական շատ սահմանափակ գրականութիւն մը: 1920ական թուականներուն, համայնափար երեք բանաստեղծներու յեղափոխութիւնը փառաբանող գրութիւններ կը հրատարակուէին «Յրեք Երեք» (Three Salvoes) խորագրին տակ: Տիտը հեղինակելով մը՝ խորագրերը դրեթէ մարգարէական էր, թէ եւ ոչ նպատակադրուած իմաստով: Այդ երեք բանաստեղծներէն երկուրը ապանուեցան Ստալինի հրամանով: Ուստիւրուկի՝ 1932ին: Սթանա՝ 1938ին: Երրորդը՝ Պրոնիւսկի, բանաստեղծական դատաւարաւուեցաւ 1940ին, երբ ինքն ալ ինքզինք գտաւ Խորհրդային Միութեան մէջ: Ան զրկուեցաւ կեդրոնացման ճամբար մը, բայց աւելի ուշ, զօրավար Անտրեւի բանակին հետ կրցաւ խոյ տալ Խորհրդային Միութենէն: Պատերազմէն ետք, վերագործաւ Լեհաստան եւ աւելի էտք գրեց պընանալէգներուն յատուկ ոճով բանաստեղծութիւն մը՝ «Ձօն Ստալին»-ին, որ տեղ գտաւ անգամ գաղափարներու էջերուն: Ի վերջոյ, ան դարձաւ Բրոնիսլաւ Սալայմով եւ մեծաւ իբրեւ մարդկային խիսակ մը: Ան հուշակուած է յեղափոխութեան երգիչ, մինչ խորհրդային բանտերու մասին գրած իր բանաստեղծութիւնները, ինչպէս նաեւ Ստա-

յին ժոնուած բանաստեղծութիւնը, ի նարկէ, ուշադրութեամբ վերանայուած են: Համայնափար ուրիշ առաջնակարգ լեւ գրող մը՝ Պրուէո Ճասյենսկի, կը նկատուի լեւ գրականութեան մէջ ապագայապաշտ դպրոցին հիմնադիրներէն մէկը: Ճրանսայի մէջ ան գրեց յէյ մը՝ «Ես կ'այրիմ Փարիզը» (Je hais Paris), հետեւողութեամբ Փօլ Մորանի «Ես կ'այրիմ Մոսկուան» երկին: «Ես կ'այրիմ Փարիզը» պրակ առ պրակ լոյս րնծալուեցաւ «Լ'Էսպրանթէ» մէջ: Ապա Ճասյենսկի անցաւ Պորհրդային Միութիւն, ուր ստանձնեց Համաշխարհային Պրոլէտ Գրողներու Միութեան օրգան «Լիթերատուրա Միոսլոյ Ռեվոլյուցիոն» խմբագրութիւնը եւ, աւելի ուշ, խմբագիր դարձաւ նաեւ Ռուսիոյ մէջ լեւերէն լեզուով հրատարակուող «Քիւլլիւրա Մոս» անուն թերթին: Ճասյենսկի գրեց նաեւ այլ յէյ մը՝ «Մարդ կը փոխէ իր մարքը», ուր քնարական պարբերութիւններ կ'երեւէին էնքայիտայի վերագատարակելի գերը գովերգող, բայց 1937-ին դատապարտուեցաւ Փասէլ Ետտինի կողմէ եւ ձերբակալուեցաւ: Ան մեռաւ կեղրոնացման ճամբարի մը մէջ, 1941ին:

Յեղափոխական ուրիշ լեւ գրող մը՝ Ալեքսանտր Ուաթ, որ թէեւ անգամ չէր կոտակցութեան, բայց կը վարէր լեւ համայնափար օրգան «Գրական ամսաթերթ»-ի խմբագրութիւնը, բանտարկութեան դատապարտուեցաւ Լվովի մէջ, 1940ին: Պատերազմէն ետք, Ուաթ վերադարձաւ Լեհաստանի մարդկային խնակի մը պէս՝ իբրեւ հետեւանք Պորհրդային ճամբարներու մէջ տպած իր տաժանագին տարիներուն: Ան մեռաւ աքսորի մէջ, Փարիզ:

Համայնափար այլ երեք գրողներ՝ Անտրզէժ Սթափար, Ստալինսլաւ Վայկոտովի եւ Իկոր Նէվէրլի պատերազմէն ճողպրեցան: Առաջինը մեռաւ Փարիզի մէջ, ուր տեղւոյն լեւ գաղութի ամսաթերթ «Քիւլլիւրայի» մէջ ստորագրած էր գրական քննադատութիւն մը համայնափար վարչակարգին մասին: Երկրորդը 1968ին անցաւ Իսրայէլ, իբրեւ «սիրոնիստ» հալածանքի ենթարկուած ըլլա-

լով: Երրորդը հղաւ ազատական մտաւորականութեան սկսած դիմադրութեան առաջնորդներէն մէկը, նախ՝ Կոմուլթայի իշխանութեան տակ, եւ ապա, Կիւլրէքի օրօք:

Նոյնանման զէպեր պատահեցան Արեւելեան Եւրոպայի այլ երկիրներուն մէջ եւս:

Հունգարիոյ մեծ բանաստեղծը՝ Աթթիւս Ժոզէֆ, որ աւելի ուշ անձնասպան եղաւ, պատերազմէն առաջ արգէն իր կայսերը խցած էր համայնափար կուսակցութեան հետ:

Չեխոսլովաքիոյ մէջ համայնափար գրադէտ եւ բանաստեղծ Չախա Քայանտրա իբրեւ Թրոցքիստ ձերբակալուեցաւ 1948ին եւ, աւելի ուշ՝ զնդակահարուեցաւ:

Համայնափար վարչակարգի տակ ապրելով աւելի եւ աւելի մեծ թիւով գրողներ պատրանաթափ եղան: «Իրաւաւմի Խժով եւ Լիթերարնի Նովինի» (աւելի ուշ Լիթրի) հանդէսներուն աշխատակիցներու շարքը կը պատմեն իրենց անհատական պատմութիւնները:

Արեւելեան Եւրոպայի երկիրներուն մէջ սթափումի օրինակը չվիճակուեցաւ տարեց գրողներու, որոնք շխմնալիտառութեամբ փարեցան յեղափոխութեան, ինչպէս, օրինակ, պատահեցաւ վերոյիշեալ լեւ գրողներուն կամ հունգարացի Թիպոր Տէրէյի: Այդ սթափումը պատահեցաւ երիտասարդ սերունդի գրողներուն, որոնք դատարարակուած էին նոյն այդ վարչակարգին տակ. օրինակ, Հրլասքօ եւ Մրոգէք՝ Լեհաստանի մէջ, Պիէրման՝ Արեւելեան Գերմանիոյ մէջ, Քիւնտէրա եւ Հապէլ՝ Չեխոսլովաքիոյ մէջ, եւ շատ մը ուրիշներ: Յետ-ստալինեան շրջանի սթափումը յաճախ հասաւ մինչեւ սինիզմ: Ատիկա ճնշող սոցիոթութիւն դարձաւ յատկապէս այն գրողներուն մօտ, որոնք լծուած էին «յեղափոխութեան» կառքին, սակայն, այլեւս չէին կրնար իրենք իրենց պարտագրել Նորմատիւթիւնը (Newthink):

Արեւմուտքի եւ Արեւելքի մտաւորականութեան աշխարհահայեացքները եր-

բեմն կը հաւատարին, բայց հակադրու-
թիւնները միշտ աւելի ակնբախ են, քան
նմանութիւնները: Կարելի չէ փորձառու-
թիւնը փոխարինել: Յեղափոխութեան եւ
Իւթոփիայի միջեւ բռնաւած գրողները
գիտէին, թէ գործնականին մէջ զէմ
յանդիման կը գտնուին մտաւարական
պոտենկութեան եւ մարտիրոսութեան մի-
ջեւ կոյսանայիք ընտրութեան մը: Անոնք
գիտէին, թէ որքան դժուար է խօսափել
նման ընտրութենէ մը: Անոնք մեծ մա-
սին համար ամէն տեսակի միջին եւ ող-
բամբանական եզրեր, ինքնախաբէ-
թիւնէն մինչեւ Նորթուք (Newspeak),
անխօսափելի են: Այն շատ քիչ թիւով
հերոսական դէմքերը, որոնք ընտրեցին
մարտիրոսութիւնը (ինչպէս Սոլժենի-
ցին), բացառութիւններ են: Տարօրինակ
է, որ Պարկեշտ գրողներու այս հե-
րոսութիւնը, որ կը կիրարկուի, ի վեր-
ջոյ ամէնէն բնական բանն է. անհրա-
ժեշտ է գրել աշխատէ՝ ինչպէս որ անոնք
իրապէս կը զգան: Գրական ասպարէզին
այս նախատուեալը կը պահանջէ գր-
րեթէ գերմարդկային զօրութիւն, միտ-
ժամանակ հակադրութիւն մը ստեղծե-
լով պետութեան հետ, որ գրողին կը
պարտադրէ զազափարարտական օեղմի-
րան եւ օտարացական ըմբռնողութիւն:

Երբ Մէրի Մըքարթի մը կամ Կրա-
համ Կրին մը կը մասնանշեն, թերեւ
նախանձի հպանցիկ զգացումով մը, թէ
համայնապար երկիրներու մէջ, հակա-
ռակ Արեւմուտքի գրողներուն, «գրա-
պէտները զոնէ լուրջի կ'առնուին», ա-
նոնք չեն անդադառնար, որ գրողները
հոն կը նկատուին պաշտօնական աշխար-
հահայեացքներ տարածողներ եւ ոչ թէ
անհատական հարադատ բժրունքներու
ներկայացուցիչներ: Բա՛ն մը, որ Արեւ-
մուտքի գրողը արդէն լուրջայն բնուո-

նած կ'ըլլայ՝ իրրեւ բնական իրաւունք
մը:

Արեւելքի եւ Արեւմուտքի մտաւո-
րականութեան միջեւ հակադրութիւնը
իրապէս ակնբախ է: Ինչ որ զանոնք ի-
րարմէ աւելի կը բաժնէ՝ կեանքի մէջ
մեւք բերած անոնց տարբեր փորձառու-
թիւններն են, գործնական գիտութիւնը՝
առաջիններու պարագային, տնտեսա-
կան գիտութիւնը՝ երկրորդներուն հա-
մար: Ինչ որ Սիզան Սոնթակ վաւարտ
խանդավառութեամբ մը կ'անուանէ «յե-
ղափոխութեան անխառն զազափար»,
նոյն այդ յեղափոխութեան վարչակար-
գին տակ պարտադրաբար ապրող գրող-
ներու դիտելակերպը ձեռնի մը նուազ
խանդավառ է յեղափոխական այդ ան-
խառնութեամբ: Օրինակներու շարք մը
կարելի է թուել հոս, սակայն, մտաւո-
րականօրէն ոչ մէկը այնքան ԴՄԻԻ է (կամ
սրտառու): Երբեք ճակատամարտ Նոր Զախի
եւ Փրակայի Գարունին ներկայացու-
ցիչներուն, առաջինները տարուած յե-
ղափոխութեան զազափարով, երկրորդ-
ները՝ անոր պակասող «մարդկային դի-
մապծին» գործնապէս իրազեկ:

Դիպուածի բերում չէ մտաւարաբար,
որ ներկայիս յեղափոխութեան զազա-
փարը աւելի կը փայփայուի գրողներու
եւ մտաւարականներու մօտ հո՛ն, ուր
անիկա չէ յաղթանակած, այն տեղերը,
ուր յետ յեղափոխական ըՄԱՅԻՏ կարելի
է ապահովարար անտեսել:

Աւելի դիւրին է հաւատալ մեր ժա-
մանակաշրջանի յեղափոխութեան առաւ-
պելին Սթանֆորտի մէջ, քան, բռնեք,
Չեխովսկիէն կամ Լեհաստանի, որ-
մէ կարելի է հետեւեցնել, որ շերտ հա-
ւատացողներու տոկոսը աւելի բարձր
է Սթանֆորտի մէջ, քան վերայիշեալ
միւս երկու երկիրներու մէջ միասնա-
բար:

ԼԵՈՓՈՒՏ ԼԱՊԷՏ

(Շար. 3)



ԲՅՇԿԱՊԵՏ Է. ԱԼԹՈՒՆԵԱՆ ԻՐ ՓՈՂՈՎՈՒԹՅՆ ՄԻՇՏ ԲԱՐՑՐ...

ԽՈՐԱԳԻՐԸ ՆԿԱՐՈՎ...

Fais ce qui me plaît et je te dirai qui tu es.
JEAN - PIERRE FAYE

Մադրանկարիչ Մաթիսի մատիան էլ չպահանքի վերի նկարը, որ տունում է ընտյի-
րի շարժաթիթերի 1954ի բացառիկէն:

Քսան առի առաջ յղացուած ու ձեւաւորուած այս մադրանկարը, ինչպէս կ'աւանդի
արդէն առաջին ակնարկով, տունալ տրուածին բնորոշ յատկութեամբ տնային տնային
ունի, եւ խոստի է՝ դիմերու ձեւաւորութեան անդին անցնող արժանիքով ձեւ, մարդկային մէկ
ունայնամասութեանը պատկերաւոր դիմով ձեւ մէկ զայտնցուած ըլլալու անմիջականութեամբ:

Նուեւ մասնակիին բնականօրէն ըլլալու ուժով, թելադրանքներով եւ ինչ-որ գիտնականի իր հմայքով:

Տեղի վրայ վերադառնալով առաջ կային իրենց ժողովուրդէն իրենց զինքնէ վեր զստաց ան-
ձեր, կան եւ այսօր, պիտի ըլլան հաւանաբար նուեւ վաղը, միշտ: Ամբողջ ժողովուրդէն մը
վեր զստացելու սոսկական անհատներուն ժամանակ աչք մտայնութիւնն է, որ ծաղրանկար-
չութեան պահանջներն հեղինակներն ենթարկուած է հոս, վերջէն նայելու յաւանքութեամբ սոն-
քացող ենթական վեր բարձրացնելով այնպիսի՝ միջոցով մը, որ բարձրանալու բաղձալի պայ-
ման մը չէ ոչ ոքի համար:

Հոս այլեւս տիպարին դիմանկարային դիմերն ու գոյները այնքան ալ շահեկան չեն,
առաջին տեղը բռնած է քննութիւնը նկարագրելը, որ կը տեսնէ գիտնականի յիշողութեան մէջ, ու
կը գտնուի աւարկու տուեալ ուրիշ լրգանքներու դատաւարներուն ատեն:

Մարդանկարչական արուեստի այս նմոյշը ինքնին կը բուռն հաստատելու համար կը-
կու հիմարութիւն, նախ ա՛յն՝ որ անիկա կը հաստատէ պատկերաւոր դիմերը ընկելու Մա-
սիսին կարողութիւնը, եւ երկրորդ՝ դիմերէն ու գոյներէն անկախ, ու վեր՝ մարդկային
գիծի մը հրաժայական անհրաժեշտութիւնը:

Բոլոր անոնք, որ կը ճանչնային վերոյիշեալ տիպարին գերազանցութեան բարձրագոյնը
ցայտեցնող Մասիսի այս նկարը եւ անոր բովանդակած դիմերն օրինակով դիմեր տեսնելու
անհնարութեամբ դացին Գեղարեւոյն Ե-ՅԵ տեսող իր ցուցանանքներն՝ պատշաճօրէն վերա-
դարձան:

Վարդանկարներու ցուցանանքներ (Exhibition of caricatures) յայտարարուած էր
թերթերուն մէջ եւ յայտարարին վրայ, բայց եղանը նկարներու հանդէսի կը նմանէր աւելի,
քան ծաղրանկարներու: Մարդանկարչութեան արուեստը պայմանաւորող աւարները՝ ծաղրը,
ծիծաղը, զուարթութիւնը, օրամտութիւնը յետին մակարդակներուն ձգուած էին կար-
ծելէ ու աշխատանքը յատկացուած էր բացառապէս դիմանկարներուն նմանութեան: Երեսուցը-
շորն նկարներէն եւ ո՛չ մէկուն առիթով փոյթ եղած էր դիմա մը ընկի, նկարագրելու մը ուր-
անկարելու, զաղափար մը խոսեցնելու:

Ոչ ոք կրնայ անուշառ անդիմանալ Մասիսի ծաղրանկարային գիծեր ու գոյներ գոր-
ծելու շնորհը, զէ՛մը մը առփակցնելու, քիթ մը երկարելու, հասակ մը կարճեցնելու, մար-
մին մը զիջեցնելու եւ այլն կարողութիւնները: Ասոնք, սակայն, արուեստին արհեստի բաժինն
են, թեւեւից, եւ կը նմանին, ըսենք, քանատեղծի մը լիզու գիտնալու, յանգ կապելու, յա-
փարեւութիւն կերպրելու կարողութիւններուն, սրունքով գրի առնուածը, ամէնքս ալ դի-
մանք, յաւազոյն պարտաւորին ստանաւոր կ'ըլլայ, քանատեղծութիւն չ'ըլլար: Բանատեղ-
ծութիւնը կը ստացուի անմանութեամբ աղբրումի մը, մտածումի մը, անհիշելի մը գիտնալով, անկրկ-
նելիքին լոյսով, յայտնադրումութեամբ:

Ու հիշող յայտնադրումութեան այդ բաժինն էր, որ կը պահուէր ծաղրանկարի համար
յարգարան Մասիսի կտուներուն, կը պահուէր արուեստագէտին այն աչքը, որ մահկանացու-
ներու աչքերէն վրիպած յատկանշական մանրամասնութիւն մը կ'որոտայ եւ պատկերային հա-
մապատասխան հնարքով մը ընդհանրացումներու կը հասնի, մինչդեռ այս ցուցանանքներն
մէջ ներկայացուած մարդերը գրեթէ բոլորն ալ մնացած էին այնպէս՝ ինչպէս որ էին, ինչ-
պէս անդիմապատեղ կը ճանչնար քանոնք: Այդ սահմաններուն մէջ արուած, այսինքն՝ քիչ մը
թանձրութիւն, քիչ մը բարձրութիւն, կարճութիւն, ժպիտ կամ խոժոռութիւն սպասողորձե-
լով մեղք բերուած նմանութիւնը գեւ թաւարար երայտիք մը չէ արուեստին համար, նմա-
նութիւնը ա՛յն է ծաղրանկարչութեան արուեստին մէջ, ինչ որ փաստն է պատմափառագրի
մը համար: Գեւ սկսեւ եւ այնպէս, որտեղ վերջանում է փաստաբանագրութեան, կ'ըսէ տեղ մը
պատմական վէպերու հեղինակ ռուս գրագէտ Տիեհանովը ու անպայման հիշող կ'ըսէ: Մա-
սիս անդիմապատեղ է այս պայմանը ու շատացած է փաստով, նմանութիւններու մեղքերու
մով, փոյթ չէ ըրած փաստէն անդին անցնելու ու ստեղծագործ երեւակայութեամբ նուաճելի
երկրորդ կեանքով մը օժտել իր արկարները:

Արուեստներու կայունին մէջ գործ մը չի կրնար մակարդակի մը հասնիլ եթէ զուրկ
մնայ երկրորդ կեանքի այդ պայմանական անուններէն, եթէ չկան ընդհանրական լիզու մը,
ու չըլլայ ինքն իր մէջ խոսուի: Երբ ինքզինք նուաճելով՝ չկարենայ լուսափուած նիւթէն ան-
ջատուիլ եւ իր ուրոյն կեանքը մարբիլ, հոյանիլ իր սեփական անկախութիւնը: Այդ պարա-
դային միայն անիկա կրնայ բան ըսել մերձաւորին, հեռաւորին, անմանութիւն, միշտեւ անգամ
օտարին:

Մասիսի ծաղրանկարները զուրկ էին իրենց զինքնէ պաշտպանող ու արուեստի միջոց-
ներով պայմանաւոր երկրորդ ու անկախ կեանքի մը նպատակն: Թող փոխադրուի այդ ցու-
ցանանքներ ուրիշ քաղաք մը եւ պիտի տեսնուի իսկոյն, որ անիկա պիտի չունենայ իրենց

իրենցմով կշտացած այլ ցուցանանքներու թէկուզ հետաւոր ձեզ ժպտալը։ Անկա մեր քաղաքէն, մեր ժամանակէն, մեր մարդերէն շարժուն, խոսուն, մեայուն վկայութիւններ թանձրացնելու հիմնական հարցը անսուս ըրած է, կարծելով, որ գիծերը բաւարար են զորք մը կենդանի պահելու համար։

Նշանապատկերային ծանօթութիւններէ զազուն տարբերով կազմուած գործեր կը թուէին ինչ որ հանդիսատեսը գիտէր եւ ոչ թէ ամբողջական ծանօթութիւններէ թելադրուած մտադրացումներու ծնունդ տալովապարծութիւններ։ Նման աշխատանքները յաւակնութիւններէ հեռու կը պահեն ուրիշներ եւ զնապատկեր (dessin) կը կոչեն զանոնք։

Բայց մարդ մը պատկեր չէ, չի կրնար միայն պատկեր ըլլալ մանաւանդ հանրային ծառայութիւններու կանչուած մարդը, այլ ուժ մըն է խոսքի, գրչի, գործի, զուարթութեան զեարեկներուն վրայ, ուր շարժուն ընթացքի մը հետ կը զբոստարուին նաեւ անոր ներքին գիծերը, արժանիքները կամ թերութիւնները, երբեմն երկուքը միասին, մոլութիւններն ու մոլեռանդութիւնները, մորճոքներն ու մարմանները, արգիւսաւորելու անդրին ու յուսահատական ապարդիւնութիւնը, պատրանքներն ու պատրանքաբան ընդ կողմերը, որոնք անհրաժեշտ են գիծերուն ու գոյններուն, սնունդ են զուարթութեան, հեղինակներն, կիրքին, թափանցումին, բերեղացումին, առանց որոնց չի կրնար ըլլալ գիտ, շարժում չ'առաջանար, արուեստի գործ չի կարկառուիր։

Առարկայի դուցէ, որ մեր փնտածը չէր այս ցուցանանքին հետապնդած նպատակը, բայց արուեստէն դատ ուրիշ ի՞նչ նպատակ կրնայ անենալ ցուցանանքէն մը։

Հանելիք մ'ընդլորտ մը ստեղծելու եւ հանելիքի տաճաններուն մէջ մնալու մտադրութիւնը առհասարակ արուեստին եւ մասնաւորաբար այս արուեստին խոստը համեմատող զսկզբունքն է։ Դժբախտաբար, սակէ մեկնած է Մատիս ու ճիշդ այդ պատճառով իր արուեստին համար ընտրած անկերպան վրայ ինք չէ կրցած իջիւն, այլ թոյլ տուած է, որ անոնք իջին իր վրայ։ Ուրիշ խոսքով՝ հրապարակային կամ ընտանեկան ձեռնարկի մը տանն մարդ չ'աշխատելու մասնաւորութեամբ իր հրաւերներուն ցանկը խնդրող մարդու մը պէս վարած է հոս Մատիս եւ ոչ թէ ըսելիք ունեցող արուեստագէտի մը քաղաքացիական զաւուրթեամբ։ Ու հրաւերանքով չափազանց շատ տարւած եւ մասնաւորապէս որակով չափազանց քիչ մասնագետներ ըլլալու հանգամանքները հակառակորդական եղած են իրեն համար։ Նոյն կեցածքին հետեւանքով է դարձեալ, որ իր մաքին մէջ մուշէ գերծ չնն մնացած նոյնիսկ նախնական հասկացողութիւնները։ Յայտնի չեղաւ, որինով, որ Մատիսի կազմած ցանկին հարթային ղեմքերը առհասարակ հանրային ղեմքեր են, թէ այսօր գործող հանրային ղեմքեր, եւ յետոյ՝ հանրային ղեմք ըսուածը գործի՞ մը խորհրդանիշ անն է, թէ այսպէս կամ այնպէս թիւրի մը վրայ բազմած մարդը։ Գործի զաւուսնը, գործունը, գործի վրայ եղող անդործը, վճարովի պաշտօնական, ուրիշ ասպարէզներու մէջ զիմացային ունի շնչուած նկարագիր ունեցող աննաւորութիւնները եւ ասոր մարդի մէջ միտմանակ երկեցող ու տարտամութենէ զապառազրուած տարտամները քով քովի քերուած են այնպիսի դիւրութեամբ մը, որ մարդ չ'ոյթի կը մտանուի այս խառնարանին մէջ հաղել կարենալու համար Մատիսի ազգային ղեմքեր ընտրելու չափանիշը։

Ի հարկէ, այս մասին խոսք չէր բացուեր, եթէ մատիսի տակ ինկած անձերը ընտրուած ըլլային եւ յարգուած ըլլար արուեստ ըսուածը։ Բայց կարելի չէ անտես անել հանդամանք մը, որ ի՞նք եղած է վրիպանքին թու պատճառը։ Մատիս յայտնապէս բարոյական ճնշումի մը տակ գրած է ինքզինք՝ զնապատկերելու համար հանգամանք ու պաշտօն ունեցող գրեթէ ամէն մարդ, ո՞րն մասնութով հաւանաբար, որ այդ զպատիւնն զուրկ կացուցողը կրնայ վշտանալ ու վիրաւորուիլ։ Բայց ինչու անպայման պէտք է կարծի, որ մատիսի տակ չ'իկող անձը կրնայ այդպէս զգալ եւ, մանաւանդ՝ ինչու արուեստագէտ մը ինքզինք պատասխանատու պիտի զգայ ունի մէկուն եւ արուեստին արժանապատուութիւնը յարգելու ստիպման փոխարէն, հանգամանաւոր մը դուրս չ'եկելու նկատումներուն պիտի ենթարկէ իր գործիքը։

Բայց հասկնանք ի վերջոյ, որսուած վկայականաց բաշխման հանդէս մըն է, թէ արուեստի ցուցանանքէն մը։

Մարդոց հանգամանքները վաւերացնելու համար կատարուած է այս աշխատանքը, թէ անոնց առիթով քանի մը մասնութ պատկերացնելու անհանգստութեամբ։

Այս պատկերին զիմաց անկարելի է հորեղադրաբար չ'իջել գիրք հրատարակելու տանն ճշմարիտ արուեստագէտներուն ազրած ընտրական առաջապանքը։ Անոնք, բոլորն ալ, մաշին խոստովանէն անցուցած են, կ'անցընեն իրենց սահմանադրութիւնները, հատորներէ դուրս ձգելով արուեստով թերի մնացած բոլոր յղացումները։

Մասին, ցաւօք, ճշմարիտ Հեղինակներու սրինակով չէ կատարած իր ցուցադրած կըտուններուն ընտրութիւնը, իր բնութեան ծրագիրը, ըսինք արդէն, կողմուած է բացականերուն բացակայութեամբ արտեմապիւր ցունկնալու մասնագութեամբ, Թոյլ տալով ինքզինքին հանրութեան ներկայանալ մեծ բացակայով...

Արուեստին Հանգչի ցոյց տրուած այս անփութութեան հետեւանքով է նորէն, որ իր զէմքերը խօսուն չեն ու կը ձգեն երկինքին մէջ դիտուած կամ երկինքէն վար բերուած մարդոց տպաւորութիւնը: Դժուար է որեւէ աւերելութիւն կոսահել մեր հանրային կենցեցին ու այդ վիճակով պատկերացում զէմքերուն միջեւ: Հանգիստեալը զուր փնտռեց իրենց զործունէութեան ընթացքին մարդոց յայտնաբերած քնաւորութեան իւրայատուկ կողմերը, օրինակ, մէկուն վարադոյրին հետեւ զործնելու նախադրութիւնը, միւսին՝ երեւնալու անգիմադրելի մարմնը, իր պատասխանատուութիւնը լուծի մը պէս կըող երրորդի մը տառապանքը, պայտօնի մը վրայ բեռ մը եղող շորերդին մէջ նշանը, ժառանգութիւն մը կտակած մէկուն մը պարզութիւնը տակաւին, ժառանգապարկ միայն տանձանուած ուրիշի մը զոռոգամտութիւնը, խոսովքը՝ իր զործին մէջ գլխիվայր նետուած կոշիկեղանին, ճկունութիւնը՝ ամէն թըմբուկէ հետ պարել կըցող հարպիկին, եւայլն, եւայլն:

Եթէ մտանցումի այս եղանակով քանի մը տարի առաջ տրուած ըլլար այս ցուցանանդէսը անտարտիս ուրիշներ հաւ պիտի երհւէին պատտաւի վրայ, իսկ եթէ քանի մը տարի ետք տրուէր, կենցեցի բնական բերումով Հրապարակէն քաշուանկըրը դուրս պիտի մտային աեկասկած: Այս մտայնութիւնը ուղիղ չի համեմատիր տակաւն արուեստագէտի մը կոլումբին: Արուեստագէտ մը նման նրբամտութիւններու տուրք չի տար: Արուեստագէտը ա՛ն է, որ մինչեւ անպամ անարու զէմքի մը անմահ գիծեր հազցնելու տառապանքի մը կը մատնէ ինքզինք, ինչպէս կ'ընէ, օրինակ, զրադէտ մը, որ անծանօթ մարդէ մը տիպար մը կը կերտէ: Թիշնէք Պտանք ու չմոռնալ իր շնուարած անմահանուն Փանջունին:

Դէմք մը իր զործունէութեան հեռուներէն, խորերէն, մօտէն, ընդմէջէն դիտելու եւ անոր նկարագիրը ըստ այնմ պատկերի վերածելու փոխարէն, Մասին բաւարարուած է իւրաքանչիւրին արտաքին կերպարանքը ընդօրինակելով: Ան մատիար ձեռք առած է ոչ թէ իր տեսանկէրը անգիական աշխարհաւայելագէտի մը պատկերացնելու մղումով, այլ Հանճոյք պատահակելու միակ մղումով:

Ֆիլիփ Սուլդիզի Գեմլի զննչէն բաժնուած ու Վեմմոյ Հանդէսին Հիմը դրած Փրանսական գրականութեան երկասարդ ըմբոստեմբէն փան-Փիէր Զոյ կ'ըսէ.

«Ընթէ ինչ որ ինձի համար կը քաւի եւ ես հեղի տխրի լսեմ, քէ դուռ ով ես»:

Կենսորի մէջ զեռ հոսկնալի են ու երբեմն տանելի ուղուածը ընող մարդերը: Արուեստին մէջ՝ բնաւ:

Մարդոց Հանճոյք պատճառելու, զէչ մարդ չըլլալու, ամէնուն մարդը ըլլալու նկատումները արդիւնաւոր խորհրդատուներ չեն եղած եւ պայծառ արդիւններու չեն առաջնորդած երբեմեջ:

Արուեստագէտին ճշմարիտ խորհրդատուն իր ներքին տատանմ է, մարդերն ու կենսքը անգիական պատկերացումներով կշռելու յեղափոխական յանդիմութիւնը, բարբարոսութիւնը եւ ոչ թէ զանաւոր իրենց ուղածին պէտ, երեւցածին պէտ, երեւեալ ուղածին պէտ արտադրելու հանճարկատարութիւնը:

Մարդանկարչութեան մէջ արուեստով կատակ ընելու աղատութիւնը պայման է, բայց արուեստին հետ կատակ ընելը, կը կարծենք, ճիշդ չէ:

Պ. Ս.



«ՅԱՅՏԱՂԲԻՐՆԵՐԸ ԱՆԱՊԱՏՆԵՐՈՒ ՄԷՋ» (Տ. ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ)

Տոգթ. Տիգրան Վարժապետանի Հեղինակութամբ, ապրանք Սեանին լոյս տեսած է պատմաբաններու հասարակ շրջանում շատ շատ հաջողությամբ Մեջ, որ հիշողություն, 134 էջերով լի է, առաջ պատմական, բայց ալ, գրեթէ բոլորն ալ նուիրուած հայուն առաջնորդին, կարապետին, հոգին մըրկող, սիրտը կիզող անշունչին՝ Հայրենի Հեղինակին, Հայրենի փառքին, անարդարութեանց սրբազրուածին:

Պատմութեան ըլլալէ աւելի՝ անոնք վկայութիւններ են, վկայութիւններ՝ հայ մարդուն հոգեկան աշխարհին անբաժանելի կապակցութեան՝ Տէր-Ջորի անպատեհութեան մէջ անթաղ մնացած մեղքներուն եւ Հայաստանի յարութեան տան իրականութեան հետ:

Փոքր իրադարձութիւնները կը պատմուին պարզութեամբ, պիտի ուզէի ըսել առանց յուզականութեան (սակայն այդպէս չէ): Սրբնակ, պատահած է առ զէպը, որ հաւանաբար կարեւորութիւն չունենայ տարբերութիւններու համար, որ կրնայ միջին անգամ փոխադրել թուիլ աշխարհուն հայ երեստասարդին իսկ, որ ուշագրաւ է, երբ Երեւանի Նուբերուն գիծաց Տէր-Ջորի մէջ իր մանկութեան կրտսէր պապիկը յիշող եւ մէկ բաժակ ջուրին համար մէկ ոսկի զնաւը աւելորդ կըլտն Երեւանի Երեւանի ի լուր՝ անցորդը կ'ըսէ. «Մի գիտ տուրիստ...»

Հայը իր կարգին ու անշունչին մէջ միտ գիտ է կըլտն, եւ այդ գիտութիւններն են, որ վերջինի փոքր հարուածներով կը ներկայացնէ Տոգթ. Տ. Վարժապետան, իր պատմութեան շնորհաւորին մէջ:

Պէտք չէ կարգաւ գտնել իրենց գրականութիւն, արուեստի փնտառութիւն, այլ հարազատ ապրումի փնտառութիւն եւ այդ ապրումը կայ այդ պատմութեան մէջ, որոնք կը մնան իրենց վկայութիւն մը Սփիւռքի հայութեան յայտնաբերման արտայայտութեան:

Բ. Փ.

«ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ»

Հեղինակ՝ Նահապետ Քուշակ
Թարգմ.՝ Վահէ Կոսէլ

Փորձիկ ղեկորներ եւ զաւազակութիւններ ղեկորակցութիւնը, որ Ասիոյ, Արեւելիի եւ Արեւելեան Եւրոպայի տարբեր երկրներուն զգալի-նուիրենք թարգմանաբար նմաններ հրատարակելու նպատակ մը կը հետապնդէ, անցեալ տարի ՅԱՅՏԱՂԲԻՐՆԵՐԸ ընթերցողը գրեթէ մը լոյս ընծայեց Նահապետ Քուշակին, թարգմանութեամբ բանաստեղծ Վահէ Կոսէլին:

Գրեթէ ունի թարգմանիչին ստորագրութիւնը կրող յառաջան մը, ուր իրաւ ու գեղեցիկ մեղմ մը ներկայացուած են Հայաստանի գիրքը, պատմութիւնը, զաւազակութեան բերած նպատակ եւ մեր բանաստեղծութեան զարգացման փուլերը:

Ընդհանրացումներէն մասնաւորին անցնելով, Վահէ Կոսէլ, զարմեալ իրաւ առջերու մէջ, կենսագրան ու արժեւորան է Նահապետ Քուշակը, կանգ առնելով յոյսկապէս անոր աշխարհայեացքին, յայտնաբերուն այլապատեհութեան, արտայայտական յանգիւնութիւններուն եւ արուեստին վրայ:

Մենք խոր համարումով մը բացինք գիրքը եւ զստեղծութեամբ կարգադրեց յառաջանը, բայց մեր արտադրութիւնը նոյն չմնաց, կրք հասանք թարգմանութիւններուն: Մեր ճանչցած Քուշակին տարբեր քուշակ մը կարգադրած ըլլալու ապագայութիւնը զգացինք առջին մէկ վայրկեանէն եւ բացինք թարգմանութեան կտորներուն բնագիրները: Պարզապէս վրդովեցուցիչ էր բազմապատկան արդիւնքը: Յայտնութեան, յայտնութեան, աղաւաղութեան, կամայականութիւններ՝ յիշեալն որ կ'ուզէր թուրքոյին զատարկ խօսք է շիրակաւ քերթի մի լայնութեամբ, ուր կ'ըսուի.

«Երբ քաղաքները կ'ընկնեն իրենց արտադրութեան եւ արտադրութեան իրենց արտադրութեան»:

Իրականութիւնը թաւա ալ այդպէս չէ: Վահէ Կոսէլ յաճախ բնագիրն հետ կապ չունեցող առդեր հրաժարեցաւ է ֆրանսացի ընթերցողին:

Յաջորդով թարգմանական ջանք մը նմաններուն հետ պիտի տանք բնագիրները կողք կողքի՝ առ ի փնտրութիւն:

Պ. Ս.

ԱՆԱԿԱՆՋ ԵՍԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նաև Գառզու, կինը հռչակաւոր նրկարիչին, անցեալ տարի, «Ճումմարիոն» հրատարակչատունէն ըոյս ընծայեց 1966ին ամուսնոյն հետ Հայաստանին տըւած աջեկութեան ընթացքին գրի առած իր նոթերը՝ «Ճամբորդութիւն դէպի Հայաստան» խորագրին տակ:

Մենք այս գիրքը չենք տեսած, կարգացած ենք միայն անոր մասին գրուած շարք մը գրախօսականներ, որոնց համաձայն անիկա ընդհանրապէս Խորհրդային Միութեան եւ մասնաւորապէս Հասարակարկի առօրեան պատկերացնող բնոյթ մը ունի, որ կը սկսի ու կը գարգանայ առաւելութիւններու եւ թերութիւններու ցուցադրումով, պատմական հարստութիւններու տոթած յուզումնախառն նկարագրութիւններով ու պատմութեան նոր բովանդակութիւն տալու ընդունակ մարդերը թեւորեկ ընող ճշմտմանուն տոթով կատարուած խորհրդածութիւններով:

«Նեղիմ Գոչարը եթէ փարիզ մնար, կը դառնար մեծ արուեստագէտ: Հոս կարծես թէ գայն չեն հասկնար: Կը թուի, թէ ան շատ տառապած է»:

Կը թուի՞ թէ...

Գրախօսներէն մէկը, «Ֆիկարո» թերթի գրական բաժնին մնայուն աշխատակիցներէն Մորիս Շափրլան, միկուկէս սիւնակի վրայ իր ապաւորութիւնները արձանագրելէ ետք, անդրադառնալով գիրքին բովանդակած բուն ոգիին, կը գրէ.

«Որքան ալ կենդանի, հաճելի, արքան ալ նկարագրեց ըլլայ այս գործը, անիկա միաժամանակ ճիշդ մըն է հայկական հարցին ի նկատմամբ, որովհետեւ հոն կը զգանք հիմնական աւելանքի հոգին, ա՛յն հոգին, որուն վրայ կ'իջի Արարատ լեռը եւ որուն գաւազները ցրուած աշխարհի չորս ծագերուն՝ նշանաւոր դարձան քաղաքի մարգերու վրայ, վը-

կայ՝ Ազնաւորը, Սարգիսը, Խաչատուրեանը եւ Գառզուն: Գառզու եւ իր կինը գիտե՞մ արդեօք, թէ տարիներէ ի վեր ամերիկացի լեզուագէտները, էսփանթոյի ճախողութեան առջեւ, հայերէնը կ'առաջարկեն իրր միջազգային լեզու, ընդգծելով, որ անիկա կատարեալ, ճկուն եւ հարստ լեզու մըն է: Ես այս լուրը իմացայ կարդալով «Գեանք եւ լեզու» պարբերաբար թուլիսի թիւը, որ կը հրատարակուի «Հարուստի կողմէ եւ որուն խմբագիրն է քարեկամս՝ Ալէն Կիլերմա:


Դիտե՛ն արդեօք:

Գառզունները կ'ընեն չգիտեալ, չգիտեալու չգիտեալներ ունենալ, բայց մենք գիտե՞նք արդեօք, «Հայերէնէն ինչ շահ ըսող ու անոր կոնակ դարձնող մատակարարները գիտե՞նք, որ միջազգային դառնալու մեծ հնարաւորութիւններով օժտուած լեզու է իրենց ընծայուած մեարդաւանդ այս գանձը:

Մորիս Շափրլան իր գրախօսականի հ'աւարտէ հետեւեալ տողերով.

«Իբր յաւելուած այս գեղեցիկ ճամբորդութեան, Ժամ-Մարի Գառզու, գաւազը Գառզուններուն, ստորագրած է երկու գրութիւններ, ուր ան կորույնի կերպով կը պաշտպանէ հայերուն դատը, Ասիայ հիւսիս արեւմտեան այս լեռներուն դատը, որ աւելի ողբերգական է: Աւագ, սակայն, մեծ պետութիւններուն հասարակութիւնը ակնհայտ չափն»:

Մեծ պետութիւններուն ակնհայտ միտայտեմ եղած է, մեծ պետութիւններուն ակնհայտ... Միութարութեան առաջմ, որ գոնէ կարգ մը գրողներ ակնհայտ ունին, ինքնապէս ունին, չի՞ մը հետեւած են նաեւ այլոց պատմութեան, մշակութիւն, լեզուին եւ գիտեն անոնց արժէքին ու արժանիքներուն ի խնդիր ձայն բարձրացրեն:



Մ. ԻՇԽԱՆԻ ՅՈՒՆԵՍԿՈՒԹԻՆԸ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Կիրակի 8 Դեկտեմբեր 1974ի առաւօտուն, Իս-
նկրոյի ընդարձակ սրահը սկսած էր նեղ գալ
փութացող հասարակութեան, հակառակ տե-
ղատարափ անձրևին:

Դեղեցիկ էր երևոյթը եւ Մ. Իշխանի գը-
րական ու կրթական քառասնամեայ վաստակին
ընդմէջէն՝ սփռուցահայ գրողէտը կ'արժանա-
նար իր ժողովուրդի ամբողջական մեծարանքին:

Ներկայ էին Վեհափառ Խորէն Ա., իրա-
նանի կրթական նախարար Մանէտ Համատէ,
որբազան հայրեր, պետական երեսփոխաններ,
ազգային ժառանգներու ներկայացուցիչներ, զը-

րողներ եւ գրաւորներու ստուար բազմութիւն
մը:

Լիբանանեան քայլերդի յօտնկայս ունընդ-
րութենէն ետք, Համազգային Հայ Մշակութային
եւ Կրթական Ընկերակցութեան կեդրոնական
Վարչութեան տնօրէն՝ մեծարանքի հանդիսու-
թեան բացումը կատարեց Տորթ. Եղիկ Գոնեալ-
եան, որ հակիրճ կերպով ճշդեց Մ. Իշխանի
դերն ու տեղը իրանահայ ու սփռուցահայ
կեանքին մէջ: Իր բացման խօսքին մէջ, Կեդրո-
նական Վարչութեան ներկայացուցիչը ընդգծեց,
թէ այս հանդիսութիւնը ըլլալով Հանդերձ մե-

ծարանը մը իր կենսին ու բովանդակ կարողութիւնները հայ գրականութեան ու գործութեան ի սպաս դրած Մ. Իշխանի, է՛ նաեւ մեծարանք մը Վերա Կարապետի դասերը մեծարելով զիտեղացի անգութեամբ մեր հայ ժողովուրդին։ Մենք է՝ Ժողովուրդ մը, յարգանքի արժանի՝ եւ ամեն, երբ գիտէ մեծարել իր արժանաւոր գուակները։

Այսպէս, բեմ հրաւիրուեցան յորհեալ բանաստեղծն ու կրթական նախարար Մանէտ Համատէն, որ հանրապետութեան նախադուշին անուանով արտասանեց հակիրճ դրուատական մը, որուն ընթացքին չնչնեց ուսուցչին դերը սերունդներու դաստիարակման մէջ եւ, առ ի գնահատանք իր ժողովուրդին եւ իրենցանին հանդէպ ցուցարարութեամբ Մ. Իշխանի գրական ու դաստիարակչական թանկագին ծառայութիւններուն՝ իրանանեան պետութեան կողմէ Արժանեաց Առջեւի չքանչանով պատուեց բազմալուստակ դաստիարակը, հարաւորապէս քաղաքացին եւ իր ներքին լոյսը անսակարկ փոքր դրող Մ. Իշխանը։

Առաջին արտայայտուողը եղաւ Վահէ Վահեան, որ յորհեալին սերնդակից գրագէտներուն անունով ողբունց Սփիւռքի անցնողով, ներկայով եւ անցողով տաւայտող հայր, իր ժողովուրդի տարածափիւռ բեկորներուն զպայտեմունքն ու տառապանքները, կարօն ու հրազը «Տուններու երգը» հատորի էջերուն ընթերցեալ հարազատ շունչով գրեւորած գագնիւ բանաստեղծը։

Այսպէս՝ Գրեթոր Շահինեան Վարդը Մ. Իշխանի բերքագութեան մէջ՝ երեքին գծով, ներկայացուց Մ. Իշխան ժողովուն ներքին կիսման, նկարագրային յատկանիւնները քննարկան հերոսին ու ժամանակի հոլովոյթին հետ զուգահեռ ընթացող այդ հերոսին կրած զարգացումը։

Գր. Շահինեան յաջորդաբար ներկայացուց զպանդուխտ սիրողն ու երազողը, որ Վիմակ եւ լեւան՝ ինքզինք աշտարակն կը գրայ կեանքին։ Լաւ ամէն ինչ կը վերագրէ ծայրեմի երգիչին, վատ ամէն ինչ՝ պանդխտութեան։

Զարմանալի չէ հետեւաբար, որ երազը ըլլայ անմահիւս տարրը իր անցիկստանութեան, հասարակ յատարարը իր թոյլը ապրումներուն։

Հաստատուելէ ետք հասկնորոն նկարագրի մը ներաշխարհին արժանանդներով հայ բանաստեղծութեան ներս մուտք գործած Մ. Իշխան ժողովուն հուժէնը, իր խոսքին երկրորդ մասով՝ Գր. Շահինեան անդրադարձաւ քննարկան հերոսին վրայ կենսին զուարթ յատկութիւններուն։

Բուն հետ, ընդդէմով բանաստեղծի քննարկան հերոսին նկարագրային աշխարհումը, բայց որովհետեւ ընկերութեան ցուեբու արեւներուն մէջ տուայտող արտակէզրոն, այսինքն՝ համաժողովային հասուն նկարագրին է ան աշխատ, Վերա-դուստի լիութիւնը, Վերադարձանքն էւ շարք մը խորհրդադատ քննարկանքով իմացական ու լրտեսելու բարձրացող խաղող հողի, որ նիւթովն զանձ լուսնեղով՝ իր սիրտը մաս առ մաս րաժնեց հայ ժողովուրդին ու համայն մարդկութեան, ըլլալով ճարտիճ կոմիցիոնն ու իրագործողը։

Մ. Իշխանի բանաստեղծութեան մասին խօսելով Կարօ Փաշտեան կատարեց այն հաստատումը, թէ բանաստեղծութիւնն է յորհեալի վաստակին ամէնէն մնայուն բաժինը։

Բողոքատական մը կոտորելով փարեղահայ սերունդի եւ իրենց հայ տաղին սերունդի բանաստեղծութեանը ներկայացնող Մ. Իշխանի թերթական վաստակին մէջէն, բանաստեղծը եղաւ կացուց, թէ արեւմտահայ աւանդական բանաստեղծութեան (Վարուժան - Մեծարենց - Թէքէ-հան) ժառանգորդն է Մ. Իշխան, որ պարզու-թեմա ճոխացուց հայ բանաստեղծութիւնը, իսկ հայ լեզուն իր գրչին ներքեւ ստացաւ բերեղեղայ պատկեր, որոնցով արարեց թերթական եղբայրն ու հեղատեղ, իր պարզութեան մէջ վսեմ, ճիշդաշունչ, հորոստ, ճշգրիտ, համապատասխան իրարեւաններու եկրիմ կառոյթին։

Իր ժամացույցը իր ժողովուրդի արախէ վրայ լարած Մ. Իշխան բանաստեղծը թուեցաւ իր, ան ըսաւ՝ զան ամառ սեզանն է իր անոնը տա-նոր կուրծքին վրայ եւ անոնց սիրտերը կը բա-րախն ճոյն արագութեամբ, ճոյն հեւեղով, ճոյն կառոյթով, երբ քանաստեղծը կ'երգէ։

«Ի՛նչ կը բաւէ, Տէր Աստուած, մեր տունն ու տեղ
գարձուր մեզ,
Թշնամիս իսկ մեզ նման ուրիշի տուն չ'զգես...»

Օրումն վերջին բանաստեղծ՝ Տոքթ. Բաբգէն Փափազեան ներկայացուց Վերա կեանքը եւ Մ. Իշխանն երեքը։ Ան ծանրացաւ այն իրողութեան վրայ, որ Մ. Իշխան եւ իր անհատկանքները ծը-նունդն էին Ապրիլեան Նշանին յաջորդած մեր կեանքի պայմաններուն։ Անոնք այդ զառն կեանք-ը իմաստակցին հայկական արտաքին, որուն շնորհիւ Մ. Իշխան կրցաւ տառապանքը վերածել ստեղծագործական հոգեպրկումի։

Մ. Իշխանի արձակէն հասարակ իր մէջընկերացիներով, Տոքթ. Փափազեան որոշեց ՎՄ. Իշխան մարդը, որ արդիւնքն է այդ փոքրակայանայ ժամանակաշրջանին: Կիսմէր զինքն հարուածած է ծանրորէն և ան անգրագարօած է ու արճանագրած է տեղ մը՝ ՎՄ. Իշխանը ուժ ու ճարտարութիւն ունեցողին է: Յաղթանակները կը պատկանին դաժնակը լաւ տրոգին ու լաւ կտրողին: Գաժ՝ Վերականգնութիւն, ծանդարձութիւն և քաղաքական բառերը տեղ չունին կեանքի կռուին մէջ: Վերականգնութիւն ալ չկայ: Գաժ կ'իյնան, կամ կ'իլլան:

Վերականգնէ ետք Մ. Իշխան բանաստեղծին բարի և զեղջարանոյն սիրտը, իր վերջին հաստատուններուն մէջ Տոքթ. Փափազեան ծանրացաւ հայութեամբ զինովցող զգարելն եկող ու զարեքուն գացող ընդամենական հայրենասիրութեան զբայ նաեւ, *հարկաւորեալով*՝

ՎՄ. Իշխանը սիրտ մըն է իմէք՝ Մ. Իշխան, որուն տկամը տեսարար կը լո՛ւ հայութեան տառապանքի միջը, ո՛ր սր ալ եմքն տես...

Տոքթ. Փափազեանի խօսքն ետք, Վահագնա Հայրապետն ու բանաստեղծը միասնաբար բնակարարութեան: Խորէն Ա. Կաթողիկոս Սուրբ Մարտիկ Մաշտոցի չորստանով պատանդէ ետք յորհրտեք, կարգաց գնահատանքի յատակ խոսք մը: Յուշիչ էր պատճառ, երբ Վահագնը կ'ըսէր.

Կ'աղաչուեմք Իշխան զրազեքը, որ վեպի, քաղաքի և առօրեայ մամուլի շրջագծին մէջ, մեծնիլ յազող մեր ժողովուրդին հացի, սիրտ և

յայտի պայտարը ճկարեց՝ կեանքի խորհուրդին ընդմէջէն:

Այսպէս խօսքը տրուեցաւ Մ. Իշխանի, որ իւրաքանչիւր զուարթութեամբ մը յորդեցուց մթնոլորտը: Կեանքին զաղուած զրուակներու պատմութեամբ տն ածենայն պարզութեամբ ընդգրծեց, թէ ուրախ է զրազեանութիւնը և ուսուցչութիւնը իրեն առարկէր բնորոշ ըլլալուն համար:

Վերադառնալով, որ քառասուն տարի մնացի գրիչը ձեռքին ըստ ան, ապա շարունակեց, թէ կը մերժէ իր հոգմէ տեսնել զհոգեւթիւն, որովհետեւ կեանքի ալ մեծ մը զստահարար նոյնքան երջանկութիւն պիտի չպատահուէր իրեն:

Յորհիման հանդիսութեան ժամանակը զոյն ու բոյր տունին տաճարող Խաչիկ Արարատեանի հոգմէ մեկնարանուած Վո՛ւ՛՛, մամիկներ սեւագրեցաւ, Վո՛ւ՛՛՛՛՛՛՛ կազմող պապային և Վո՛ւ՛՛՛՛՛՛՛ մնաց զերթուածները:

Յորհիման հանդիսութեան Գործողիք Մարմինի հոգմէ՝ Յ. Գեղարզ շնորհակալութեան խոսք ուղղեց բոլոր տեսնող, որոնք ծաղկեկողմով, հեռագրով, յատուկ զերթով կամ հեղեղայնութեամբ պատանդին կրթական ու զրահան մշակը, որմէ ծագ հանդիսականները մեկնեցան սրահէն, իրենց հետ տանելով զի մը ջերմութիւն, զի մը բարութիւն, զի մը հայ հոգիի անդրդ և բաժնետէղծին հոգիին ցայտող հայրենի հոգին ու մարդկային վե՛հ ու միայնակ հարստութիւններու վերանորոգող ջերմութիւնը:



ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Մ. ԻՇԽԱՆ

ՄՆԱՍ ԲԱՐՈՎ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

(ՅՈՒՇԱՎԷՊ)

•

Ն. ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԳՐԸ

(ՎԷՊ)

•

Ա. ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

ԱՆՎԵՐՋԱԿԵՏ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՔԱՆԱՆ	40 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	20 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	4 Լ. ՈՍԿԻ

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزائجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԴԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

ԽՐԱԶԳԻՐ
 Գ. ՄՆԱԳԵԱՆ

Հեռաձայն՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
 Rue Selim Boustani
 Beyrouth -- Liban